

ՎԱՂԻՆԱԿ ՎՐԴ. ՄԵԼՈՅԵԱՆ

**ՅԻՍՈՒՍԻ ՍԷՐԸ ԿԸ ԲՈՒԺԷ  
ՎԻՐԱԻՈՐ ԱՄԷՆ ՍԻՐՏ**

(Առօրեայ ընթերցումի համար)

ՊԵՂՈՎՔ  
2011

Armenian Church Library <http://hygradaran.weebly.com>



ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԵԱՆ ՄԱՍՆԱԻՈՐ ԽՕՍՔԻ  
ԿԵԴՐՈՆԻ ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ  
ԵԿԵՂԵՑԱՍԻՐԱՑ ԵՂԲԱՅՐԱԿՑՈՒԹԵԱՆ

ԻՆՉՊԷՍ ՆԱԵԻ՛

ՀՈԳԵԻՈՐ ՔՈՅՐԻ ԼԵՆԱ ՔԷՐՕՂԼԵԱՆԻՆ

ՈՐՈՆՑ ՕԺԱՆԴԱԿՈՒԹԵԱՄԲ  
ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՅԱՆՁՆՈՒԵՑԱԻ  
ՍՈՅՆ ԳԻՐՔԸ

ՏԷՐԸ ՕՐՀՆԷ ԵԻ ԱՌԱՏԱՊԷՍ  
ՎԱՐՁԱՀԱՏՈՅՑ ԸԼԼԱՅ ԱՆՈՆՑ

Armenian Church Library <http://hygradaran.weebly.com>



### Յունուար 1

#### Եղիր մութին մէջ փայլող աստղի նման

Երբ շուրջդ մութ է, մի՛ դժգոհիր անոր համար: Յիշէ որ աստղերը մութին մէջ աւելի՛ լաւ կը փայլին: Եղի՛ր աստղի նման: Որքան շուրջդ եղող մութը գորեղ է, լոյսդ այնքան աւելի գորեղ թող նառագայթէ:

### Յունուար 2

#### Մանուկ մի՛ ըլլար հաւատփիղ մէջ

Ամբոխներու մէջ մանուկներ միշտ կը կորսուին: Ուստի, մանուկ մի՛ ըլլար հաւատփիղ մէջ, որպէսզի չկորսուիս մեղփի հետեւող ամբոխներուն մէջ: Չանող ծառը անող ծառերուն շուփին տակ կը մնայ միշտ: Դուն անո՛ղ ծառ եղիր, որպէսզի մեղփով անած «ծառեր» քեզ չկրնան իրենց շուփին տակ առնել:

### Յունուար 3

#### Չվիրաւորուելու մասին

Մի՛ խնդրեր Աստուծմէ որ հեռացնէ քեզմէ քու վերքերդ կամ քեզ վիրաւորողները, այլ խնդրէ որ օգնէ քեզի հասնելու այն հոգեւոր մակարդակին՝ որ այլեւս չվիրաւորուիս քեզի ըսուածէն կամ եղածէն:

#### Յունուար 4

### Մարդոց կեցուածքը Սատանային հանդէպ

Կան մարդիկ որոնք կ'անտեսեն Սատանային ներկայութիւնը, մարդիկ ալ կան որոնք ամէն բանի մէջ Սատանային ներկայութիւնը կը տեսնեն եւ ժխտական ամէն բան անոր կը վերագրեն: Դուն ոչ անտեսէ Սատանան եւ ո՛չ ալ ամէն բանի մէջ անոր ներկայութիւնը տես, որովհետեւ եթէ գայն անտեսես՝ իրեն համար դիւրին կը դառնայ ինչ մեղքի առաջնորդել, իսկ եթէ գայն ամէն բանի մէջ տեսնես՝ իրեն համար դիւրին կը դառնայ տիրել զգացումներուդ ու մտքիդ վրայ:

#### Յունուար 5

### Հաւատք եւ ապաշխարութիւն

Հաւատք եւ ապաշխարութիւն միեւնոյն նշմարտութեան երկու տարբեր երեսներն են, բայց անոնք տարբեր են իրարմէ: Ապաշխարութիւնը մեզ կը հեռացնէ մեղքէն, իսկ հաւատքը՝ մեզ կը մօտեցնէ Աստուծոյ (John MacArthur):

#### Յունուար 6

### Աստուծոյ հետ եղիր լաւ օրերուդ

Կեանքիդ մութ պահերուն Աստուած կողմիդ կը կանգնի եթէ դուն Իր կողմին եղած ես կեանքիդ լուսաւոր պահերուն: Դժուարին պահերուդ Տէրը կը բռնէ ձեռքէդ եթէ դուն բռնած ես Իր Ձեռքէն հանգիստ պահերուդ: Փորձութեանց ալիքներուն դիմաց Ան ինչ կը պաշտպանէ եթէ երբեք Զինք դուրս չես դրած նաւէդ խաղաղ օրերուն:

## Յունուար 7 Զանտեսենի Սուրբ Հոգին

Մեր ամբողջ ուշադրութիւնը Յիսուսի վրայ կեդրոնացնելը լաւ է, բայց ատիկա պէտք չէ պատճառ դառնայ որ անտեսենի Սուրբ Հոգին, որովհետեւ, նիշդ է որ մեր մեղքերը սրբողը Յիսուսն է, բայց մեզ սուրբ դարձնողը՝ Սուրբ Հոգին է: Մեր սիրտը մաքրողը՝ Յիսուսն է, բայց մեր սիրտը այլակերպողը՝ Սուրբ Հոգին է: Մեզ ոտքի հանողը Յիսուսն է, բայց մեզի քայլ սորվեցնողը Սուրբ Հոգին է:

## Յունուար 8 Օգտուիլ ուրիշին փորձառութենէն

Կրնաս իրատել ուրիշին որ օգտուի փորձառութենէդ, բայց չես կրնար փոխանցել անոր փորձառութիւնդ: Եթէ ինք իմաստուն է՝ ձգէ որ օգտուի փորձառութենէդ: Կեանքը կարն է: Ժամանակ չունինք ամէն ինչ փորձառաբար սորվելու. պէտք է իմաստութիւնը ունենանք ուրիշին փորձառութենէն սորվելու եւ օգտուելու:

## Յունուար 9 Փառասիրութեան վտանգը

Եթէ զԱստուած փառաբանող մէկն ես՝ չես կրնար փառասէր ըլլալ. ո՛չ ալ բարձր դիրքերու հասնիլը քեզ փառասէր կրնան դարձնել: Փառասիրութիւնը քեզ բոլոր մեծերուն, բայց մանաւանդ քու մեծ Աստուծոյդ թշնամի կը դարձնէ:

**Յունուար 10**  
**Բարկութիւնը միայն բարկացողին կը վնասէ**

Մի՛ կարծեր որ բարկութիւնը ձեռքիդ մէջ գէնք մըն է թշնամիներուդ դէմ: Բարկութիւնը գէնք մըն է այո՛, բայց գէնք մըն է որ միայն քեզի՛ դէմ կը գործածուի: Կրնաս բարկանալ թշնամիներուդ համար, բայց բարկութեամբդ դուն քեզ կը վնասես եւ ոչ թէ թշնամիներուդ:

**Յունուար 11**  
**Հալածուիլ ակնկալելու վտանգը**

Երբ յարատեւօրէն ակնկալես որ պիտի հալածուիս, հալածուելու ակնկալութիւնդ քեզ աւելի՛ պիտի տանջէ քան նոյնիմեքն հալածանքը կամ հալածիչները: Ըսէ՛ ինծի, երբ հիւանդ ըլլալու յոյսով ապրիս՝ ի վերջոյ չե՞ս հիւանդանար:

**Յունուար 12**  
**Ոեւէ դուռ մի՛ փակեր**

Ոեւէ մէկուն առջեւ դուռը մի փակեր. կրնաս յետոյ ստիպուած ըլլալ դարձեալ այդ դուռին գալու: Սուրբ Հոգին քեզ անեցնելու համար, յաճախ քեզմէ պիտի պահանջէ բանալ այն դռները զորս փակած ես, եւ բուժել այն սիրտերը զորս վիրաւորած ես:



**Յունուար 13**  
**Գործը անլի կարելոր է քան խօսքը**

Խրատ մի՛ տար, այլ օրինակ եղիր: Գործդ անլի՛ կը խօսի քան խօսքդ: Երբ կը գործես լուռ կերպով՝ անլի՛ մարդիկ կը ներշնչես, քան երբ կը խօսիս առանց գործի: Խօսքը ժամանակաւորապէս կը ներշնչէ, իսկ գործը՝ մնայուն ներշնչման աղբիւր է:

**Յունուար 14**  
**Ժպիտին գօրութիւնը**

Գիտե՞ս ինչն է այն բանը որ ձրի է բայց շատ թանկագին է, կամ այն բանը՝ որ մէկ երկվայրկեանի մէջ կու տաս ուրիշին բայց կրնայ յաւիտեան մնալ մարդուն յիշողութեան մէջ եւ կրնայ նոյնիսկ անոր կեանքը փոխել: Ատիկա խաղաղութիւն առթող ժպիտդ է: Տո՛ւր գայն առատօրէն շուրջիններուդ, որովհետեւ ատոր պակասէն է որ այսօր աշխարհ կը տառապի:

**Յունուար 15**  
**Գործել Սուրբ Հոգիին հետ**

Տքնաջան աշխատիլը կարելոր է, բայց անլի կարելոր է չմոռնալ որ մեծ իրագործումներն ու արդիւնքները մեր տարած տքնաջան աշխատանքին արդիւնքը չեն, այլ՝ Սուրբ Հոգիին հետ մեր համագործակցութեան արդիւնքը:

**Յունուար 16**  
**Խաղաղ ըլլալու մասին**

Հոգեւորը այն մարդը չէ որ խաղաղ նաւարկութիւն կ'ունենայ, այլ այն մարդը՝ որ խաղաղ սիրտ կ'ունենայ խոռվութեան պահերուն: Մեր կոչումը ծովը խաղաղեցնելը չէ, այլ՝ խոռված ծովուն վրայ մեր խաղաղութիւնը պահելը: Նմանի՞նք Տիրոջ որ իր խաղաղութիւնը չկորսնցուց երբ Իր նաւը կը ծփար փոթորկալից ալիքներուն վրայ:

**Յունուար 17**  
**Յիսուսը ունենալ**

Եթէ ունիս Յիսուս սրտիդ մէջ՝ կը նշանակէ սի'րտ ունիս: Եթէ չունիս Յիսուս՝ չունիս սիրտ: Եթէ ունիս Յիսուս՝ ամէն բան ունիս, եթէ ամէն բան ունիս բայց չունիս Յիսուս՝ բան մը չունիս: Ինչո՞ւ: Որովհետեւ Յիսուս ամէն բան է. Զայն ունեցողը՝ ամէն բան ունի:

**Յունուար 18**  
**Երկինք երթալէ առաջ՝ երկի'նքը հոս բեր**

Յիսուսը երկինքի մէջ վայելելէ առաջ նախ Զայն երկրի վրայ պէտք է վայելես: Երկինք չփոխադրուած, նախ երկինքը պէտք է քովդ փոխադրես ու գայն գետեղես սրտիդ մէջ: Աստուծոյ հետ յարաբերութիւնդ երկինքի մէջ չ'ըսկսիր, այլ կը սկսի երկրի վրայ եւ կը շարունակուի երկինքի մէջ:

**Յունուար 19**  
**Գոցուած դոներուն մի՛ նայիր**

Մեր դիմաց միշտ ալ դոներ ու պատուհաններ կրնան գոցուիլ: Եթէ մեր ուշադրութիւնը կեդրոնացնենք մեր դիմաց գոցուած դոներուն վրայ՝ անկարող պիտի ըլլանք տեսնելու մեր դիմաց բացուած նոր դոները: Բոլոր դոները մէկ անգամէն չեն գոցուիր, ահա թէ ինչու պէտք է արթուն ըլլալ, որպէսզի կարենանք միակ բաց դուռը տեսնել:

**Յունուար 20**  
**Ո՞վ է կարող մարդը**

Կարող մարդը այն մարդը չէ որ ամէն բան կ'ընէ կամ կ'ուզէ ընել, այլ այն՝ որ կ'ընէ միայն ինչ որ ի՛ր գործն է: Ինչ որ ուրիշը կարող է ընել՝ թոյլ տուր որ ընէ: Երբ ուրիշին կարողութիւնը կը տեսնես՝ կարո՞ղ մէկն ես:

**Յունուար 21**  
**Աստուծոյ զաւակը արժէք է**

Եթէ Աստուծոյ զաւակն ես՝ արժէք ես: Արժէք չի կորսուիր որքան ալ մարդիկ վարկաբեկեն անունդ, նիշդ ինչպէս ոսկին իր արժէքը չի կորսնցնէր նոյնիսկ եթէ ցեխի մէջ նետուի, կամ ոտքի կոխան ըլլայ: Եթէ մարդիկ քեզ ստորագնահատեն՝ մի՛ ազդուիր ու մի՛ հաւատար անոնց խօսքին, քանի դուն Յիսուսի արեան գինն ես, եւ ուստի, կ'արժես աւելի քան ամբողջ հրեշտակները երկինքի:

Յունուար 22  
Վստահիմն Տիրոջ

Ո՛վ Տէր, ի՞նչպէս կ'ըլլայ որ կը վստահիս մեզի, թէպէտ մենք մեր շունչին տէրն անգամ չենք, իսկ մենք շատ յանախ չենք վստահիր Քեզի, թէպէտ Դուն տէրն ես մեր շունչին եւ ամէն բանի: Դուն Տէր ես, իսկ մենք՝ ծառայ: Կ'ըլլա՞յ Տէրը ծառային վստահի իսկ ծառան Տիրոջ չվստահի:

Յունուար 23  
Բոլոր մարդիկ արժանիքներ ունին

Անպայման որ արժանիքներ ունիս: Գտի՛ր զանոնք. բայց երբ գտնես, մի՛ խօսիր անոնց մասին այնքան՝ որ անկարող դառնաս տեսնել ու գնահատել ուրիշներուն արժանիքները: Ամէն մարդ արժանիք մը ունի. ուրիշին արժանիքը տեսնելն ալ արժանիք մըն է:

Յունուար 24  
Հաւատալ առանց տեսնելու

*«Մի՛ փորձեր հասկնալ որպէսզի հաւատաս, այլ հաւատայ որպէսզի հասկնաս»* (Ս. Օգոստինոս): Շատ բան Աստուծոյ Խօսքին կամ գործին մէջ մեզի համար կրնայ անհասկնալի ըլլալ: Աստուած չ'ըսպասեր որ ամէն բան հասկնանք, բայց կը սպասէ որ գէթ հաւատանք, այո՛, հաւատանք, նոյնիսկ եթէ չենք հասկնար:

Յունուար 25  
Ծառայ ըլլալ Տիրոջ

Ծառայութեամբ չտարուինք այնքան՝ որ ժամանակ չունենանք անցնելու Տիրոջ հետ որուն կը ծառայենք: Տիրոջ համար, Իրեն հետը անցուած տաճուկ պահ մը աւելի՛ արժէք ունի, քան Իր անունով կատարուած ծառայութիւն մը: Մեր առաջնահերթ կոչումը Տիրոջ ծառաները ըլլալն է եւ ոչ թէ Տիրոջ անունով եւ Տիրոջ ծառայութիւն մատուցանելը:

Յունուար 26  
Դանդադի՛նք ու վայելե՛նք

Որքա՛ն հաւատացեալներ կան որոնք նշան մը կը խնդրեն Տիրոջմէն՝ որպէսզի հաւատան, Սիրելի՛ հաւատակիցներ, պէտք չէ մոռնանք որ առանց տեսնելու հաւատալը՝ մեծ վարձատրութեան արժանի կը դարձնէ մեզ (Յե 20.29): Եթէ նշաններ ու հրաշքներ, կամ երազներ ու տեսիլքներ տեսնելէ ետք պիտի հաւատանք՝ վստահ եղէք թէ պիտի կորսնցնենք այն վարձատրութիւնը որ Աստուած կը խոստանայ տալ անոնց՝ որոնք առանց տեսնելու կը հաւատան:

Յունուար 27  
Տիրոջ քամբան լաւագոյնն է

Մենք չենք հասկնար Տիրոջ քամբաները եւ Տէրը չ'ըսպասեր որ հասկնանք: Այո՛, Տէրը չ'ըսպասեր որ իր քամբաները հասկնանք, բայց կ'ուզէ որ մէկ բան լաւ հասկնանք՝ որ Իր քամբաները լաւագոյնն են:

**Յունուար 28**  
**Զվախնալու մասին**

Պայծառ երկինքին չես հասնիր՝ եթե սեւ ամպէն կը վախնաս: Դրախտի վարդին չես հասնիր՝ եթե կեանքի փուշէն կը վախնաս: Փրկութեան խաղաղ նաւահանգիստ չես հասնիր՝ եթե ալեկոծ ծովէն կը վախնաս: Երկինքի բարձունքները չես հասնիր՝ եթե մագլցելէ կը վախնաս:

**Յունուար 29**  
**Փոխուող աշխարհին հետ մենք ալ չփոխուինք**

Կեանքը իրեն հետ միշտ փոփոխութիւններ պիտի բերէ: Մի՛ ընդդիմանար այդ փոփոխութիւններուն, որպէսզի չդժբախտանաս: Ընդդիմութիւնը միշտ ծնունդ կու տայ բռնութեան: Քու կոչումդ, Տիրոջ կապուած մնալն է, եւ փոփոխութեանց հետ չփոխուիլն է:

**Յունուար 30**  
**Ճշմարիտ ազատութիւնը**

Ի՞նչ է ճշմարիտ ազատութիւնը: Ճշմարիտ ազատութիւնը՝ մեղքի յարձակումներէն գերծ մնալը չէ, այլ մեղքի տիրապետութեան չ'ենթարկուիլն է: Չես կրնար մեղքէն հեռանալ, բայց կրնաս մեղքի ազդեցութիւնը կոտրել: Ճշմարիտ ազատութիւնը դժոխքի կրակէն ազատիլն ալ չէ, այլ՝ Յիսուսի հետ՝ Իր արքայութեան մէջ ըլլալն է:

**Յունուար 31**  
**Պայֆա՛ր արֆայութեան համար**

Արֆայութիւնը երազողներուն համար չէ, այլ անոնց համար՝ որոնք կը պայֆարին արֆայութեան երազը իրականութեան վերածելու համար: Աշխարհ չի՛ գթար արֆայութիւն երազողներուն, բայց ան օր մը արֆայութեան համար պայֆարողներուն գթութիւնը պիտի հայցէ, ինչպէս հարուստը հայցեց Աբրահամին գթութիւնը:

**Փետրուար 1**  
**Մարդիկ իրարմէ տարբեր են**

Կրնաս մէկու մը նկարագիրը կամ բնաւորութիւնը չսիրել, բայց այդ չի նշանակեր որ գայն պէտք չէ սիրես: Մարդու մը բնաւորութիւնը չսիրելը՝ դատապարտելի չէ, բայց մարդուն չսիրելը դատապարտելի է: Մէկը որ իր նկարագիրով ֆեզմէ տարբեր է՝ չի նշանակեր որ անիկա ֆեզի թշնամի է: Մարդիկ ստեղծուած են իրարմէ տարբեր ըլլալու համար եւ ատիկա իրենց իրաւունքն է:

**Փետրուար 2**  
**Աստուծոյ եւ մարդուն նախանձը**

Աստուած նախանձոտ է (Նւ 1.2): Երբ մարդիկ նախանձին ֆեզի համար՝ կը նշանակէ թէ ֆեզ չեն սիրեր, իսկ երբ Աստուած նախանձի ֆեզի համար՝ կը նշանակէ թէ ֆեզ կը սիրէ: Մարդիկ կը նախանձին որովհետեւ ֆեզմէ լաւ ըլլալ կ'ուզեն, բայց Աստուած կը նախանձի որովհետեւ ֆո՛ւ լաւ ըլլալդ կ'ուզէ:

**Փետրուար 3**  
**Ինչո՞ւ ստեղծուած ես**

Մենք ստեղծուած ենք հրեշտակ ըլլալու, բայց նախ լաւ մա՛րդ ըլլանք: Ստեղծուած ենք երկնաբազմաբանի ըլլալու, բայց նախ լաւ երկրաբազմաբանի՝ ըլլանք: Ստեղծուած ենք Աստուծոյ համար, բայց նախ ըլլանք իրարու համար: Ստեղծուած ենք յաւիտեանական ուրախութեան համար, բայց նախ սորվինք ներկայի տառապանքները ներքին ուրախութեա՛մբ տանիլ:

**Փետրուար 4**  
**Ամէն բանի մէջ Աստուծոյ մատը տեսնել**

Կեանքի մէջ ամէն բան ինչ որ բարիքի համար կ'ըլլայ, եթէ սորվիս ամէն բանի մէջ ինչ որ բարիք տեսնել: Ոեւէ բան որուն մէջ Աստուծոյ մատը չես տեսներ՝ քեզի բարիք չի բերեր: Քեզի պատահող բարիքն անգամ քեզի բարիք չի բերեր եթէ անոր մէջ Աստուծոյ ներկայութիւնը չես տեսներ:

**Փետրուար 5**  
**Ատելութեան մասին**

Ատելութիւնը ունի բանտ, բանտարկեալ, դահիճ եւ շղթաներ: Ան որ կ'ատէ ուրիշը, իր սիրտը կը դառնայ բանտ, ինք կը դառնայ բանտարկեալը իր սրտի բանտին, իր միտքը կը դառնայ իր դահիճը, իսկ զգացումները՝ կը դառնան իր շղթաները:



**Փետրուար 6**  
**Գործով օրինակ ըլլալ**

Մարդիկ ունին աչքեր որոնցմով կը տեսնեն եւ ականջներ որոնցմով կը լսեն, բայց յիշէ որ անոնք աւելի աչքով իրենց տեսածին կը հաւատան քան ականջով իրենց լսածին, ուստի, ո՛չ թէ խօսքով այլ կեանքով օրինակ եղիր: Եթէ խօսքին չընկերանայ գործը, այդ խօսքը աւելի գայթակղութեան պատճառ կ'ըլլայ քան օրինութեան:

**Փետրուար 7**  
**Ի՞նչ է «համարակութիւն»ը**

Համարակութիւնը՝ միտքդ եկածը կամ սրտիդ ուզածը ըսելը չէ, այլ անհրաժեշտ եղածը ըսելն է եւ մի՛շտ ատենին ըսելն է: Այո՛, Աստուծոյ զակիւն կոչումը, պէտք եղածը՝ պէտք եղած ատեն ըսելն է, եւ ո՛չ թէ սրտին ուզածը ըսելը:

**Փետրուար 8**  
**Առանց Յիսուսի ապրիլը՝ արկածախնդրութիւն է**

Մէկը ըսաւ. *«Ներկայ աշխարհին մէջ Յիսուսի հետեւիլը՝ հերոսական արկածախնդրութիւն է»:* Շիտակ է այս խօսքը. բայց ես պիտի ուզեմ քայլ մը առջեւ երթալ եւ ըսել. *«Արկածախնդրութիւնը՝ ներկայ անապահով աշխարհին մէջ Յիսուսի չհետեւիլն է»:* Արդարեւ, այս անապահով աշխարհին մէջ, Յիսուսի անձին մէջ մեր ապահովութիւնը չգտնելը արկածախնդրութիւն չէ՞:

**Փետրուար 9**  
**Սիրով ու սրտով ընել ամեն ինչ**

Ոեւէ գործ որուն մէջ սիրտդ չկայ՝ պիտի չվարձատրուիս անոր համար: Ոեւէ բարիք՝ որուն մէջ սէրդ չկայ՝ հատուցում պիտի չստանաս անոր համար: Ձեռքդ գործի անցնելէ առաջ՝ սիրտդ ու սէրդ թող գործի անցնին: Յիշէ որ Աստուած նախ սիրեց՝ յետո՛յ ստեղծեց: Նախ սիրեց՝ յետո՛յ իր Որդին դրկեց:

**Փետրուար 10**  
**Յոյս տուող ժպիտներու կարիքը կայ**

Հեղինակ մը ըսած է. *«Աստուած թոչունին ուտելիք կու տայ բայց գայն իր բոյնին մէջ չի դնէր»*: Արդ, ինչպէս Աստուած թոչունին ուտելիք կու տայ բայց երբեք ուտելիքը անոր բոյնին մէջ չի դնէր, այնպէս ալ Ան իր փրկութիւնը բոլորին շնորհած է բայց մենք է որ աղօթքով ու հաւատքով գայն պէտք է ինդրեմք ու ձեռք ձգեմք:

**Փետրուար 11**  
**Զերբագատելու համար ներքին նեղութենէն**

Յաճախ մարդիկ իրենք չէ որ մեզ կը նեղացնեն, այլ՝ անոնց մասին մեր ունեցած մտածումներն ու տպաւորութիւնները: Ուրեմն, նեղութիւնը մեզմէ կը սկսի: Լուծումն ալ մեր բովն է հետեւաբար: Հեռացնեմք մեզմէ զանազան մարդոց մասին մեր մէջ գոյացած ժխտական խորհուրդները, եւ մեր նեղութիւնները պիտի փարատին:

**Փետրուար 12**  
**Դո՛ւն պիտի բանաս մամբադ**

Ինչպէս գօրեղապէս հոսող ջուրը ի՛նքն է որ կը բանայ ու կը մշդէ իր մամբան, դուն ալ, եղիբ գօրաւոր ֆրիստոնեայ եւ դո՛ւն մշդէ այն մամբան ուրկէ պիտի ֆալես, եւ աւտիկա Յիսուսի մամբան թող ըլլայ: Տկար հոսք եւ ընթացք ունեցող մարդուն առջեւ աշխարհ մամբայ չի բանար:

**Փետրուար 13**  
**Կոչումիդ մասին**

Դուն չես կոչուած բոլորին հետ մտերիմ ըլլալու, բայց կոչուած ես բոլորին հետ ֆաղաֆավար ըլլալու: Չես կոչուած բոլորին բարեկամ ըլլալու, բայց կոչուած ես ոչ ոքի թշնամի ըլլալու: Չես կոչուած բոլոր մարդիկը երկինք տանելու, բայց կոչուած ես գգոյշ ըլլալու որ ոեւէ մէկը ֆու պատնառովդ դժոխք չնետուի:

**Փետրուար 14**  
**Մի՛ վիրաւորեր, ֆանի վերքը չի մոոցուիր**

Խօսքը շուտ կը մոոցուի: Գործն ալ կրնայ մոոցուիլ: Բայց վերքը դժուար թէ մոոցուի: Ուստի, գգո՛յշ եղիբ չվիրաւորելու մարդիկը, մանաւանդ եթէ անոնք Քրիստոսի զաւակներն են, որովհետեւ անոնք օր մը իրենց վերքերը ցոյց պիտի տան Քրիստոսի, եւ Քրիստոս զանոնք պիտի վարձատրէ եւ ֆեզ պիտի պատժէ:

**Փետրուար 15**  
**Խոնարհութեան գրաւիչ գորութիւնը**

Ազնուութիւնդ կրնայ տպաւորել ուրիշը, իմաստութիւնդ՝ զարմացնել, քաջութիւնդ՝ ներշնչել, գործդ՝ օրինակ ըլլալ, պարգութիւնդ՝ կրնայ քեզ հանելի անձ մը դարձնել, խոնարհութիւնդ՝ գրաւիչ դարձնել, բայց միայն սէրդ է որ կրնայ մարդիկը Յիսուսի բերել:

**Փետրուար 16**  
**Ի՞նչն է որ քեզ մեծ մարդ կ'ընէ**

Կրնաս մեծ ծրագիրներ ունենալ, ատիկա քեզ մեծ մարդ չ'ըներ: Կրնաս մեծ իրագործումներ ունենալ, ատ ալ քեզ մեծ մարդ չ'ըներ: Կրնաս մեծ թիւով հետեւորդներ եւ ծափահարողներ ունենալ, ատ ալ տակաւին քեզ մեծ մարդ չ'ըներ: Մեծ մարդ կ'ըլլաս երբ Յիսուսի նման ծառայես տառապողին, անտեսուածին, աղքատին ու որբին:

**Փետրուար 17**  
**Աղօթողը՝ բարերար եւ յուսադրիչ**

Ձեռք կրնար բարերար անուանուիլ առանց աղօթքի, քանի աղօթողներն են որ Աստուծոյ բարիքները կը տեղացնեն մարդկութեան վրայ: Ձեռք կրնար յուսադրիչ անուանուիլ առանց աղօթքի, քանի աղօթքն է որ երկինքի դուռը կը բանայ յուսահատած հոգիներուն առջեւ:

**Փետրուար 18**  
**Տագնապիլ մարդոց փրկութեան համար**

Եթէ Փրկիչին համը առած ես, եթէ Փրկիչին սէրը քեզ լեցուցած է, եթէ մեր երկնաւոր Հօր քաղցրութիւնը իսկապէս նաշակած ես, եթէ Սուրբ Հոգին սրտիդ մէջ աղբիւրի նման կը բղիխի, քաջ գիտցիր, որ մարդոց փրկութիւնը պիտի ըլլայ միայն տագնապով, միայն աշխատանքով:

**Փետրուար 19**  
**Վիճաբանութեան վնասը**

Երբ կը վիճիս մէկու մը հետ, նախընտրելի է որ կորսնցնես վէճը, քան անձը որուն հետ կը վիճիս: Միշտ յիշէ որ աւելի կարեւոր է որ ուրիշին հանդէպ կեցուածքիդ մէջ շիտակ ըլլաս, քան ըսածիդ մէջ: Համոզումներուդ համար մի վիրաւորեր մէր որուն համար Աստուած վիրաւորուեցաւ:

**Փետրուար 20**  
**Սէրը պէտք է աղօթքի մղէ**

Ոեւէ անձ որուն կը սիրենք՝ պէտք է աղօթենք անոր փրկութեան համար, իսկ եթէ չենք աղօթեր՝ չըսենք թէ զայն կը սիրենք: Սէր մը որուն չ'ընկերանար աղօթքը՝ իրական սէր չէ: Մեծագոյն պարգեւը որ քու սիրած անձիդ կրնաս տալ՝ անոր փրկութեան համար աղօթելն է: Մայր մը կրնայ սիրել իր զաւակը առանց աղօթելու անոր փրկութեան համար. նման սէր՝ ժամանակաւոր սէր է, զգացական սէր է, երբեք Աստուծոյ կամփին համաձայն եղող սէր մը չէ:

### Փետրուար 21

#### Աղֆատին ժամանակ ու սէր տալու մասին

Աղֆատներն ու տնագուրկերը դրամէ աւելի՝ զիրենք սիրող ու հասկցող սրտի պէտք ունին: Ուստի, գրպանդ բանալէ առաջ՝ սիրող բաց լսելու: Դրամ տալէ առաջ՝ ժամանակ տուր սիրելու եւ գուրգուրալու: Եթէ դրամ տաս առանց սէր ու ժամանակ տալու, կը նշանակէ թէ տակաւին չես հասկցած թէ ի՛նչ է աղֆատասիրութիւնը:

### Փետրուար 22

#### Սիրել կոշտ մարդը

Հոգեբաններ կը հաստատեն թէ կոշտ մարդիկ՝ կոշտ եղած են որովհետեւ չեն ունեցած զիրենք սիրող անհատներ եւ չեն վայելած մարդոց գուրգուրոտ վերաբերմունքը: Հետեւաբար, սիրոյ պակասն է որ մարդիկը կոշտ ու կոպիտ կը դարձնէ: Դուն սիրէ՛ կոպիտ մարդիկը, որպէսզի առիթ տուած ըլլաս իրենց կակուղնալու:

### Փետրուար 23

#### Յիսուսի սէրն է որ կը բուժէ

Մարդիկ համոզուած են որ սրտի մը վերքերը կը բուժուին ժամանակի ընթացքին: Ես չեմ համոզուած ասոր: Ես համոզուած եմ որ ժամանակը չէ որ կը բուժէ, այլ՝ սէրը, եւ այդ սէրը Յիսուսի սէրն է: Թող վիրաւոր ամէն սիրտ Յիսուսի գայ. Յիսուս գայն կը բուժէ:

**Փետրուար 24**  
**Դո՛ւն ես վերաբերմունքիդ տերը**

Դուն չես որոշողը թե՛ ի՛նչ պայմաններ քեզ պիտի շրջապատեն, բայց դո՛ւն ես որոշողը թե՛ ի՛նչպես պիտի վերաբերիս քեզի ներկայացող պայմաններուն դիմաց: Դուն չես կրնար հակակշռի տակ առնել մարդոց վերաբերմունքը քեզի հանդէպ, բայց քու վերաբերմունքդ մարդոց հանդէպ հակակշռի տակ առնելը քու ձեռքդ է:

**Փետրուար 25**  
**Յիսուսի աշխարհ գալուստն նպատակը**

Սատանան պահանջեց Յիսուսէն որ քարը հացի վերածէ, բայց Յիսուս չըրաւ Սատանային ուզածը, որովհետեւ ինք աշխարհ չէր եկած որպէսզի նիւթական քարերը հացի վերածէ, այլ եկած էր՝ որպէսզի քարեղէն սիրտերը մսեղէն սիրտերու վերածէ՝ փշրելով գանձնի իր խաչին նշանովը եւ Սուրբ Հոգիին միջոցաւ (Եզ 36.26):

**Փետրուար 26**  
**Մարդոց զգացումները յարգելու մասին**

Միշտ չես կրնար մարդոց հետ խօսած ատենդ տրամաբանութիւնդ գործածել, քանի մարդիկ սովորաբար իրենց տրամաբանութիւնը չէ որ կը գործածեն, այլ իրենց զգացումներն ու փորձառութիւնները, զորս պէտք է յարգես: Բայց զգոյշ, այդ յարգանքը քեզ նշմարտութեան ուրացումին չառաջնորդէ:

**Փետրուար 27**  
**Ամենէն կարեւոր բաները**

Կեանքի ամենէն կարեւոր բաներն են.– 1) Ընդունիլ Յիսուսը մեր սրտին մէջ: 2) Սիրել Յիսուսը մեր ամբողջ սրտով: 3) Հնազանդիլ Յիսուսի մեր ամբողջ սրտով: 4) Եւ ուրիշները Յիսուսի բերել: Ան որ այս բաները չ'ըներ, կը նշանակէ թէ չ'ապրիր այն նպատակին համար որուն համար Աստուած զինք ստեղծած է, եւ աւելին, կը նշանակէ թէ բնաւ չ'ապրիր:

**Փետրուար 28**  
**Քրիստոսի նմանելու ընթացքը**

Սուրբ Հոգին կը յայտնէ մեզի մեր մեղաւորութիւնը եւ կը համոզէ մեզ որ պէտք է ունինք փրկութեան: Անգամ որ համոզուինք, Ան մեզ կ'առաջնորդէ Քրիստոսի, եւ Քրիստոս մեր մեղքերը կը սրբէ ու ապա մեզ կ'առաջնորդէ մեր երկնաւոր Հօր: Մեր Հայրը կ'որդեգրէ մեզ եւ ապա դարձեալ կը յանձնէ Սուրբ Հոգիին, որ այս անգամ կը սկսի մեր մէջ կերտել Տէր Յիսուս Քրիստոսի նմանութիւնը:

**Մարտ 1**  
**Աստուծոյ անձին մասին**

Տէր Դուն մեծ ես՝ ո՛չ թէ որովհետեւ չես անարգեր, այլ որովհետեւ անարգուածը կ'ընտրես: Ողորմած ես՝ ո՛չ թէ որովհետեւ կու տաս, այլ որովհետեւ առատօրէն կու տաս: Ներող ես՝ ո՛չ թէ որովհետեւ կը ներես, այլ որովհետեւ միշտ ու առանց պայմանի կը ներես:



**Մարտ 2**  
**Ծնողքի մը գուրգուրանքը չի մոռցուիր**

Ծնողներուն կոչումը միայն պատուէրներ ու խրատներ տալը չէ, այլ՝ սէր ու գուրգուրանք: Ժամանակի ընթացքին տրուած պատուէրներն ու խրատները կրնան մոռցուիլ, բայց սէրն ու գուրգուրանքը չեն մոռցուիր: Տա՛նք մեր գաւակներուն այն ինչ որ չի մոռցուիր:

**Մարտ 3**  
**Մեր կոչումը՝ սիրելն է**

Սիրելը՝ մեր կոչումն է ուրիշին հանդէպ, իսկ սիրուիլը՝ ուրիշին կոչումն է մեզի հանդէպ: Մենք տէր կենանք մեր կոչումին եւ անհանգիստ չըլլանք եթէ երբեք ուրիշներ տէր չեն կենար իրենց կոչումին: Մենք չենք կրնար ստիպել մարդիկը որ մեզ սիրեն, բայց մեր վերաբերմունքով կրնանք ստիպել գանոնք որ մեզ յարգեն:

**Մարտ 4**  
**Մի՛ վախնար փորձելու**

Աւելի լաւ է փորձել ու չյաջողիլ քան բնաւ չփորձել: Եթէ փորձենք՝ կարելիութիւն կայ որ յաջողինք, իսկ եթէ չփորձենք՝ յաջողութեան ո՛չ մէկ կարելիութիւն կայ: Աստուած հաւատքի ցամբուն վրայ վերք ստացողին պիտի չդատապարտէ, այլ անոր՝ որ վերքէն վախնալով չի փորձեր քալել հաւատքի ցամբէն:

## Մարտ 5 Յիսուսի ծառան

Յիսուսի ծառան պետք է ֆաղցր, ազնիւ, խոնարհ եւ ժպտադէմ ըլլայ, որպէսզի կարենայ մարդիկը Աստուծոյ պաշտամունքին առաջնորդել, բայց պետք չէ ըլլայ այնպիսին՝ որ մարդիկը առաջնորդէ իր անձի պաշտամունքին:

## Մարտ 6 Եթէ յաղթես...

Եթէ յաղթես ֆու «ես»իդ՝ յաղթած կ'ըլլաս բոլոր տկարութիւններուդ: Եթէ յաղթես դրամասիրութեան՝ յաղթած կ'ըլլաս բոլոր մեղքերուդ: Եթէ յաղթես լեզուիդ՝ յաղթած կ'ըլլաս Սատանային եւ իր չար հրեշտակներուն: Եթէ յաղթես աչքերուդ ցանկութեան՝ յաղթած կ'ըլլաս դժոխքին:

## Մարտ 7 Քարոզիչին մասին

Աստուծոյ խօսքին ֆարոզիչը մարդոց պետք չէ խօսի ինչ որ անոնք կը սիրեն լսել, այլ՝ ինչ որ անհրաժեշտ է անոնց համար լսել: Այլ խօսքով, մարդիկը հաճոյացնող բաներու մասին չէ որ պետք է խօսի, այլ՝ անոնց օգտակար եղածը (Բ.Տմ 4.3): Քարոզիչներ չխրտչեցնելու համար մարդիկը, պետք չէ մեղքը գեղեցիկ գոյներով ներկայացնեն: Յիսուս այդպիսի բան չըրաւ. մենք ալ պետք չէ ընենք:

**Մարտ 8**  
**Աստուծոյ գաւակը պէտք չէ տգէտ ըլլայ**

Աստուած չ'ուզեր որ իր գաւակները գիտութեամբ լի այս աշխարհին մէջ տգէտ ըլլան: Տգիտութիւնը Աստուծոյ փառք չի բերեր, ո՛չ ալ մարդիկը Աստուծոյ փառաբանութեան կ'առաջնորդէ: Աստուած գիտութեան Աստուածն է, եւ կ'ուզէ որ իր գաւակները պէտք եղած գիտութիւնը ունենան կարենալ առաջնորդելու համար մարդիկը Քրիստոսի եւ կարենալ պաշտպանելու համար իրենց հաւատքը:

**Մարտ 9**  
**Հոգեւոր կեանքը սանդուխի նման է**

Հոգեւոր կեանքը կը նմանի սանդուխի մը որուն ամէն մէկ աստիճանին վրայ կայ մեղք մը որուն պէտք է յաղթել՝ բարձրանալու համար: Նոյն աստիճանին վրայ պիտի մնանք մինչեւ որ յաղթենք հոն գտնուող մեղքին: Ահա թէ ինչո՛ւ հոգեւոր կեանքը կոչուած է «անման ընթացք»:

**Մարտ 10**  
**Պայքարին գեղեցկութիւնը**

Ինչո՞ւ կը փախչիս պայքարէն: Պայքարը չէ՞ որ քեզ Յիսուսի գինուորը կը դարձնէ: Պայքարի մէջ չէ՞ որ Յիսուսի գորակցութիւնը կը վայելես: Պայքարը չէ՞ որ յաղթող անունը քեզի կը շնորհէ: Պայքարը չէ՞ ապացոյցը որ դուն կը սիրես Յիսուսը: Պայքարը չէ՞ որ ցոյց կու տայ թէ դուն լուրջ ու վնոակամ ես երկինքի վերաբերեալ:

## Մարտ 11

### Մէկ բան գիտնալ մեր ապագային մասին

Սիրելի՛ ընթերցող, եթէ հաւատացեալ ես, ապագայիդ մասին որոշ բաներ գիտնալու համար դուն քեզ մի՛ տանջեր: Ներկան Աստուծոյ պարգեւն է: Վայելէ այդ պարգեւը: Միայն մէկ բան կայ զոր պէտք է գիտնաս ապագայիդ մասին, այն՝ որ ամբողջ յաւիտեանականութեան ընթացքին, սիրով լեցուն Աստուծոյ ասփերուն մէջ պիտի ըլլաս: Ուրիշ բան պէտք չունիս գիտնալու ապագայիդ մասին:

## Մարտ 12

### Յարատեւութեան գորութիւնը

Յարատեւութիւնը փուլ կը բերէ ատելութեան ամէն պատնէշ ու կը կառուցէ սիրոյ պատնէշը: Յարատեւութիւնը հեռո՛ւ կը վանէ ամէն ձախողութիւն եւ մեզ կ'առաջնորդէ ամէն տեսակ յաջողութեան: Յարատեւութեան դիմաց Սատանային անէծքը կը նահանջէ եւ Աստուծոյ օրհնութեան դռները կը բացուին:

## Մարտ 13

### Աղօթեմք որ Տէրը հետաքրքրութիւն արթնցնէ

Մէկը որ հետաքրքրութիւն չունի Յիսուսի հանդէպ՝ մի՛ աղօթեր անոր փրկութեան համար, այլ նախ աղօթէ որ Տէրը հետաքրքրութիւն արթնցնէ անոր մէջ Իրեն հանդէպ: Փրկութեան փափաք չունեցողին՝ փրկութիւն պէտք չէ, այլ՝ փրկութեան փափաք: Այս փափաքին է որ փրկութիւնը կը յաջորդէ:

**Մարտ 14**  
**Որո՞ւ ծրագիրը կ'ուզես յաջողի**

Կամենաս թէ ոչ, ընդունիս թէ մերժես, երեք տարբեր ծրագիրներ կան կեանքիդ մէջ.– Կայ քու ծրագիրդ, կայ Սատանային ծրագիրը, եւ կայ Աստուծոյ ծրագիրը: Այս երեքէն որո՞ւ ծրագիրը կը փափաքիս որ յաջողի կեանքիդ մէջ: Ես պիտի փափաքեի որ յաջողի ծրագիրը Անոր՝ որ իր կեանքը գոհեց ինձի համար եւ որ ամենէն շատ գիտէ թէ ինչ բանի պէտք ունիմ:

**Մարտ 15**  
**Ի՞նչ գիտնալ թշնամիիդ մասին**

Եթէ գիտնայիր թշնամիներուդ վերջին մասին՝ ալ բնաւ զանոնք թշնամի պիտի չնկատէիր, այլ զանոնք աղօթքիդ նիւթը պիտի դարձնէիր: Եթէ զինք սաստիկ կերպով տանջող բան մը չըլլար՝ ան քեզի թշնամի պիտի չդառնար: Թշնամիդ վիրաւոր մարդ է, Չարին կողմէ խոցոտուած մարդ է: Գթա՛ իրեն եւ աղօթքովդ իր օգնութեան հասիր:

**Մարտ 16**  
**Մի՞շտ ֆրիստոնեայ ես , թէ՛ երբեմն**

Գիտեմ կը սիրես, բայց բոլորի՞ն կը սիրես: Գիտեմ կը ներես, բայց բոլորի՞ն կը ներես ու մի՞շտ կը ներես: Գիտեմ կ'աղօթես, բայց յարատե՞ւ կ'աղօթես ու առանց ձանձրանալո՞ւ կ'աղօթես: Գիտեմ կը համբերես, բայց ամէ՞ն ատեն ու ամէ՞ն ինչի կը համբերես:

Մարտ 17  
Որո՞ւ համար կ'ապրիս ժամերդ

Այն ժամերը որ ապրած ես դուն քու անձիդ համար՝  
այն ժամերը քու սեփականութիւնդ կը նկատուին, եւ  
անոնց փոխարէն ստանալիք վարձատրութիւն չունիս,  
մինչդեռ այն ժամերը որ ապրած ես ուրիշներուն համար՝  
անոնք Աստուծոյ սեփականութիւնը կը նկատուին, եւ  
Աստուած Ի՛նք անոնց փոխարէն քեզի պիտի հատուցանէ:

Մարտ 18  
Տիրոջ մահուամբ բացուած երեք դռները

Տէր Յիսուս Քրիստոս Իր մահուամբ երեք դռներ բա-  
ցաւ.- Մեր սրտին դուռը, դրախտին դուռը եւ Աստուծոյ  
արքայութեան դուռը: Ոեւէ մարդ որ իր սրտին դուռը կը  
բանայ Յիսուսի դիմաց, իր մահէն ետք՝ դրախտին դուռն է  
որ պիտի բացուի իր առջեւ, իսկ Տիրոջ երկրորդ գալուս-  
տէն ետք՝ արքայութեան դուռը: Եթէ առաջին դուռը  
չբացուի, երկրորդ եւ երրորդ դռները չեն կրնար բացուիլ:

Մարտ 19  
Մահէդ յետոյ ցառագայթելու համար...

Երկինք փոխադրուելէ յետոյ՝ Աստուծոյ լոյսն ու  
փառքը պիտի ցառագայթես, բայց ատիկա ընելու համար,  
երկրի վրայ եղած ժամանակդ ընդունած պէտք է ըլլաս  
Աստուծոյ լոյսն ու փառքը քու անձիդ մէջ: Ինչ որ մահէդ  
առաջ մէջդ կ'առնես՝ մահէդ յետոյ գայն կը ցառագայթես:

**Մարտ 20**  
**Աստուած քեզ է որ փոխել կ'ուզէ**

Երբ չսիրենք մեզ շրջապատող կացութիւնը, Աստուծո՛ւմ է կը պահանջենք որ փոխէ զանիկա, եւ կը մոռնանք, որ Աստուծոյ գործը մարդիկը փոխելն է եւ ոչ թէ անոնց կացութիւնը փոխելը: Այո՛, սիրելիս, Աստուած քեզ է որ կ'ուզէ փոխել եւ ո՛չ թէ քեզ շրջապատող պայմաններն ու կացութիւնը: Երբ դուն Սուրբ Հոգիով փոխուիս՝ քեզ շրջապատող ամէն բան փոխուած կը գգաս:

**Մարտ 21**  
**Թերահաւատն ու անաստուածը**

Թերահաւատութիւնը աւելի՛ մեծ մեղք է քան անաստուածութիւնը, որովհետեւ թերահաւատը կը հաւատայ ամենակարող Աստուծոյ գոյութեան բայց կասկած ունի հաւատքին մէջ, մինչդեռ անաստուածը կասկած չունի, քանի չի հաւատար որ Աստուած կայ, ուստի, զգո՛յշ ըլլանք թերահաւատ ըլլալէ:

**Մարտ 22**  
**Ապաշխարել եւ հասուննալ**

Վտանգաւոր բան է ապաշխարելէ ետք՝ չհասուննալ մեր հաւատքի կեանքին մէջ, որովհետեւ եթէ ապաշխարենք բայց չհասուննանք՝ չենք կրնար ըլլալ այն մարդիկը՝ որ Աստուած կ'ուզէ որ ըլլանք: Եւ Աստուած ինչպիսի՞ մարդիկ կ'ուզէ որ ըլլանք: Ան կ'ուզէ որ սո՛ւրբ մարդիկ ըլլանք: Հետեւաբար, իսկական ապաշխարութիւնը մեզ սրբութեան է որ պէտք է առաջնորդէ:

### Մարտ 23 Առափինի մարդը

Երբ թշնամիներ մեզ կը հալածեն եւ մենք կը լռենք, ատիկա չի նշանակեր որ առափինի ու վեհանձն ենք: Առափինի ու վեհանձն կը սեպուիմք միայն այն ատեն՝ երբ առիթը կը ներկայանայ խորտակելու մեր թշնամիները, բայց անոր փոխարէն, մենք կը նախընտրենք ներել ու փաշալերել զանոնք:

### Մարտ 24 Ուրախութեամբ տալու մասին

Ինչպէս ուրախութեամբ կ'առնես, ուրախութեամբ ալ կրնա՞ս տալ: Ինչպէս ձեռքդ լայն կը բանաս առած ատենդ, տուած ատենդ ալ լայն կը բանա՞ս: Ինչպէս կ'ուզես առատութեամբ ստանալ, առատութեամբ ալ կ'ուզե՞ս տալ: *«Ինչ որ կ'ուզէ՛ք որ մարդիկ ընեն ձեզի, նոյնը ըրէ՛ք դուք անոնց»* (Մտ 7.12):

### Մարտ 25 Զօրաւոր եւ տկար զգալու մասին

Զօրաւոր զգալը աւելի՛ վտանգաւոր է քան տկար զգալը, որովհետեւ զօրաւոր զգալը կրնայ մեզ յանձնապաստան դարձնել եւ հեռացնել Աստուծմէ: Ուստի, եթէ տկարութիւններ ունիս, անոնք քեզ թող չմտահոգեն ու չհեռացնեն Աստուծմէ, այլ՝ առիթ դառնան որ աւելի՛ մօտենաս ու կառչիս Աստուծոյ: Զօրաւոր զգալը կրնայ քեզ հպարտութեան տանիլ, իսկ տկար զգալը՝ յուսահատութեան: Ուստի, երկու զգացումներէն ալ փախչիր:



**Մարտ 26**  
**Աղօթքը՝ սիրոյ, հաւատքի**  
**եւ վստահութեան նշան**

Երբ ամէն ինչ խաղաղ է եւ կ'աղօթենք՝ ատիկա Աստուծոյ հանդէպ սիրոյ՝ արտայայտութիւն է: Երբ ամէն ինչ մթին է եւ կ'աղօթենք՝ ատիկա հաւատքի արտայայտութիւն է: Իսկ երբ ծանր փորձանքէ կ'անցնինք եւ կ'աղօթենք՝ ատիկա վստահութեան արտայայտութիւն է:

**Մարտ 27**  
**Փորձութեանց յաղթելով է որ կ'անինք**

Աստուած մեզ սովորաբար փորձութենէն դուրս չի բերեր, այլ գօրութիւն կու տայ յաղթելու փորձութեան, որովհետեւ փորձութեանց յաղթելով է որ կ'անինք, կ'ամրանանք եւ Յիսուսի քաջ զինուորները կը դառնանք: Ուստի, մի՛ խնդրեր Աստուծմէ որ հեռացնէ քեզմէ փորձութիւնները, այլ խնդրէ որ քեզ յաղթող դարձնէ անոնց դէմ:

**Մարտ 28**  
**Փորձառութեան արժէքը**

Կրնաս դառն փորձառութիւններ ունեցած ըլլալ: Մի՛ նեղուիր անոնց համար: Յիշէ որ դառն ու ծանր փորձառութիւններն են որ քեզ իմաստուն, տոկուն եւ ուրիշին օգտակար մարդ կը դարձնեն: Փորձառութեամբ սորվածդ բնաւ չես մոռնար, եւ երբ ուզես փորձառութենէդ մղուած խրատական մը տալ ուրիշին՝ անմիջապէս ընդունելութիւն պիտի գտնես եւ օգտակար պիտի դառնաս:

Մարտ 29  
(ա) Չենֆ կրնար...

Չենֆ կրնար մեր սիրտերը Աստուծոյ տալ՝ եթէ մեր մարմինները մեզի համար պահած ենք: Չենֆ կրնար հրաժարիլ մեղքէն՝ եթէ չենֆ հրաժարած մեղքի սէրէն: Չենֆ կրնար հրաժարիլ մեղքի սէրէն՝ եթէ չենֆ ընդունած Տէր Յիսուսի սէրը մեր սրտին մէջ: Չենֆ կրնար չվախնալ մահէն՝ եթէ չենֆ վախնար Աստուծմէ:

Մարտ 30  
Աղբատները մեր փառքն են

Կ'ուզե՞ս գոհունակ սիրտ ունենալ՝ օգնէ՛ աղբատներուն: Կ'ուզե՞ս ուրախ սիրտ ունենալ՝ տո՛ւր աղբատներուն: Կ'ուզե՞ս մեծ սիրտ ունենալ՝ աղօթէ՛ աղբատներուն համար: Կ'ուզե՞ս երկինքի մէջ տեղ ունենալ՝ ժամանակ անցուր աղբատներուն հետ: Կ'ուզե՞ս Յիսուսի նմանիլ՝ սիրէ՛ աղբատները:

Մարտ 31  
Հսկէ երկվայրկեաններուդ վրայ

Կրնաս մարդը բարեկամի վերածել մէկ վայրկեանի մէջ: Բարեկամը մտերիմի՛ մէկ օրուայ մէջ: Մտերիմը եղբոր՝ մէկ ամսուայ մէջ: Եղբայրը թշնամիի՛ մէկ երկվայրկեանի մէջ: Ուստի, զգո՛յ՛ջ եղիր թէ ի՛նչպէս կ'անցնես երկվայրկեաններդ:

### Ապրիլ 1 Մտածենք մեզի տրուելիք փառքին մասին

Մի՛ մտածեր կրած չարչարանքներուդ մասին որպէս-  
զի չյուսահատիս, այլ՝ մտածէ չարչարանքներուդ արդիւն-  
քը ըլլալիք երկնային փառքին մասին, որպէսզի յոյսը քեզ  
պատէ: Սատանան կը փորձէ մեզի միշտ յիշեցնել մեր կրած  
տառապանքը եւ մոռցնել տալ այն փառքն ու պատիւը որ  
պիտի ստանանք մեր կրած տառապանքին փոխարէն:

### Ապրիլ 2 Զգուելի բան է մեղքը, ատե՛նք զայն

Գարշելի մեղք մը կրնայ տարիներու ընթացքին  
Յիսուսի հետ ձեռք ձգած մտերմութիւնդ հսկայ փայլերով  
ետ տանիլ: Հետեւաբար, զգո՛յշ եղիր մեղքէն: Ատե՛՛ զայն:  
Եթէ կարենաս ատել մեղքը՝ դիւրին կ'ըլլայ անոր  
դիմադրելը: Յիշէ որ Աստուծոյ հայեացքով մեղք գործելը  
չէ որ դատապարտելի է, այլ՝ մեղքը սիրելը:

### Ապրիլ 3 Սիրել ու պատուել աղօթողները

Քեզի համար աշխարհի ամենէն կարեւոր մարդը՝  
փրկութեանդ համար աղօթող մարդը պէտք է ըլլայ, քանի  
փրկութենէդ աւելի կարեւոր բան չկայ քեզի համար:  
Աշխարհի մարդիկ կը պատուեն իրենց հարազատներն ու  
բարեկամները, բայց դուն, իբրեւ Աստուծոյ զաւակ, սիրէ՛  
ու պատուէ՛ աղօթող մարդիկը, քանի անոնք բարեբարներն  
են մարդկային սերունդին եւ առանց անոնց քառսի կը  
վերածուի մարդկութեան կեանքը:

#### Ապրիլ 4 Ատելութիւնը թոյն է

Երբ կ'ատես նմանդ՝ դուն քեզ աւելի՛ կը վնասես քան այն անձին որուն կ'ատես: Ինչո՞ւ: Որովհետեւ ատելութիւնը թոյն մըն է որ դո՛ւն կը խմես եւ ո՛չ թէ այն անձը որուն կ'ատես: Ով որ կ'ատէ՝ ի՛ր մէջն է թոյնը: Նոյնն է պարագան նախանձին, ոխակալութեան եւ այլ մեղքերու:

#### Ապրիլ 5 Գոհունակ սիրտը

Գոհունակ մարդիկը այն մարդիկը չեն որ շատ դրամ ունին եւ իրենց դրամով իրենց ուզածը կ'առնեն կամ կ'ընեն, այլ այն մարդիկն են՝ որոնք քիչ դրամ ունին եւ սակայն իրենց քիչով գոհ են: Լեցուն գրպանը չէ որ գոհունակ մարդու կը վերածէ մեզ, այլ՝ լեցուն սիրտը: Սիրտ մը որ լեցուն է Յիսուսի խաղաղութեամբ՝ միշտ գոհունակ է:

#### Ապրիլ 6 Պայքարի՞լ, թէ՛ յանձնուիլ Աստուծոյ

Աստուած կ'ուրախանայ երբ կը տեսնէ որ կը պայքարինք մեղքին դէմ, բայց կը փառաւորուի երբ կը տեսնէ որ վստահութեամբ կը յանձնուինք Իրեն, որովհետեւ պայքարիլը՝ կրնայ մեր անձերուն վստահիլ ենթադրել, մինչդեռ յանձնուիլը՝ Աստուծոյ վստահիլ է: Ինքնավստահ ըլլալը լաւ բան է, բայց ինքնավստահութիւնը առանց Աստուծոյ՝ գոռոզութիւն է:

Ապրիլ 7  
Ամէն ինչ՝ Յիսուսով

Փոթորիկի դադարումը չէ որ քեզի խաղաղութիւն պիտի բերէ: Դրամը չէ որ քեզի ապահովութիւն պիտի տայ: Փափաքածդ ունենալը չէ որ քեզի ուրախութիւն պիտի շնորհէ: Այս բոլորը Յիսուս Ինք քեզի պիտի տայ երբ դուն քեզ ամբողջապէս Իրեն յանձնես:

Ապրիլ 8  
Թոյլ տուր որ Յիսուս ընտրէ կեանքիդ ցամաքը

Դո՞ւն ես որ կ'ընտրես կեանքիդ ցամաքը, թէ Յիսուս ինքն է որ կ'ընտրէ կեանքիդ ցամաքը: Եթէ դուն ես որ կ'ընտրես կեանքիդ ցամաքը՝ կը նշանակէ թէ կեանքն է տէրդ, իսկ եթէ Յիսուս Ինքն է որ կ'ընտրէ կեանքիդ ցամաքը, կը նշանակէ թէ Յիսուս Ինքն է Տէրդ, իսկ կեանքը՝ քու ծառայ:

Ապրիլ 9  
Հաւատացեալը մեծ հարցը՝ փոքր կը սեպէ

Ճշմարիտ հաւատացեալները մեծ հարցերը ոչինչ կը սեպեն, իսկ անհաւատները, ոչինչ նկատուած հարցերը՝ հարցի՛ կը վերածեն: Ահա թէ ինչու երբ ոչմարիտ հաւատացեալներ ըլլանք՝ շատ մը հարցեր կը լուծուին:

**Ապրիլ 10**  
**Սխալիլը մարդուն իրաւունքն է**

Առանց սխալելու մարդ չի կրնար շիտակը սորվիլ, եւ առանց շիտակը սորվելու մարդ չի կրնար շիտակը կատարել, եւ առանց շիտակը կատարելու մարդ չի կրնար մեծնալ ու հասուննալ, հետեւաբար, երբ տեսնեմք որ մարդիկ կը սխալին՝ յիշեմք որ ատիկա իրենց մարդկային իրաւունքն է որ կրնայ գիրենք հասունացման առաջնորդել, եւ ուստի, պէտք է ներողամտութեամբ մօտենալ անոնց:

**Ապրիլ 11**  
**Մի՛ վիճաբանի՛ք նշմարտութեան համար**

Ճշմարտութիւնը վէճ չ'ուզեր, ո՛չ ալ վիճաբանութիւն, այլ՝ յարգանք ու սէր: Որքան վիճիմք նշմարտութեան համար՝ նշմարտութիւնը այնքան աւելի կը ծածկուի մեր մտքի աչքերէն: Ճշմարտութեան համար վիճիլը երբեք մեզ նշմարտութեան յայտնաբերումին չ'առաջնորդեր. նշմարտութեան համար աղօթելն է որ մեզ նշմարտութեան կ'առաջնորդէ:

**Ապրիլ 12**  
**Աշակերտի մասին**

Սիրելի՛ աշակերտ, երբ որոշ իմաստութիւն մը եւ գիտութիւն մը ձեռք գտես, չըլլայ որ հպարտանաս եւ քամահրանքով մօտենաս ուսուցիչիդ: Մի՛ մոռնար որ ծառին ցիւղը թէպէտ կոնդէն վեր կը բարձրանայ, բայց իր ամբողջ սնունդը կոնդիլն հունէն է որ կ'առնէ:

Ապրիլ 13  
Խոնարհութեան փառապատգանքներ

Անծանօթ գրիչ մը ըսած է. «Ինչո՞ւ բոլոր գետերը դէպի ծովերը կը վազեն: Որովհետեւ ծովերը անոնցմէ աւելի խոնարհ են, աւելի ցած են մակերեսով»: Դուն ալ խոնարհ եղիր, եւ տես թէ ինչպէս մարդիկ դէպի քեզ պիտի փառաս եւ առիթը պիտի ունենաս վկայելու անոնց Տէր Յիսուսի մասին:

Ապրիլ 14  
Տգէտն ու ինքզինք գիտցող համարողը

Երկու դասակարգի մարդիկ կան որոնց բան մը սորվեցնելէ պէտք է խուսափիս: Անոնք տգէտներն ու իրենք գիրենք գիտցող նկատողներն են: Անոնք պատրաստ չեն քեզ լսելու ու բան մը սորվելու: Տգէտը կը նմանի ծակոտ սափորի մը որուն մէջ ջուր լեցնել կարելի չէ, իսկ ան որ կը կարծէ թէ ինք ամէն բան գիտէ՝ կը նմանի մինչեւ բերան լեցուած գաւաթի մը որ պատրաստ չէ մէջը նոր բան առնելու:

Ապրիլ 15  
Երբեք մի՛ դադարիր աշխատելէ

Աշխատի՛ր նոյնիսկ եթէ չաշխատողն է որ կը վարձատրուի: Աշխատի՛ր նոյնիսկ եթէ քեզի տրուելիքը՝ քեզի ծուղակ լարողին կը տրուի: Աշխատի՛ր նոյնիսկ եթէ աշխատանքդ կ'ուրացուի: Յիշէ որ Տէրը ամէն բան կը տեսնէ, եւ յիշէ որ Իր տալիք վարձքն է որ յաւիտենական է:

Ապրիլ 16  
(ք) Չենֆ կրնար...

Չենֆ կրնար իշխել Սատանային վրայ՝ եթե Քրիստոս չէ մեր իշխանը: Չենֆ կրնար փառք տալ Աստուծոյ՝ եթե փառք փնտոող ենք: Չենֆ կրնար գոհութիւն յայտնել Աստուծոյ՝ եթե չենք սորված քիչով գոհանալ: Չենֆ կրնար զգուշանալ դժոխքէն՝ եթե չենք գիտեր արժէքը երկինքին: Չենֆ կրնար Չարը մեր ոտքին տակ առնել՝ երբ մենք չենք սորված նստիլ Յիսուսի ոտքերուն քով: Չենֆ կրնար տիրել մեր զգացումներուն վրայ՝ եթե զանոնք չենք գամած Յիսուսի խաչին վրայ:

Ապրիլ 17  
Պտղաբեր մարդու մասին

Եթէ պտղաբեր ես՝ չես կրնար առաջքը առնել քարկոծուելու: Եթէ աշխատող ես՝ չես կրնար դէմ դնել բամբասուելու ալիքին: Եթէ ստեղծագործ ես՝ չես կրնար խուսափիլ քննադատուելէ: Եթէ իրագործող ես՝ չես կրնար գերծ մնալ ուրացուելէ:

Ապրիլ 18  
Պատրաստ ըլլանք գի՛ն վնարելու

Ամէն արժէքաւոր բան իր գինը ունի եւ առանց իր գինը վնարելու՝ չենք կրնար զայն ունենալ: Աստուծոյ արքայութիւնն ալ իր գինը ունի: Արքայութիւնը ձեռք ձգել ուզող մարդը՝ սուղ գին վնարելու պատրաստ պէտք է ըլլայ:



**Ապրիլ 19**  
**Փախչիք քեզ փառաբանողներէն**

Պատուէ՛ քեզ սիրողները: Յարգէ՛ գործակիցներդ: Օրհնէ՛ բարեկամներդ: Ընդունէ՛ դրացիներդ: Սիրէ՛ հաւատակիցներդ: Բայց հեռո՛ւ փախչիք քեզ փառաբանողներէն, որովհետեւ անոնք քեզ Աստուծոյ հակառակորդ կը դարձնեն, անոնք քեզ կը գրկեն այն փառքէն որ Աստուած կ'ուզէ քեզի տալ: Եթէ մարդոց կողմէ փառք ընդունիս՝ մերժած կ'ըլլաս Աստուծոյ տալիք փառքը քեզի:

**Ապրիլ 20**  
**Զվախնանք կեանքի մարտահրաւերներէն**

Այս կեանքը ապրիլը՝ մարտահրաւեր մըն է: Հոն կան լեռներ գորս պէտք է մագլցիլ: Կան կատղած ալիքներ որոնց վրայ պէտք է նաւարկել: Կան փուշեր որոնք պէտք է արմատախիլ ըլլան: Կան սուտեր որոնք պէտք է հերժուիլ: Զվախնանք կեանքին կողմէ մեզի ուղղուած մարտահրաւերներէն: Անոնց յաղթելով է որ պիտի կրնանք երկինքը «գրաւել»:

**Ապրիլ 21**  
**Ի՞նչ տեսակ մարդիկ կը գործածէ Սուրբ Հոգին**

Սուրբ Հոգին չի փնտոյր գիտուն մարդիկ որպէսզի անոնց միջոցաւ գործէ, այլ՝ Աստուծոյ գիտութիւնը ունեցող մարդիկ: Ան չի փնտոյր կարող մարդիկ, այլ՝ Ամենակարողին վստահող մարդիկ: Ան չի փնտոյր պատրաստաբան մարդիկ, այլ՝ պատրաստակամ մարդիկ: Պատրաստակամ՝ ծառայելու ինկածին, աղքատին, որբին:

Ապրիլ 22  
Խօսելակերպի կարեւորութեան մասին

Երբ շիտակ բանին մասին կոշտօրէն կը խօսինք՝ շիտակ բանը իբր սխալ հանդէս կու գայ, իսկ երբ սխալ բանին մասին քաղցրութեամբ կը խօսինք՝ սխալ բանը կ'հստվին շիտակ կը թուի: Հետեւաբար, որքան կարեւոր է շիտակ բան ըսելը, նոյնքան եւ աւելի կարեւոր է շիտակ բանը՝ շիտակ ձեւով ըսելը:

Ապրիլ 23  
Հարց մը լուծելու համար...

Հարց մը չի լուծուիր երբ այդ հարցին մասին չենք խօսիր: Հարց մը կ'հստվին կը լուծուի երբ այդ հարցին մասին փորձառու մարդոց կը խօսինք: Հարց մը ամբողջութեամբ կը լուծուի երբ այդ հարցին մասին Յիսուսի կը խօսինք, որովհետեւ Յիսուս Ի՛նքն է մեր բոլոր հարցերուն ու հարցումներուն լուծումը:

Ապրիլ 24  
Լոռութեան մասին

Երբ ճշմարտութիւնը կը խեղաթիւրուի՝ լոռութիւնը ուրացում կը սեպուի: Երբ բռնակալութիւնը կը տիրէ՝ լոռութիւնը համբերութիւն կը նկատուի: Երբ բարեկամներ ու բարիներ կը բամբասուին՝ լոռութիւնը դաւաճանութիւն կը սեպուի: Իսկ երբ Աւետարանը կ'այլափոխուի՝ լոռութիւնը դատապարտութիւն կը բերէ:

Ապրիլ 25  
Յիսուս Ի՛նճն է ամէն ինչ

Յիսուս Ի՛նճն է արքայութեան նամբան բացողը եւ Ի՛նճն է արքայութեան բացուած նամբան: Ի՛նճն է արքայութիւն տանող նամբան եւ Ի՛նճն է այդ նամբուն վրայ ղեկի հետ ֆալողը: Ի՛նճն է այդ նամբուն աւարտին ղեկ հասցնողը եւ Ի՛նճն է այդ նամբուն աւարտին ղեկի սպասողը: Ի՛նճն է ղեկ ֆալեցնողը եւ Ի՛նճն է ղեկի համար ֆալողը:

Ապրիլ 26  
«Աւելի լաւ»ին մասին

Աւելի լաւ է Աստուծոյ ձեռքին մէջ հիւանդ ոչխար մը ըլլալ, քան Սատանային ձեռքին մէջ առողջ առիւծ մը: Աւելի լաւ է Աստուծոյ կողմէ պատժուիլ, քան Սատանային կողմէ գնահատուիլ: Աւելի լաւ է Աստուծոյ ձեռքով փշրուիլ քան Սատանային ձեռքով կարծրանալ:

Ապրիլ 27  
Քարոզիչ մը հետեւորդներ կ'ունենայ երբ...

Երբ Աւետարանը ֆարոգես՝ մարդիկ ղեկ կը լսեն: Բայց երբ Աւետարանը ֆարոգես ու ապրիս՝ անոնք ո՛չ միայն ղեկ կը լսեն, այլեւ կը հետեւին ու կը հնազանդին: Քարոզիչ մը հետեւորդներ կ'ունենայ երբ ինք հետեւորդ մըն է Քրիստոսի: Մարդիկ կը լսեն ֆարոզիչին ձայնը երբ ֆարոզիչը կը լսէ Քրիստոսի եւ Սուրբ Հոգիին ձայնը:

Ապրիլ 28  
Մահը՝ օրհնութի՞ւն, թէ՛ անէծք

Մահը ամենէն մեծ անէծքն է եթէ գայն դիմաւորենք առանց Յիսուսի, եւ ամենէն մեծ օրհնութիւնն է եթէ գայն դիմաւորենք Յիսուսով: Ուստի, ընդունի՛ր Քրիստոսի կենդանարար հաւատքը սրտիդ մէջ, որպէսզի մահը քեզի համար օրհնութեանց դուռ դառնայ եւ ոչ թէ անէծքի դուռ:

Ապրիլ 29  
Զի՛ բաւեր ժխտական բան չընել

Եթէ սուտ չես խօսիր՝ չի նշանակեր թէ նշմարտասէր ես: Եթէ աղքատին իրաւունքը չես յափշտակեր՝ չի նշանակեր թէ աղքատասէր ես: Եթէ չես գրկեր որբերը՝ չի նշանակեր թէ կը սիրես որբերը: Ժխտական բան չընելը՝ քեզ դրական մարդ չ'ըներ: Քեզ դրական մարդ դարձնողը՝ դրական գործեր կատարելն է: (Շարունակելի):

Ապրիլ 30  
Դրական գործերն են  
որ քեզ դրական մարդ կը դարձնեն

Կրնայ ըլլալ սուտ չես խօսիր, բայց նշմարտութիւնը կը խօսի՞ս: Ուրիշին իրաւունքը չես ուտեր, բայց իրենց իրաւունքը կերուած անձերուն պաշտպան կը կենա՞ս: Զես անիծեր թշնամիներդ, բայց կ'օրհնե՞ս գանոնք: Զես ատեր քեզ ատողները, բայց կը սիրե՞ս գանոնք: Մարդոց գլորման պատճառ չես ըլլար, բայց գլորածները վերականգնելու նիզ կը թափե՞ս:

## Մայիս 1 Պահֆի նպատակը

Պահֆի նպատակը այն չէ որ ցոյց տաս ուրիշին թէ գօրաւոր ես, այլ այն՝ որ անդրադառնաս թէ տկար ես: Պահֆի նպատակն է՝ որ քիչ մը անօթի մնաս եւ անօթի մնալովդ ուրիշ անօթի մը կշտացնես: Պահֆի նպատակը միայն ստամոքսի անօթի թողուլը չէ, այլ՝ սիրտդ Յիսուսի սիրով ու հաւատով լեցնելը: Ինչո՞վ կ'օգտուիս երբ դատարկ ստամոքսի կողֆին ունիս նաեւ դատարկ սիրտ մը:

## Մայիս 2 Տալով բան մը չես կորսնցնել

Ո՛վ մարդ, ինչպէս մոմը բան չի կորսնցնել իր լոյսէն երբ լոյս տայ ուրիշ մոմի մը, այնպէս ալ դուն բան մը չես կորսնցնել երբ քեզմէ բան մը տաս ուրիշին: Ինչպէս Յիսուս բան մը չկորսնցուց երբ իր կեանքը տուաւ մեզի համար, ընդհակառակը, երկինք երթալէ ետք՝ փառքի ու պատիւի արժանացաւ, այնպէս ալ մենք, երբ տանք մեզմէ, երկինքի մէջ մեծ փառքի ու վարձքի պիտի արժանանանք:

## Մայիս 3 Վկայելու եւ աղօթելու կարելորութիւնը

Ո՛չ դադրիր մարդոց Քրիստոսի մասին վկայելու եւ ո՛չ ալ դադրիր Քրիստոսի աղօթելու մարդոց համար: որովհետեւ մարդոց Քրիստոսի մասին վկայելով՝ անոնց մէջ սէ՛ր կ'արթննայ Քրիստոսի հանդէպ, իսկ Քրիստոսի աղօթելով մարդոց համար՝ ինչ մէջդ սէ՛ր կ'արթննայ մարդոց հանդէպ:

#### Մայիս 4 Արտանց աղօթելու մասին

Անհամարձակ աղօթքը կը փակէ երկինքի դուռը:  
Անսրտարուիս աղօթքը կը փակէ Աստուծոյ ականջները:  
Անհոգի աղօթքը կը կասեցնէ Սուրբ Հոգիին կենաց գետի  
հոսքը: Կասկածով մատուցուած աղօթքը կ'անդամալուծէ  
Աստուծոյ գործը: Առանց հաւատքի եղած աղօթքը կը  
խափանէ Աստուծոյ ծրագիրները:

#### Մայիս 5 Տրտմիլ ու աշխատիլ Աստուծոյ հետ

Մեր կոչումը Սուրբ Հոգիին հետ մարդոց մեղքերուն  
համար տրտմիլն է եւ ո՛չ թէ տրտմեցնել Սուրբ Հոգին մեր  
մեղքերով (Եփ 4.30): Ան որ չի տրտմիր Սուրբ Հոգիին  
հետ՝ կը նշանակէ թէ կը տրտմեցնէ Սուրբ Հոգին: Ան որ  
Աստուծոյ հետ մարդոց մեղքերուն համար արցունք չի  
թափեր՝ Աստուծոյ արցունքը թափող մըն է:

#### Մայիս 6 Ժամանակի մասին

Գուրգուրայ ամէն մէկ վայրկեանին որ Աստուած ֆե-  
զի տուած է, քանի բարի յաւիտենականութիւնդ ներկայ  
վայրկեաններուդ ծնունդը պիտի ըլլայ: Յաւիտենականու-  
թիւնդ չ'ըսկսիր երբ ժամանակէն եւ ժամանակաւորէն  
դուրս գաս, այլ նոյնիմէն այս ժամանակաւոր ժամանակին  
մէջ, որուն ընթացքին է որ յաւիտենականութեան համար  
որոշում պէտք է առնես:

### Մայիս 7

Աղօթելու համար այլոց փրկութեան համար...

Եթէ փրկութեան վստահութիւնը չունիս՝ չես կրնար վստահութեամբ աղօթել ուրիշներու փրկութեան համար: Եթէ փրկութեան բերած ուրախութիւնը չունիս՝ չես կրնար ուրախութեամբ աղօթել այլոց փրկութեան համար:

### Մայիս 8

Մարդիկը փոխելը՝ Յիսուսի գործին խառնուիլ է

Յիշէ որ դուն չես կոչուած մարդիկը փոխելու. կոչումդ մարդիկը աղօթ-ֆովդ Տէր Յիսուսի յանձնելն է: Մարդիկը փոխելը՝ Տէր Յիսուսի գործն է: Եթէ մարդիկը փոխելը ֆու գործդ նկատես, նախ Տէր Յիսուսի գործին խառնուած պիտի ըլլաս, եւ երկրորդ, գործդ ուրիշին գործին խառնուիլը պիտի ըլլայ: Դուն պարզապէս յանձն-նրէ Յիսուսի եւ ձգէ որ Ան Իր գործը ընէ ֆու միջոցաւ:

### Մայիս 9

Տէրը որո՞նց կը նայի

Տէրը Բարձրեա՛լ է բայց մարդոց կողմէ բարձրաց-լածներուն չի նայիր, այլ՝ խոնարհներուն: Տէրը հարո՛ւստ է բայց գրպանով հարուստներուն չի նայիր, այլ՝ սրտով հարուստներուն: Տէրը հզօ՛ր է բայց հզօրներուն չի նայիր, այլ՝ տկարներուն: Տէրը սո՛ւրբ է բայց իրենք գիրենք սուրբ նկատողներուն չի նայիր, այլ՝ իրենց մեղքերէն սրբուիլ ուզող մեղաւորներուն:

Մայիս 10  
Զօրաւոր մարդը...

Զօրաւորը այն մարդը չէ որ իր ունեցած իշխանութեամբ ինքզինք կը պարտադրէ ուրիշներուն, այլ ան՝ որ իր ունեցած սիրով ինքզինք կը պարտադրէ ուրիշներուն: Զօրաւորը այն մարդը չէ որ համեստ դիրքէ բարձր դիրքի կը հասնի, այլ ան՝ որ բարձր դիրքի հասնելէ ետք, նեցուկ կը կանգնի համեստ կարգի մարդոց:

Մայիս 11  
Աստուած սիրով կ'ընդունի գէշ նուէրներդ

Երբ մեղքերուդ ծանրութիւնը Աստուծոյ յանձնես՝ բեռնաւորած չես ըլլար զԱստուած: Երբ ցաւերդ Յիսուսի բերես՝ ցաւցուցած չես ըլլար Յիսուսը: Երբ տրամութիւնդ յայտնես Տիրոջ՝ տրամեցուցած չես ըլլար Տէրը: Երբ գէշ նուէր մը տաս մարդոց՝ մարդիկ կը նեղուին, բայց Աստուած այդպէս չէ: Երբ Աստուծոյ տաս ամենէն գէշ «բաներդ» (մեղքերդ), Աստուած սիրով կ'առնէ զանոնք, եւ անոնց փոխարէն ամենէն գեղեցիկ բանը՝ Յիսուսի փրկութեան պատմութեանը քերթը կը շնորհէ:

Մայիս 12  
Դուն քեզ չվնասելու մասին

Մարդ չի կրնար վտանգել յաւիտեանականութիւնդ՝ եթէ դուն զանիկա չվտանգես: Մարդ չի կրնար ստիպել քեզ որ մեղք գործես՝ եթէ դուն չես ուզեր մեղք գործել: Յովհաննէս Ոսկեբերան Հայրապետը կ'ըսէ. «Մարդ չի կրնար վնասել քեզի՝ եթէ դուն քեզի չվնասես»:



### Մայիս 13 Ժամանակ անցնել Տիրոջ հետ

Պէտք է ամէն օր ժամանակ անցնել Յիսուսի հետ եւ յատուկ մենիկ պահեր ունենալ, որպէսզի երբ մարդիկ ուզեն ժամանակ անցնել մեզի հետ՝ այդ ժամանակը դառնայ պտղաբեր: Մենք չենք կրնար օգտակար դառնալ մարդոց՝ եթէ չենք սորված ամէն օր մասնաւոր ժամանակ անցնել Տէր Յիսուս Քրիստոսի հետ եւ խնդրել Իրմէ որ Սուրբ Հոգիին միջոցաւ աղօթել սորվեցնէ մեզի:

### Մայիս 14 Իսկական մահը

Իրական մահը «հոգիին մարմինէն բաժնուիլը» չէ, ինչպէս յաճախ մարդիկ կ'ըսեն, այլ՝ հոգիին Աստուծմէ բաժնուիլն է: Ինչպէս երբ միւր ծառէն բաժնուի՝ կը մեռնի, այնպէս ալ երբ մարդ Աստուծմէ բաժնուի՝ մեռած կը սեպուի: Քրիստոս Ի՛նքն է կեանքը (Յհ 14.6): Ան որ չունի Քրիստոսը՝ կեանք ալ չունի (Ա.Յհ 5.12):

### Մայիս 15 Քիչ չաղօթելու մասին

Մի մտահոգուիր եթէ տասը անգամ ինկած ես եւ հարիւր անգամ աղօթած, այլ մտահոգուիր եթէ հարիւր անգամ ինկած ես եւ տասը անգամ աղօթած: Որքան երկար աղօթես՝ այնքան երկար կը տոկաս Փորձիչին ու փորձութեանց դիմաց: Բայց երկար աղօթելը բաւարար չէ, այլ պէտք է սրտանց աղօթել: Աղօթքի պահուն աւելի լաւ է տաճուկ սիրտ ունենալ առանց բառերու, քան բառեր՝ առանց տաճուկ սրտի:

Մայիս 16  
Հոգեւոր մարդու մասին

Հոգեւոր կեանքի մէջ եփած եւ Յիսուսի հետ մտերիմ յարաբերութիւն ունեցող անձի մը հետ ունեցած երկխօսութիւնդ, տասը անգամ աւելի կ'արժէ քան բազմահարիւր քարոզներ լսելդ կամ տալդ, եւ ինչն<sup>օ</sup>ւ: Որովհետեւ նման անձի մի միջոցաւ Յիսուս ի՛նքն է որ կը խօսի քեզի հետ:

Մայիս 17  
Եղիբ հայելի, գիրք, աղբիւր, տաճար

Եղիբ հայելի մը որուն մէջ երբ մարդիկ նային՝ Յիսուսը տեսնեն: Եղիբ գիրք մը գորս երբ մարդիկ բանան կարդալու՝ հոն Յիսուսը գտնեն: Եղիբ աղբիւր մը որուն երբ ծարաւ մարդիկ մօտենան՝ հոնկէ Յիսուսը հոսի: Եղիբ տաճար մը որուն երբ մարդիկ այցելեն՝ Յիսուսը պաշտեն:

Մայիս 18  
Աշխատիլ առանց յուսախաբ ըլլալու

Երկրի վրայ աշխատիլ ու վարձատրուիլը՝ ուրախութիւն ու գոհունակութիւն կու տայ մեզի, իսկ աշխատիլ ու չվարձատրուիլը՝ մեծ փառքի ու մեծ վարձատրութեան կ'արժանացնէ մեզ երկինքի մէջ: Ուստի, յուսախաբ չըլլանք երբ երկրի վրայ չվարձատրուինք, այլ յիշենք որ երկինքի մէջ գանձեր կը դիզուին մեզի համար:

Մայիս 19  
Դո՛ւրս եկուր մեղքի շերամէն

Բոլոր մարդիկ կոչուած են թիթեռնիկներուն նման թեթեւ ըլլալու եւ թռչելու, բայց եթէ անոնք չսորվին իրենց մեղքերուն «շերամէն» դուրս գալ՝ պիտի մնան որդ վիճակի մէջ, շերամի մէջ, եւ հոն ալ պիտի մեռնին, մինչդեռ եթէ Քրիստոսի շնորհով դուրս գան իրենց մեղքի շերամէն, պիտի կարենան դէպի բարձունքները թռչիլ:

Մայիս 20  
Մեղքին դէմ կռուելու մասին

Երբ կը կռուիս մեղքին դէմ ու կը վիրաւորուիս՝ աստիկա պարտութիւն չէ: Պարտութիւնը՝ յուսահատիլն ու մեղքին դէմ չկռուիլն է: Որքան ալ իյնաս՝ ետ ոտքի կանգնիր ու քալէ: Եւ միշտ յիշէ որ ի վերջոյ յաղթանակը քու կը պիտի ըլլայ: Երբ Տէրը տեսնէ քու լրջութիւնդ, յարատեւութիւնդ եւ վնասակամութիւնդ մեղքին դէմ կռուելու մէջ՝ քեզի պիտի պարգեւէ յաղթողի յաւերժական թագ:

Մայիս 21  
Հոգիիդ աւելի՛ հոգ տար քան մարմինիդ

Մարմինդ այն վանդակն է որուն մէջ կ'ապրի հոգիդ թոչունի մը նման: Օր մը, վանդակին դուռը պիտի բացուի եւ թոչունը պիտի թռչի երթայ եւ վանդակը մէկ կողմ պիտի «նետուի»: Հետեւաբար, թոչունիդ (հոգիիդ) աւելի՛ հոգ տար քան վանդակիդ (մարմինիդ):

Մայիս 22  
Իմաստունը, Փորձառուն, Աղօթողը

Հոգեւոր գիտութեան հասնելու համար՝ գտիր իմաստուն մէկը որ կրնայ իր հոգեւոր խօսքերով Աստուծոյ խօսքին գիտութեան դռները բանալ մտքիդ առջեւ: Հոգեւոր անումի հասնելու համար՝ գտիր փորձառու հոգեւոր մը որուն փորձառութենէն կրնաս օրհնուիլ: Իսկ հոգեւոր յաղթանակի հասնելու համար՝ գտիր աղօթող մէկը որ կրնայ իր թախանձագին աղօթքներով գորակցիլ քեզի հոգեւոր պայքարիդ մէջ:

Մայիս 23  
Սրբագրութեան մասին

Երբ ամէն մարդ փորձէ ինքզինք սրբագրել՝ աշխարհ դրախտի կը վերածուի: Երբ ամէն մարդ փորձէ ուրիշը սրբագրել՝ աշխարհ դժոխքի կը վերածուի: Ահա թէ ինչո՞ւ աշխարհ դժոխքի նման է: Ան որ ուրիշը սրբագրելու հետամուտ ըլլայ՝ չի կրնար տեսնել իր անձին սխալները:

Մայիս 24  
Քու ձեռքդ է...

Քու ձեռքդ չէ լաւ ձեռով մեռնիլը, բայց քու ձեռքդ է մեռնելէդ ետք լաւ անուն ձգելը: Քու ձեռքդ չէ երկրի վրայ երկար ապրիլը, բայց քու ձեռքդ է երկինքի մէջ յաւիտեան ապրիլը: Քու ձեռքդ չէ մարդոց սրտին մէջ տեղ ունենալը, բայց քու ձեռքդ է Աստուծոյ սրտին մէջ տեղ ունենալը:

Մայիս 25  
Մտահոգութիւնը արգելք մըն է

Երբ կը մտահոգուիս ունեցած արգելքներուդ համար՝ անոնք չեն փարատիր, ընդհակառակը, անոնց վրայ ուրիշ արգելք մըն ալ կու գայ աւելնալու, եւ ատիկա նոյնիման մտահոգութիւնդ է: «Հոգդ Տիրոջը վրայ ձգէ ու Ան քեզ պիտի խնամէ» (Սղ 55.22): Հոս յիշուած «ձգէ» բառը կը նշանակէ՝ Տիրոջ յանձնէ ու վստահութեամբ սպասէ:

Մայիս 26  
Հոգի՛դ թող ըլլայ տէրը մարմինիդ

Մի թոյլ տար որ հոգիիդ ծառան ըլլայ հոգիիդ տէրը: Ո՞վ է հոգիիդ ծառան: Ատիկա նոյնիման մարմինդ է: Երբ մարմինդ ըլլայ հոգիիդ ծառան՝ դուն տէր ես: Իսկ եթէ մարմինդ ըլլայ տէրը հոգիիդ՝ դուն ծառայ ես: Եթէ հոգիդ աղօթել կ'ուզէ իսկ մարմինդ քննալ, սորվեցուր մարմինիդ հոգիիդ ուզածը ընել եւ աղօթքի կանգնիլ հոգիիդ հետ միասին:

Մայիս 27  
Յիշէ մեղքերդ՝ որպէսզի մոռցուին

Եթէ յիշենք մեր մեղքերը Յիսուսի խաչին դիմաց՝ Աստուած զանոնք պիտի մոռնայ: Իսկ եթէ մենք մոռնանք մեր մեղքերը՝ Աստուած զանոնք մեզի պիտի յիշեցնէ: Ուստի, յիշէ մեղքերդ եթէ կ'ուզես անոնք մոռցուին: Մեղքերդ մոռնալը՝ Աստուծոյ գործն է եւ ոչ թէ քու գործդ:

Մայիս 28  
(ա) Աստուած ինչի՞ կը նայի

Աստուած ո՛չ թէ տանար յանախողներուն կը նայի, այլ՝ տանարի վերածուողներուն: Աստուած ո՛չ թէ նառ խօսողներուն կը նայի, այլ՝ աղփատներուն համար նար փնտռողներուն: Աստուած ո՛չ թէ Սուրբ Հաղորդութիւն առնողներուն կը նայի, այլ՝ իրեն հետ հաղորդութիւն ունեցողներուն: Աստուած ո՛չ թէ հաւատք ու սէր պատգամողներուն կը նայի, այլ՝ հաւատքի ու սիրոյ պատգամ եղողներուն:

Մայիս 29  
Աստուծոյ առիթ տալու մասին

Երբեմն պէտք է գոցես աչքերդ՝ որպէսզի տեսնես զԱստուած: Երբեմն պէտք է գոցես բերանդ՝ որպէսզի լսես Աստուծոյ ձայնը: Երբեմն ալ պէտք է ձեռքերդ դադարին գործելէ՝ որպէսզի տեսնես Աստուծոյ ձեռքին գործը:

Մայիս 30  
Խաղաղութիւնդ չկորսնցնելու համար...

Միշտ չէ որ խաղաղութիւն ձեռք կը ձգես երբ մէկու մը հետ վիճիս ու յաղթես. երբեմն աւելի մեծ խաղաղութիւն ձեռք կը ձգես եթէ թոյլ տաս որ ուրիշը յաղթէ քեզ վիճարանութեան ընթացքին: Յիշէ որ ուրիշին յաղթելու համար կրնաս խաղաղութիւնդ կորսնցնել: Աւելի լաւ է վէճը կորսնցնես քան խաղաղութիւնդ:

### Մայիս 31 Աստուծոյ գաւակը ըլլալու փաստը

Բժշկութիւններն ու հրաշագործութիւնները երբեք փաստ չեն որ մենք Աստուծոյ գաւակն ենք: Փաստը որ Աստուծոյ գաւակն ենք, սիրելն է Յիսուսն ու մարդիկը, աղփատն ու որբը, ծերունկն ու տկարը: Պօղոս առաքեալ կը հաստատէ որ ոչինչ կ'արժենք եթէ երբեք լեռները տեղափոխելու չափ զօրաւոր հաւատք ունինք բայց սէր չունինք (Ա.Կր 13.2): Սէ'րն է ապացոյցը որ մենք Յիսուսի աշակերտներն ենք (Յհ 13.35):

### Յունիս 1 Գոհ եղիր փիչով

Դրամի առատութիւնը չի կրնար գոհունակ սիրտ շնորհել քեզի եթէ երբեք փիչով գոհ ըլլալ չես սորված: Marie Ebner ըսած է. *«Քիչով գոհ ըլլալը՝ դժուար է, իսկ շատով գոհ ըլլալը՝ անկարելի»*: Եթէ սորվիս «դժուար»ին յաղթել, այլ խօսքով՝ փիչով գոհանալ, կեանքի մէջ դժուարին բան պիտի չմնայ առջեւդ:

### Յունիս 2 Ի՞նչպէս կրնաս դուն քեզ ցանչնալ

Անծանօթ գրիչ մը ըսած է. *«Եթէ կ'ուրախանանք մարդոց ձախողութեան համար՝ Սատանայի մարդիկն ենք: Եթէ անտարբեր կը մնանք մարդոց ձախողութեան հանդէպ՝ աշխարհի մարդիկն ենք: Իսկ եթէ կը տրտմինք մարդոց ձախողութեան համար՝ Աստուծոյ մարդիկն ենք»*: Դուն ո՞ր խումբի մարդոց կը պատկանիս:

### Յունիս 3 Իսկական հարուստը

Եթէ ունիս հարստութիւն բայց չունիս հարուստ սիրտ՝ աղփատ ես, իսկ եթէ չունիս հարստութիւն բայց ունիս հարուստ սիրտ՝ հարուստ ես, ուրեմն, իսկական հարուստ մարդը՝ սիրտով հարուստ եղողն է եւ ոչ թէ դրամականօրէն: Բայց գիտե՞ս թէ ի՛նչն է որ սիրտդ հարուստ արտի կը վերածէ: Յիսուսի ներկայութիւնը: Այո՛, երբ Յիսուս արտիդ մէջ է, դուն հարուստ ես, շա՛տ հարուստ:

### Յունիս 4 Դրամը գործածել Աստուծոյ փառքին համար

Ան որ դրամ ունի եւ սակայն գայն չի գործածեր Աստուծոյ փառքին համար, կը նմանի մաքուր եւ առատահոս աղբիւրի մը ֆով նստած մարդուն որ ծարաւ կը մեռնի, կամ պտղալից ծառի մը տակ երկնցողին որ անօթի կը մեռնի: Դրամը Աստուած կու տայ մարդուն եւ մարդը պէտք է գայն գործածէ Աւետարանի տարածման համար:

### Յունիս 5 Սրբութեան նամբան

Եթէ քեզի ծանօթ եղողներուն փրկութեան համար կ'աղօթես՝ բարի՛ մարդ ես: Եթէ աշխարհի մարդոց փրկութեան համար կ'աղօթես՝ հաւատացեա՛լ մարդ ես: Իսկ եթէ քեզ ատող եւ քեզի թշնամութիւն ընող մարդոց փրկութեան համար կ'աղօթես՝ սո՛ւրբ մարդ ես:



Յունիս 6  
Ո՞վ է դժբախտ մարդը

Դժբախտ մարդը այն մարդը չէ որ սիրելիներ կը կորսնցնէ, ո՛չ ալ այն մարդը՝ որ դրամ կը կորսնցնէ, ո՛չ ալ այն մարդը՝ որ գործ կամ առողջութիւն կը կորսնցնէ. դժբախտը այն մարդն է՝ որուն Սատանան մոռցուցած է թէ ինք Աստուծոյ գաւակն է, եւ համոզած է թէ ինք դժբախտ մըն է եւ դժբախտ կեանք ապրելու համար ծնած է:

Յունիս 7  
Քանի՞ օր ապրած ես մինչեւ հիմա

Պապա Շրնուտան կ'ըսէ. *«Եթէ կ'ուզես գիտնալ թէ քանի՞ օր ապրած ես մինչեւ հիմա, հաշուէ՛ միայն այն օրերը որոնց ընթացքին աղօթած ու բարին գործած ես: Այն օրերը որոնց ընթացքին չես աղօթած եւ մարդասիրական արարք մը չես կատարած՝ այն օրերը մեռած կը սեպուին»:*

Յունիս 8  
Խօսելակերպին կարեւորութիւնը

Կատարուած իմաստուն սրբագրութիւն մը կամ առաջարկ մը իր արժէքը կը կորսնցնէ եթէ ատիկա կատարուի անիմաստուն կերպով: Մեր ըսելիքը գիտնալը չի բաւեր, մեր ըսելիքը ըսելու կերպն ալ պէտք է գիտնանք: Շիտակ բանը եթէ սխալ ձեւով ըսուի՝ մերժումի եւ ընդդիմութեան կը հանդիպի, մինչդեռ եթէ ատիկա ազնուութեամբ ըսուի՝ մարդիկ դիւրաւ կը համոզուին եւ սիրով կ'ընդունին զայն:

**Յունիս 9**  
**Քաղցրօրէն վերաբերելու մասին**

Մէկը ըսած է. *«Այս օրը ապրիր այնպէս՝ որպէս թէ անհկա վերջին օրդ ըլլայ աշխարհի մէջ»*: Իսկ ես կ'ուզեմ աւելցնել. *«Ամէն մարդու որ կը հանդիպիս, հետը վերաբերիր այնպէս՝ որպէս թէ անհկա իր վերջին օրն է որ կ'ապրի այս աշխարհի մէջ»*: Պիտի ուզէի՞ր ցաւցնել անձ մը եթէ գիտէիր թէ օր մը ետք պիտի մահանար, կամ եթէ գիտնայիր թէ օր մը ետք դուն պիտի մահանայիր:

**Յունիս 10**  
**Մի՛ փնտոներ կատարեալ մարդ**

Աստուած կը պահանջէ մեզմէ կատարեալ ըլլալ բայց չ'ակնկալեր որ կատարեալ ըլլանք, որովհետեւ գիտէ թէ հոգեղէն արարածներ ենք եւ միշտ ալ կրնանք գլորիլ: Հետեւաբար, մի՛ փնտոներ կատարեալ մարդ: Միշտ միտքդ պահէ այս իրողութիւնը, որպէսզի նոյնիսկ երբ հաւատքի մարդիկ գորումներ արձանագրեն՝ չգայթակղիս: Մարդացեալ Աստուածորդիէն զատ կատարեալ մարդ չկայ:

**Յունիս 11**  
**Հեռացնենք մեզմէ եսասիրութիւնը**

Ան որ եսաւէր է՝ չի կրնար մարդասէր ըլլալ, ո՛չ ալ կրնայ մարդոց կողմէ սիրուիլ: Եւ ինչո՞ւ: Որովհետեւ միշտ իր անձին շահն ու հանգիստը կը փնտոէ եւ երբեք ուրիշին շահին ու հանգիստին մասին չի մտածեր: Ուստի, հեռացնենք մեզմէ եսասիրութիւնը, որպէսզի սիրենք մարդիկը եւ մարդիկ սիրեն մեզ:

Յունիս 12  
Ո՞վ է կարող մարդը

Պէտք է «կարող» կոչել այն մարդը որ ուսում ու գիտութիւն ունի, այլ այն մարդը՝ որ իր մտքի պաշարը փոխանցելու կերպին մէջ համեստ ու խոնարհ է: Ո՛չ ալ «կարող» պէտք է կոչել այն մարդը որ հոետորական կերպով կը խօսի, այլ այն մարդը՝ որ սիրով ու սրտով կը խօսի:

Յունիս 13  
Աստուծոյ հետ առանձնանալու  
անհրաժեշտութիւնը

Հաւատացեալ մարդուն համար որքան կարեւոր է շրջապատուած ըլլալ հոգեւոր անձերով, նոյնքան կարեւոր է ունենալ Աստուծոյ հետ առանձնութեան պահեր, որովհետեւ հոգեւոր անձերու միջոցաւ մենք կրնանք փորձանութիւն եւ հաւատքի ամրապնդում ձեռք գտնել, իսկ Աստուծոյ հետ առանձնութեան պահերուն, Սուրբ Հոգին մեր մէջ կը կերտէ Քրիստոսի նմանութիւնը եւ մենք կը դառնանք սուրբ: Բոլոր սուրբերը սիրած են առանձնութիւնը:

Յունիս 14  
Ի՞նչպէս կ'ըլլաս Յիսուսի նման

Երբ կը վիրաւորուիս բայց չես վիրաւորեր՝ Յիսուսի հետեւորդ մըն ես: Երբ կը վիրաւորուիս ու կը ներես՝ Յիսուսի զաւակն ես: Երբ կը վիրաւորուիս ու բարիք կ'ընես ինչ վիրաւորողին՝ Յիսուսի նման ես:

### Յունիս 15

#### Միայն Յիսուսին երկրպագելու մասին

Երբ մեկը մտնելը Մեծն Հերովդես թագաւորին մօտ՝ պէտք էր մինչեւ գետին խոնարհելը անոր առջեւ եւ երկրպագութիւն մատուցանելը անոր: Սիրելի՛ ընթերցող, դուն եղիր մոգերուն նման, որոնք երբ հանդիպեցան Հերովդես թագաւորին՝ չխոնարհեցան ու չերկրպագեցին անոր, այլ փնտոնեցին ու գտան Յիսուսը եւ միայն Իրեն երկրպագեցին: Յիսուսէն զատ ուրիշ մէկուն մի՛ երկրպագեր:

### Յունիս 16

#### Տիրոջ վստահելու մասին

Ան որ կը վստահի Տիրոջ՝ Տէրը իր կարգին կը վստահի իրեն: Իսկ ան որ չի վստահիր Տիրոջ՝ ո՛չ Տէրը կը վստահի իրեն, եւ ո՛չ ալ մարդիկ պէտք է վստահին իրեն: Ի՞նչպէս մեկը կրնայ վստահելի սեպուիլ երբ չէ վստահած Տիրոջ: Կամ ի՞նչպէս Տէրը կրնայ գործ մը վստահիլ անձի մը երբ այդ անձը չի վստահիր Տիրոջ գործակցութեան:

### Յունիս 17

#### Սիրելու համար՝ ուսումի պէտք չունինք

Ամէն մարդ չէ կոչուած սիրոյ մասին ֆարոգներ տալու, բայց ամէն մարդ կոչուած է սիրելու: Սիրելու համար, ո՛չ ուսումի պէտք ունիս եւ ո՛չ ալ վկայականի, այլ ֆարեղէն սրտի փոխարէն՝ մսեղէն սրտի, Յիսուսով լեցուն սրտի, եւ ատիկա պարգեւողը Սուրբ Հոգին է:

### Յունիս 18

#### Ապաշխարութեամբ հեռանանք մեղքի սէրէն

Ապաշխարութիւնը մեզ մեղքէն չէ որ կը հեռացնէ, այլ՝ մեղքի սէրէն: Երբ ապաշխարեմք՝ մեղքը չի դադրիր գոյութիւն ըլլալէ մեր կեանքին մէջ, բայց անոր սէրը դո՛ւրս կը շարտուի մեր սրտէն: Աստուած մեզ չի դատապարտեր եթէ մեղք գործեմք, քանի գիտէ որ մարդ եմք ու կրնանք գործել, բայց կը դատապարտէ եթէ սիրեմք մեղքը: Մեղքը սիրելը՝ մեզ Չարին չար գաւակը կը դարձնէ:

### Յունիս 19

#### Ճշմարտութիւնը

Ճշմարտութիւնը փնտռելը՝ մեզ կը հեռացնէ աշխարհի մարդոցմէն: Ճշմարտութիւնը գիտնալը՝ մեզ կը մօտեցնէ հաւատացեալներուն: Ճշմարտութիւնը սիրելը՝ մեզ կը մօտեցնէ սուրբերուն: Ճշմարտութեան համար ուրախանալը՝ մեզ կը մօտեցնէ հրեշտակներուն: Ճշմարտութիւնը ապրիլը՝ մեզ կը մօտեցնէ Աստուծոյ:

### Յունիս 20

#### Փամանակ տանք Տիրոջ ձայնը լսելու

Եթէ հաւատացեալը չտրվի աղօթքէն ետք լուռ մնալ ու հոգիին ականջները մարգել Տիրոջ ձայնը լսելու, շատ բան կայ որ պիտի չտրվի, եւ այն ահու՛մը որ պէտք է ունենայ՝ չի կրնար ունենալ: Ինչպէս աղօթքի պահուն մեմք ըսելիք ունինք, Աստուած Ի՛նքն ալ ըսելիք ունի: Ուստի, աղօթքէն ետք, «Տէր Յիսուսի անունով աղօթեցիմք» չըսեմք ու չփախինք, այլ սպասեմք ու հաւատանք որ Տէրը Ի՛նքն ալ մեզի պիտի խօսի:

**Յունիս 21**  
**Տիրոջ վստահիլ**

Ի՞նչ կը նշանակէ վստահիլ Տիրոջ: Վստահիլ Տիրոջ՝ չի նշանակեր ծալապատիկ նստիլ եւ գործ մը չընել, այլ կը նշանակէ՝ հաւատալ թէ կրնանք ամէն բան ընել շնորհիւ Քրիստոսի որ կը զօրացնէ ու կը զօրակցի մեզի: Տիրոջ վստահիլ կը նշանակէ ամէն ինչ Տիրոջ յանձնել, բայց երբեք չի նշանակեր սպասել որ ամէն բան Տէրը ինք ընէ:

**Յունիս 22**  
**Հաւատք, յոյս, սէր**

Հաւատքը քեզ երկինքի հերոսներուն կը կապէ: Յոյսը քեզ երկինքին կը կապէ: Սէրը քեզ Յիսուսին կը կապէ: Ուստի, առանց հաւատքի՝ չես կրնար Աստուծոյ հերոսներուն շարքին դասուիլ: Առանց յոյսի՝ չես կրնար երկինք մտնել: Եւ առանց սիրոյ՝ չես կրնար Յիսուսի նմանիլ եւ Զայն ունենալ:

**Յունիս 23**  
**Հայրը, Որդին եւ Սուրբ Հոգին**

Մեր երկնաւոր Հայրը որդեգրութեան կնիքը դրոշմեց մեր սրտին մէջ եւ մեր սիրտը վերածեց բնակարանի մը որուն բնակիչները եղան Ինք ու մենք: Քրիստոս երկինքի հիմերը հաստատեց մեր սրտին մէջ եւ մեր սիրտը վերածեց երկինքի ուր Ինք գահակալեց: Սուրբ Հոգին Աստուծոյ Տաճարին սիւները կանգնեցուց մեր սրտին մէջ եւ մեր սիրտը վերածեց տաճարի ուր Ինքն է որ փառաբանութեան երգեր կ'երգէ մեր միջոցաւ:

Յունիս 24  
Քարոզիչի մասին

Եթէ քարոզիչ մը իր նպատակը դարձնէ մարդոց խօսիլ այն ինչ որ հանելի է իրենց որպէսզի ուրախացնէ զիրենք, այդ քարոզիչը կը ձախողի իր առաքելութեան մէջ, եւ ի՞նչ է քարոզիչի մը առաքելութիւնը եթէ ոչ մարդիկ բերել Յիսուսի: Քարոզիչի մը նպատակը մարդոց հանելի եղածը խօսիլը չէ, այլ՝ մարդոց օգտակար եղածը խօսիլը: Եթէ քու գաւկիդ սիրածը տաս իրեն փոխանակ իրեն օգտակար եղած տալու՝ զինք կործանած չե՞ս ըլլար:

Յունիս 25  
Սիրոյ մասին

Մենք չենք հաւնիր մեր ցաւին հանդէպ անտարբեր եղող մարդիկը, բայց գիտե՞ք որ մեր ցաւին հանդէպ անտարբեր եղողներն են որ պատճառ կ'ըլլան որ սկսինք մտածելու մեր ցաւը մի'այն Աստուծոյ պատմելու մասին: Մենք չենք հաւնիր մեզ յուսախար ընողները, բայց գիտե՞ք որ մեզ յուսախար ընողներուն պատճառով է որ մենք կը սորվինք Աստուծո՛յ եւ մի'այն Աստուծոյ վստահիլ:

Յունիս 26  
Ի՞նչպէս հասնիլ սրբութեան

Բոլոր անոնք որոնք սրբացած են, սրբացած են՝ որովհետեւ թշնամիներ եւ զիրենք ատողներ ունեցած են եւ անոնց համար աղօթող եղած են: Ուստի, քեզի դէմ սնուցած ատելութիւն մը պատճառ թող չըլլայ դժգոհութեան, այլ՝ առիթ մը աղօթքի եւ վագֆ մը դէպի սրբութիւն:

### Յունիս 27

#### Դժուարութիւններն ալ օրհնութիւն են

Ամէն մէկ դժուարութիւն որուն կը յաղթես՝ քեզ մէկ քայլ առջեւ կը տանի հոգեւոր կեանքիդ մէջ: Ուստի, դժուարութեանց համար նաեւ շնորհակալ եղիր Աստուծոյ, քանի անոնք Իր սիրոյն նշաններն են: Երբ աղօթքով եւ համբերութեամբ յաղթես քեզի ներկայացող դժուարութեանց՝ երկինքի մէջ յաղթողի վարձք պիտի ստանաս:

### Յունիս 28

#### Նեղութիւններէն դաս սորվելու մասին

Իւրաքանչիւր նեղութենէ սորվելիք դաս մը ունինք: Դժբախտ ենք եթէ նեղութիւններ գան ու անցնին եւ մենք տառապիւնք բայց բան մը չսորվինք անոնցմէ: Ուստի, երբ նեղութեան մէջ ես, խնդրէ որ Տէրը յայտնէ քեզի թէ ինչ կը փորձէ սորվեցնել քեզի տուեալ նեղութեան ընդմէջէն:

### Յունիս 29

#### Աղբատասէր Զարեհ Սրբազանը

Ո՞ւր է աղբատներուն տեղը մեր առաքելութեան մէջ: Մենք նկատի կ'առնենք գանոնք, թէ՛ յանախ նոյնիսկ մեր հօրենական տուներու աղբատ ու համեստ պայմանները մոռնալով՝ երես կը դարձնենք անոնց, մեր ամբողջ ուշադրութիւնը, մեր համակրանքը, մեր սրտակցութիւնն ու մեր ստրկական գործակցութիւնը ընծայելով միայն հարուստներուն, յաջողակներուն, երեսելիներուն, գօրաւորներուն (Զարեհ Արք. Ազնաւորեան):



### Յունիս 30 Ուրախութեան մասին

Կրնանք որոշում առնել թէ այլեւս մարդոց խօսքերէն պիտի չվիրաւորուինք, բայց չենք կրնար որոշել որ այլեւս ուրախ պիտի մնանք: Ուրախութիւնը մեր որոշումով չ'ըլլար, այլ՝ մարդոց հանդէպ մեր ցուցաբերած սիրովը: Որքան ալ որոշենք որ այլեւս ներքնապէս ուրախ պիտի մնանք՝ ատիկա անկարելի է առանց սէր ցուցաբերելու մեզ վիրաւորողներուն հանդէպ:

### Յունիս 1 Ստիպուածութեան մասին

Միշտ ալ կեանքիդ մէջ պիտի ըլլան մարդիկ որոնց հետ ստիպուած պիտի ըլլաս աշխատելու: Եթէ չես ուզեր ստիպողաբար աշխատիլ, միակ կերպը՝ սիրելն է գործդ եւ սիրելն է այն մարդիկը որոնց հետ ամէն օր կոչուած ես աշխատելու: Իսկ զանոնք սիրելու համար՝ պէտք է Սուրբ Հոգիէն սիրոյ պարգեւը խնդրես:

### Յունիս 2 Անձդ փոխելու մասին

Կ'ուզե՞ս փոխել աշխարհը: Աշխարհը փոխելու միակ կերպը դուն բու անձդ փոխելն է: Երբ թոյլ տաս որ Սուրբ Հոգին քեզ ներքնապէս փոխէ, անկէ ետք ամէն ինչ տարբեր պիտի երեւի աչքերուդ: Խորքին մէջ սակայն, ամէն ինչ նոյնը պիտի մնայ, դո՛ւն է որ փոխուած պիտի ըլլաս:

### Յուլիս 3 Աւելի լաւ է-ին մասին

Եթէ նպատակ դարձնես շրջապատիդ կողմէ սիրուիլ, երբեմն ստիպուած պիտի ըլլաս հեռանալու նշմարտութեանէն եւ ստութեան նամբան ընտրելու, քանի շրջապատիդ մէջ միշտ ալ պիտի ըլլան մարդիկ որոնք պիտի չուզեն նշմարտութիւնը լսել:

### Յուլիս 4 Ընտրութեան ազատութիւն ունիս

Կեանքին մէջ եթէ ուզես՝ կրնաս հրէշ ըլլալ, եթէ ուզես՝ կրնաս հրեշտակ ըլլալ: Եթէ ուզես՝ կրնաս մեղքերով տարուիլ, եթէ ուզես՝ կրնաս մեղքերդ տանիլ Յիսուսի: Եթէ ուզես՝ կրնաս երկինքի գօրավար ըլլալ, եթէ ուզես՝ կրնաս դժոխքի զինուոր ըլլալ: Ասիկա ընտրութեանդ ձգուած է:

### Յուլիս 5 Աստուածապաշտին մասին

Եթէ Աստուծոյ գաւակն ես եւ ամիսէ մը ի վեր ամէն ինչ հեզասահ կ'ընթանայ կեանքիդ մէջ, կը նշանակէ թէ տեղ մը սխալ բան մը կայ: Քննէ՛ հաւատքիդ կեանքը: Աստուածապաշտին հալածանք խոստացուած է (Բ.Տմ 3.12): Ասիկա յոռետեսութիւն չէ, այլ՝ նշմարտութիւն: Հակառակը ըսելը՝ կամաւոր հոգեւոր կուրութիւն է: Խաղաղ նաւարկութիւնը երկինք չի տանիր: Աստուածաչունչը կը խօսի ապահով եւ յաղթական նաւարկութեան մասին, բայց չի խօսիր խաղաղ եւ փորձանքներէ զերծ նաւարկութեան մը մասին:

## Յուլիս 6 Եկեղեցի գացողները

Եկեղեցի գացողները 3 խումբի կը բաժնուին: Առաջին խումբի մարդիկը կը կոչուին՝ «Քրիստոսի հաւատացեալներ»: ասոնք ընդհանրապէս ամէն Կիրակի եկեղեցի գացողներն են: Երկրորդ խումբի մարդիկը կը կոչուին՝ «Առիթներու հաւատացեալներ»: ասոնք նեղութեան հանդիպելէ ետք եկեղեցի գացողներն են: Իսկ երրորդ խումբի մարդիկը կը կոչուին՝ «Տօնական հաւատացեալներ»: ասոնք տօնական օրերուն միայն եկեղեցի գացողներն են: Դուն այս երեք խումբերէն ո՞ր մէկուն կը պատկանիս:

## Յուլիս 7 Ծնողներուն

Սիրելի ծնողներ, ձեր գաւակները ձեր միջոցաւ աշխարհ եկան բայց ձեզի չեն պատկանիր, այլ՝ Աստուծոյ: Անոնք նպատակով մը աշխարհ բերուեցան եւ այդ նպատակը դուք չէք ճշդած, այլ՝ Աստուած: Եւ ի՞նչ է այդ նպատակը եթէ ոչ փրկութիւնը ձեր գաւակներուն: Օգնեցէ՛ք իրենց հասնելու աստուածահաստատ իրենց նպատակին:

## Յուլիս 8 Անարդարութեան մասին

Երբ չես հասնիր ցանկացած պաշտօնիդ կամ գործիդ որուն արժանի ես, ատիկա չի նշանակեր թէ ձախող մէկն ես, այլ պարզապէս կը նշանակէ որ մարդիկ անարդար են: Զարեհ Արք. Ազնաւորեան կ'ըսէ. *«Անարդարութեամբ լի այս աշխարհէն՝ չըսպասենք արդարութիւն»:*

**Յուլիս 9**  
**(բ) Աստուած ինչի՞ կը նայի**

Աստուած ո՛չ թէ իր արքայութիւնը քարոզողներուն կը նայի, այլ՝ իր արքայութեան համար հոգեւոր պայքար մղողներուն: Աստուած ո՛չ թէ չարիք չընողներուն կը նայի, այլ՝ բարիք ընողներուն: Աստուած ո՛չ թէ չտրտնջացողներուն կը նայի, այլ՝ գոհունակ սիրտ ունեցողներուն: Աստուած ո՛չ թէ իր անունով խօսողին կը նայի, այլ՝ իր անունով սիրողին:

**Յուլիս 10**  
**Սէրը կը փոխէ մարդիկը**

Մի՛ սպասեր որ հակառակորդներդ փոխուին որպէսզի սիրես զանոնք, այլ սիրէ զանոնք՝ որպէսզի փոխուին: Յիշէ որ մենք չենք փոխուիր որպէսզի Յիսուս մեզ սիրէ, այլ Յիսուս մեզ կը սիրէ՝ անո՛ր համար է որ կը փոխուինք:

**Յուլիս 11**  
**Ճշմարտութիւնը պաշտպանելու մասին**

Երբ մէկու մը հետ կարծիքի բախում ունենաս, կարծիքդ պաշտպանելու ետեւէ մի՛ ըլլար, այլ նայիր թէ ի՛նչ է ճշմարտութիւնը: Եթէ ճշմարտութիւնը պաշտպանելու փոխարէն, դուն բու կարծիքդ պաշտպանես, կը նշանակէ թէ դուն բեզ ճշմարտութենէն վեր կը դասես: Շատ մարդիկ կան որոնք վեճի մը մէջ պարտութիւն չկրելու համար՝ ճշմարտութիւնը կ'ոտնակոխեն: Դուն այդպիսին չըլլաս:

## Յուլիս 12

### Երկինքը քեզ լա՛ւ կը ֆանջնայ

Դուն չես այն ինչ որ մարդիկ կը մտածեն կամ կ'ըսեն քու մասին: Դուն չես նաեւ այն ինչ որ կ'երեւիս մարդոց: Դուն կրնաս խաբել մարդիկը: Կրնաս ծածկել իսկական նկարագիրդ: Կրնաս բարի ու արդար ձեւանալ: Ինչ որ Աստուած ու Իր հրեշտակները գիտեն քու մասին՝ ա՛յդ ես դուն: Եւ Անոնք քեզ լա՛ւ կը ֆանջնան:

## Յուլիս 13

### Աստուածաշունչի մասին

Աստուածաշունչը չէ գրուած որպէսզի սրբագրուի մեր կողմէ, այլ՝ որպէսզի ի՛նք մեզ սրբագրէ: Աստուածաշունչը չէ գրուած որպէսզի մե՛նք հոն սխալներ գտնենք, այլ՝ որպէսզի անոր միջոցաւ մե՛ր անձերուն սխալները գտնենք: Աստուածաշունչը՝ Աստուծո՛յ գիրքն է եւ Աստուած է անոր հեղինակը: Անոր հանդէպ անյարգալից կամ անհաւատ ոեւէ կեցուածք՝ մեզ պատասխանատու կը դարձնէ Աստուծոյ դիմաց:

## Յուլիս 14

### Յիսուսն է լուծումը ամէն բանի

Կուգե՞ս մահէն չվախնալ, Յիսուսը դարձուր կեանքդ: Կուգե՞ս գործէն չվախնալ, Յիսուսը դարձուր գործակիցդ: Կուգե՞ս պատերազմէն չվախնալ, Յիսուսը դարձուր զօրավարդ: Կուգե՞ս նաւարկութենէն չվախնալ, Յիսուսը դարձուր նաւավարդ: Կուգե՞ս կեանքէն չվախնալ՝ Յիսուսը դարձուր սրտիդ բնակիչը:

### Յուլիս 15 Աշխատիլ առանց վհատելու

Միշտ չէ որ ֆրտինքիդ արդիւնքը պիտի ֆաղես, բայց առանց ֆրտինքի չես կրնար արդիւնքի հասնիլ: Միշտ չէ որ ցանածդ պիտի հնձես, բայց առանց ցանելու հունձֆ մի՛ ակնկալեր: Միշտ չէ որ պիտի աշխատիս ու վարձատրուիս, բայց առանց աշխատելու ոեւէ վարձատրութիւն մի՛ սպասեր: Երբեմն դուն պիտի աշխատիս բայց ուրիշը պիտի վարձատրուի. ա՛տ ալ Աստուծոյ կամֆն է, ֆանի վարձֆդ է որ կը մեծնայ երկինքի մէջ:

### Յուլիս 16 Ինֆնանանաչողութեան մասին

Կուգե՞ս դուն ֆեզ ցանչնալ: Դիտէ դուն ֆեզ երբ առանձին ես տունիդ մէջ, երբ մէկը չկայ շուրջդ: Ինչ որ ես առանձնութեանդ մէջ՝ այդ ես իրականութեան մէջ: Մարդոց ներկայութեան՝ ամէն մարդ գուսպ է: Մարդիկ ֆեզի կը պարտադրեն տարբեր երեւելու: Տարբեր երեւելու մէջ սիսալ բան չկայ, կարեւորը՝ կեղծաւոր իբրեւ հանդէս չգալն է:

### Յուլիս 17 Աստուած սէր է ու ողորմած

Կան մարդիկ «Աստուած սէր է» կ'ըսեն եւ իրենց ուզածը կ'ընեն: Կան ալ մարդիկ «Աստուած ողորմած է» կ'ըսեն եւ ամէն տեսակ մեղֆ կը գործեն: Այդպիսիներուն կ'ըսեմ. «Այո՛, Աստուած սէր է, բայց այդ սէրը ձեզի օգուտ մը չ'ըներ եթէ երբեք գանիկա չընդունիֆ ձեր սրտին մէջ: Աստուած ողորմած է, այո՛, բայց Աստուծոյ ողորմութիւնը ձեզի օգուտ չի բերեր եթէ երբեք չիսնդրէֆ Անոր ողորմութիւնը»:

### Յուլիս 18 Հանգամանք, գործ, գահ

Հանգամանք չէ որ արժեք կու տայ քեզի, այլ դո՛ւն  
ես որ արժեք կու տաս հանգամանքիդ: Գործդ չէ որ քեզ  
յաջող կը դարձնէ, այլ դո՛ւն ես որ գործդ յաջող կը  
դարձնես: Գահը չէ որ կարեւորութիւն կու տայ քեզի, այլ  
դո՛ւն ես որ կարեւորութիւն կու տաս գահիդ: Հետեւաբար,  
ուշադրութեան առարկան թող հանգամանքդ, գործդ ու  
գահդ չըլլան, այլ՝ անձդ, սիրտդ, վերաբերմունքդ:

### Յուլիս 19 Աստուած մե՛ծ է, քանի սէր է

Աստուած մեծ է ոչ թէ որովհետեւ Աստուած է,  
յադժող է ոչ թէ որովհետեւ ամենագոր է, Բարձրեալ կը  
կոչուի ոչ թէ որովհետեւ անհասանելի է, այլ մեծ է՝  
որովհետեւ Սէ՛ր է: Իր մեծ սէրն է որ Զինք մեծ Աստուած  
ու մեծ Փրկիչ կը դարձնէ: Քեզ ալ մեծ մարդ դարձնող  
միակ բանը՝ սէրն է:

### Յուլիս 20 Զկորսնցնել մեր համարակութիւնը

Ան որ հարստութիւն կը կորսնցնէ՝ որոշ բան մը  
կորսնցուցած կ'ըլլայ: Ան որ ընկեր կը կորսնցնէ՝ շատ  
աւելի բան կորսնցուցած կ'ըլլայ: Իսկ ան որ իր  
համարակութիւնը կը կորսնցնէ՝ ամէն բան կորսնցուցած  
կ'ըլլայ (Miguel de Cervantes): Իսկ գիտե՞ք թէ ինչ բանն է  
որ մեր համարակութիւնը կը իլէ մեր ձեռքէն: Մեր  
մեղքերը. չխոստովանուած մեղքերը:

### Յուլիս 21

#### Վերք ստացողը՝ վա՛րճֆ ալ պիտի ստանայ

Աւելի լաւ է դէմ դնել փորձութեանց եւ վիրաւորուիլ, քան խուսափիլ անոնցմէ՝ վերք չստանալու համար: Չմոռնանք որ փորձութեանց դէմ մեր մղած պայքարին ընթացքին մեր ստացած վերքերուն համար երկնային փառք ու վարճֆ պիտի ստանանք: Դուն ի՞նչ կ'ուզես: Յիսուսի համար վերք ստացող զինուոր մը ըլլալ, թէ՛ վերք չստացող: Թագաւորը վերք ստացողի՞ն աւելի կը վարճատրէ, թէ՛ վերք չստացողին:

### Յուլիս 22

#### Տէր Յիսուսի՛ն խօսիր հարցերուդ մասին

Սիրոյ մասին արտասանուած ճառ մը կրնայ ներշնչուիլ, բայց սիրոյ արարք մը կրնայ ամբողջ կեանք մը այլապէր պիտի: Անոյ՛ խօսք մը կրնայ մեծ ցաւ մը մեղմել, բայց բարի ու անոյ՛ արարք մը կրնայ ցաւը ուրախութեան փոխել:

### Յուլիս 23

#### Յիսուսի՛ խօսիր մարդոց մասին

Քարոզիչներ որպէսզի կարենան աւելի մարդիկ վաստկիլ՝ Քրիստոսի թագաւորութեան համար, պէտք է աւելի ժամանակ տան խօսելու Յիսուսի՛ մարդոց մասին, քան խօսելու մարդոց՝ Յիսուսի մասին: Մենք կրնանք մարդոց ականջներուն խօսիլ, բայց Տէրը ի՛նքն է որ անոնց սրտին կը խօսի: Ուստի երբ աղօթենք՝ Տէրը կը բանայ մեզ լսողներուն սրտի ականջները:



### Յուլիս 24

#### Սիրտդ միայն աղօթող մարդոց բաց

Եղբայրական խրատ մը բոլորիդ: Ո՛չ քու յաջողութիւններուդ եւ ո՛չ ալ քու տկարութիւններուդ մասին խօսիր այնպիսի մարդոց որոնք աղօթող չեն, որովհետեւ անոնք ոչ քու յաջողութիւններուդ համար պիտի ուրախանան, եւ ոչ ալ քու տկարութիւններուդ համար պիտի աղօթեն: Աղօթողներն են որ քեզ խոնարհ կը պահեն յաջողութիւններուդ մէջ եւ զօրաւոր՝ տկարութիւններուդ մէջ: Անոնց խօսիր՝ եթէ խօսիլ կ'ուզես:

### Յուլիս 25

#### Քու եւ ուրիշին մասին

Ինչ որ դուն չես կրնար ընել՝ չի՛ նշանակեր որ ուրիշն ալ չի կրնար ընել: Ինչ որ քեզի համար անկարելի է՝ ընդունիր որ ուրիշին համար կրնայ կարելի ըլլալ: Խոնարհ եղիր տեսնելու եւ գնահատելու ուրիշին մէջ ինչ որ դուն չունիս:

### Յուլիս 26

#### Ճշմարիտ ֆրիստոնեան

Ճշմարիտ ֆրիստոնեան կրնայ ձերբակալուիլ բայց իր ազատութիւնը չի կորսնցնէր. կրնայ մութ բանտին մէջ դրուիլ բայց իր լոյսը միշտ կը մտադառնէ. կրնայ նուաստացուիլ բայց իր մեծութիւնը միշտ կը պահէ. կրնայ չարախօսուիլ բայց իր մաքրութիւնը ակնյայտ կը մնայ. կրնայ մոլորած նկատուիլ բայց չի դադրիր առաջնորդ ըլլալէ:

### Յուլիս 27

#### Համոզուելու վտանգին մասին

Համոզուիլ որ միշտ շիտակ ես՝ շիտակ չէ: Համոզուիլ որ միշտ իրաւունքով ես՝ իրաւ չէ: Համոզուիլ որ ծափահարութիւնը միշտ քեզի համար է՝ ծափահարելի բան չէ: Համոզուիլ որ քու համոզումներդ միշտ շիտակ են՝ համոզիչ չէ: Քեզ կը հրաւիրեմ որ համոզուիս որ երբեմն ուրիշներն ալ շիտակ են:

### Յուլիս 28

#### Սեփական փորձառութեան կարելորութիւնը

Ճիշդ է որ չենք ուզեր որ մեր սիրելիները սխալին կամ անկում արձանագրեն ու ցաւին, բայց երբեմն պէտք է թոյլ տանք որ անոնք փորձառութեամբ սորվին որոշ բաներ, որովհետեւ փորձառութեամբ ձեռք ձգուածը բնաւ չի մոռցուիր եւ գանձնք աւելի տոկուն եւ ինքնավստահ կը դարձնէ:

### Յուլիս 29

#### Կատարելութիւն պահանջելու վտանգը

Կատարելութիւն մի՛ պահանջեր ո՛չ դուն քեզմէ եւ ո՛չ ալ ուրիշէն: Եթէ դուն քեզմէ կատարելութիւն պահանջես՝ ատիկա քեզ գոռոզութեան կը տանի, իսկ եթէ ուրիշէն կատարելութիւն պահանջես՝ ատիկա քեզ մարդիկը դատելու ու քննադատելու պիտի առաջնորդէ:

**Յուլիս 30**  
**Տիրոջ գործը՝**  
**Տիրոջ կամփին համաձայն կատարել**

Զի՛ բաւեր Տիրոջ գործը ընել, այլ պէտք է նայիլ որ Տիրոջ գործը՝ Տիրոջ կամփին համաձայն ընենք: Տէրը ոչ միայն գործ կը յանձնէ մեզի, այլեւ գանհկա կատարելու կերպն ալ ցոյց կու տայ:

**Յուլիս 31**  
**Սատանան միայն աղօթողէն կը վախնայ**

Սատանան չի վախնար բեզմէ եթէ եկեղեցի կ'երթաս կամ եկեղեցի կը կառուցես, եթէ Հաղորդութիւն կ'առնես կամ Հաղորդութիւն կու տաս, եթէ մոմ կը վառես կամ խունկ կը ծիսես, եթէ Աստուածաշունչ կը կարդաս կամ Աստուածաշունչը կը քարոզես, եթէ աղօթոսին կ'օգնես կամ տնագուրկին տուն կը շինես: Սատանան կը վախնայ բեզմէ միայն այն ատեն երբ Խաչեալին դիմաց ծունկի գաս ու աղօթես:

**Օգոստոս 1**  
**Տարիքով մեծ հոգեւոր մարդու մասին**

Ճշմարիտ հոգեւոր մարդը կը նմանի գինիի: Ինչպէս գինին որքան աւելի հիննայ՝ աւելի համով ու փափաքելի կը դառնայ, այնպէս ալ, հոգեւոր մարդը եւ մանաւանդ հոգեւորապէս անող մարդը որքան տարիքով մեծնայ՝ աւելի փափաքելի եւ օրհնաբեր ներկայութիւն կը դառնայ: Գիտնանք արժէքը տարիքով մեծ հոգեւորներուն: Անոնք Աստուծոյ օրհնութիւնն են երկրի վրայ:

## Օգոստոս 2

### Մի՛ պահանջեր մարդոցմէ որ քեզ սիրեն

Ձեռնար կրնար ստիպել մարդիկը որ քեզ սիրեն: Ձեռնար կրնար համոզել մարդիկը որ քեզ սիրեն: Ձեռնար խնդրել որ մարդիկը քեզ սիրեն: Դուք սիրէ մարդիկը գործովդ ու խօսքովդ, եւ քեզ սիրելու որոշումը իրենց ձգէ: Եւ միշտ յիշէ որ քու կոչումդ մարդիկը սիրելն է եւ ոչ թէ մարդոց կողմէ սիրուիլը:

## Օգոստոս 3

### Կո՛չ եկեղեցիին

Ժամանակն է որ վերադառնանք առաքելականութեան, դուրս գանք կրաւորականութենէն եւ դառնանք մարտունակ, յարձակունակ եւ աշխատունակ եկեղեցի, եւ մեր առաքելական գործը հասկնանք ու հասցնենք ո՛չ միայն եկեղեցի եկողին, այլ մանաւանդ դուրսը մնացողին, որ դժբախտաբար ամբողջութեամբ անտեսուած է (Զարեհ Արք. Ազնաւորեան):

## Օգոստոս 4

### Դրամի մասին

Մէկը հարց տուաւ. «Հաւատացեալ մը դրամատան մէջ կրնա՞յ դրամ դնել»: Պատասխանեցի. – Դրամատան մէջ դրամ դնելը մեղք չէ, բայց մեր սիրտը հոն դնելը, այո՛, մեղք է: Ան որ իր սիրտը կը կապէ դրամին՝ գայն բաժնած կ'ըլլայ Աստուծմէ եւ իր նմաններէն, որովհետեւ ան որ կը սիրէ դրամը՝ չի՛ կրնար սիրել զԱստուծոյն եւ մարդիկը:

Օգոստոս 5  
Շարժառիթներուն կարեւորութիւնը

Աստուած միայն ըրած գործերուդ պիտի չնայի, այլ նաեւ պիտի նայի թէ ի՛նչ բանը պատճառ կամ շարժառիթ եղած է որ կատարես այդ գործերը: Եթէ կատարած գործդ շիտակ գործ է բայց գործը ընելու շարժառիթը սխալ է՝ Աստուած գայն պիտի չընդունի իբրեւ շիտակ գործ եւ անոր համար վարձատրութիւն պիտի չստանաս:

Օգոստոս 6  
Մարմին, միտք, լեզու

Քու անձիդ մէջ կան երեք անգութ բոնակալներ՝ մարմինդ, միտքդ եւ լեզուդ: Կամ անոնք պիտի տիրեն վրադ եւ կամ դուն պիտի տիրես անոնց վրայ: Եթէ դուն տիրես անոնց վրայ՝ ազատ մարդ կը սեպուիս, բայց եթէ անոնք տիրեն վրադ՝ ստրուկ մարդ կը դառնաս: Ամէն կարելիդ ըրէ ննչելու այս երեք բոնակալներուն վրայ, որպէսզի կարենաս Առաքեալին հետ ըսել. *«Ինձգիմֆս սեղմումներու կ'ենթարկեմ ու կը զսպեմ»* (Ա.Կր 9.27):

Օգոստոս 7  
Յիսուսի սիրով ֆոլ-ֆոլի գալու մասին

Երկու իրարու մօտիկ անձեր ժամանակի ընթացքին իրարու թշնամի կը դառնան եթէ Յիսուսի սէրը չէ որ զիրենք ֆոլ-ֆոլի բերած է, բայց եթէ Յիսուսի սէրն է որ զիրենք ֆոլ-ֆոլի բերած է՝ ժամանակին հետ անոնց սէրը եւ անոնց մտերմութիւնն ու անկեղծութիւնը աւելի՛ կը խորանայ:

**Օգոստոս 8**  
**Աւետարանին լոյսին բերել կոյր միտքը**

Կոչուած ենք Աւետարանին աւետիսով կոյրերուն աչքերը բանալու: Արդեօք մեր վարմունքով, մեր խօսքով ու խորհուրդով կը փորձե՞նք պայքարիլ միտքերու խաւարին դէմ, պայքարիլ անհաւատութեան եւ աղանդաւորութեանց ստութեանց դէմ, այլ խօսքով՝ նշմարիտ աստուածագիտութեան լոյսի՛ն բանալ կոյր միտքը (Զարեհ Արք. Ազնաւորեան):

**Օգոստոս 9**  
**Ի՞նչ է կոչումդ**

Երբ հասնիս հաւատքի բարձունքներուն՝ մի՛ մոռնար վար եղողները: Ինչպէս կոչումդ էր բարձունքներուն հասնիլ, նոյնպէս ալ կոչումդ է վար եղողները բարձրացնել դէպի բարձունք: Յիսուս կը պատուիրէ ետիդ չնայիլ, իսկ Առաքեալը կը պատուիրէ անցեալդ մոռնալ, բայց անոնք չեն պատուիրեր որ մոռնաս ու լքես ետեւ մնացողները:

**Օգոստոս 10**  
**Ո՞վ կը նկատուի հասուն մարդ**

Աստուծոյ հայեացքով հասուն մարդիկը այն մարդիկը չեն որ երկար տարիներ ապրած են, այլ այն մարդիկը՝ որոնք հոգեւորապէս աճած են: 25 տարեկան հոգեւոր անձ մը աւելի հասուն կը սեպուի, քան 50 տարեկան մէկը որ հոգեւոր կեանք չ'ապրիր: Ուստի, հասունութիւնը Աստուծոյ հետ մեր ապրած կեանքին հետեւանքն է եւ ո՛չ թէ մեր երկարակեցութեան հետեւանքը:

## Օգոստոս 11 Իսկական ընկերը

Իրական ընկերը ֆեզի միայն յաջողութիւններուդ մասին խօսողը չէ, այլ նաեւ՝ թերութիւններուդ մասին: Բայց ան միայն թերութիւններուդ մասին խօսելով չի գոհանար, այլեւ կ'օգնէ ֆեզի ձերբագատուելու անոնցմէ:

## Օգոստոս 12 Ինքնաներումի մասին

Երբ մեղք գործես անձի մը դէմ, երեք հոգիներ կան որ պէտք է ֆեզի ներես.-

1) Աստուած ինք պէտք է ֆեզի ներէ:

2) Անձը որուն դէմ մեղք գործեցիր պէտք է ֆեզի ներէ:

3) Եւ դուն ֆեզի պէտք է ներես:

Երբորդը ամենէն դժուարն է: Եթէ դուն ֆեզի ներել չտրվիս՝ ո՛չ Աստուծոյ ներումը եւ ո՛չ ալ մարդոց ներումը կրնան խաղաղութիւն տալ ֆեզի:

## Օգոստոս 13 Արտաքին երեւոյթներէն չդատենք

Եթէ մէկը մօտիկ է ֆեզի՝ չի նշանակեր որ ֆեզ կը սիրէ, եւ եթէ մօտիկ չէ ֆեզի՝ չի նշանակեր որ չի սիրեր: Եթէ կը ժպտայ ֆեզի՝ չի նշանակեր որ բարեկամ է, եւ եթէ չի ժպտար՝ չի նշանակեր որ թշնամի է: Եթէ շիտակ խրատ կու տայ ֆեզի՝ չի նշանակեր որ շիտակ մարդ է, եւ եթէ խրատ չի տար՝ չի նշանակեր որ գէշ մարդ է: Սիրտերը ֆննողը Աստուած է:

**Օգոստոս 14**  
**Խնդրանքներու մասին**

Եթէ ամէն խնդրածդ տրուէր՝ քեզի՝ ի՞նչ վարձք պիտի ստանայիր: Եթէ ամէն խնդրածդ անմիջապէս առնէիր՝ ի՞նչպէս համբերել պիտի սորվէիր: Եթէ բոլոր խնդրանքներդ ստանայիր՝ հիմա ի՞նչ խնդրանք պիտի ունենայիր: Եւ եթէ խնդրանք չունենայիր՝ ի՞նչպէս դուն քեզ Աստուծոյ կախեալ պիտի գգայիր:

**Օգոստոս 15**  
**Անում՝ դժուարութեանց ընդմէջէն**

Զարմանալի են մարդիկ: Կ'ուզեն անիլ իրենց հոգեւոր կեանքին մէջ բայց չեն ուզեր դժուարութիւններու հանդիպիլ: Բայց կարելի՞ է հոգեւոր անում ունենալ առանց անցնելու դժուարութեանց կրակներէն: Կրակը չէ՞ որ կը մաքրէ ոսկին: Ինչո՞ւ վախնալ կրակէն երբ անոր նպատակը մեզ մաքրելն է եւ ոչ թէ կործանելը:

**Օգոստոս 16**  
**Փորձառաքար կ'ըսեմ...**

Սիրտդ մի՛ բանար մէկու մը առջեւ որ իր սիրտը չէ բացած Տիրոջ առջեւ: Մտահոգութիւններուդ մասին մի՛ պատմեր մէկու մը որ իր մտահոգութիւնները չէ յանձնած Յիսուսի: Այսպիսի մարդոց խօսիլը քեզի աւելի վնաս կը բերէ քան օգուտ, որովհետեւ անոնք աղօթող չեն, զԱստուծոյ օգնութեան կանչող չեն, Աստուծոյ համար անոնց ձայնը խորթ է:



### Օգոստոս 17

#### Ի՞նչ կը մտածես դու ինչ ֆու մասիդ

Երբ առանձնանաս սենեակիդ մէջ, մի՛ մտածեր մարդոց կողմէ ֆու մասիդ ըսուած խօսքերուն եւ ֆեզի տրուած գնահատանքին մասին, այլ դու ինչ ֆեզ ֆենէ եւ տես թէ դո՛ւն ինչ կը մտածես դու ինչ ֆու մասիդ: Քու մասիդ ամենէն շիտակ կարծիքը՝ ֆու կարծիք է, որովհետեւ ուրիշներ կրնան ֆեզ լաւ չնանչնալ եւ ուստի սխալ կարծիք տալ, բայց դու ինչ ֆեզ՝ լաւ կը նանչնաս:

### Օգոստոս 18

#### Փորձութեան մասին

Փորձութիւնը ըստինքեան բարի բան մը չէ, բայց անոր յաղթողը երկինքի բարութիւնը պիտի ժառանգէ: Փորձութիւնը ֆաղցր բան մը չէ, բայց անոր յաղթողը Յիսուսի ֆաղցր դէմքը պիտի տեսնէ: Փորձութիւնը կը տառապեցնէ, բայց կ'առաջնորդէ երկինք ուր տառապանք չկայ:

### Օգոստոս 19

#### Ինչ որ պիտի ընես՝ ամբողջ սրտովդ ըրէ

Երբ պիտի աղօթես՝ կրակի հնո՛ց եղիր: Երբ պիտի ներես՝ անծայրածիր ովկիանո՛ւ եղիր: Երբ պիտի սիրես՝ հրաբո՛ւխ եղիր: Երբ պիտի համբերես՝ անհուն երկինքներու պէս եղիր: Երբ պիտի տոկաս՝ անասան ապառա՛ծ եղիր: Երբ պիտի բաշխես՝ առատահոս գե՛տ եղիր:

**Օգոստոս 20**  
**Բարին ցանկալ ուրիշին**

Ի՞նչ կը ցանկաս ուրիշին համար: Բարի՞ բան, թե՛ գէշ բան: Կ'ուզե՞ս Աստուած տայ քեզի ինչ որ ուրիշին համար կը ցանկաս: Ըսէ՛ ինձի, ի՞նչ կացութեան կամ ի՞նչ վիճակի մէջ պիտի ըլլայիր եթէ Աստուած քեզի տար ինչ որ ուրիշին համար կը ցանկաս:

**Օգոստոս 21**  
**Շահած ատենդ՝ չկորսնցնես**

Մի՛ նայիր թէ ի՞նչ կը շահիս, այլ՝ նայիր թէ շահած ատենդ ի՞նչ կը կորսնցնես: Կրնաս դրամ շահիլ բայց հոգիդ կորսնցնել: Կրնաս վէճ մը շահիլ բայց եղբայր մը կորսնցնել: Կրնաս դատ մը շահիլ բայց զԱստուած իբրեւ փաստաբանդ կորսնցնել: Կրնաս տուն մը շահիլ բայց դրացի մը կորսնցնել: Կրնաս գործ մը շահիլ բայց գործակից մը կորսնցնել:

**Օգոստոս 22**  
**Փոքր գործերուն կարեւորութիւնը**

Փառասիրութիւնը թոյլ չի տար որ փոքր գործերուն մէջ յաջողինք: Անոնք որոնք մեծ գործեր ընելու ախտէն կը տառապին՝ կը կորսնցնեն փոքր գործեր ընելու գեղեցիկ առիթները: Եկեղեցի մը կառուցելը՝ մեծ գործ է, բայց կորսուած մը եկեղեցի առաջնորդելը՝ աւելի՛ մեծ գործ է:

Օգոստոս 23  
Բոլոր մարդիկ պետք ունին Յիսուսի

Ամեն մարդ պետք ունի Տիրոջ փրկարար շնորհին: Եթե մեղքերս շատ են եւ եւս մեղքերդ՝ քիչ, այդ չի նշանակեր թէ ես աւելի՛ պետք ունիս Յիսուսին քան դու: Ամենէն մահուր եւ ամենէն մեղաւոր մարդիկ հաւասարապէս պետք ունին Յիսուսի:

Օգոստոս 24  
Մեր յաջողութիւնը՝ մեր նիգին արդիւնքը չէ

Շատ աղօթելով չէ որ կ'անինք, այլ՝ սրտանց աղօթելով: Շուտ վագելով չէ որ կը հասնինք, այլ՝ երբեմն սպասել սորվելով: Տառապանքի հանդիպելով չէ որ կը տաշուինք, այլ՝ տառապանքի համբերելով: Շատ ցանցելով չէ որ շատ կը հնձենք, այլ՝ Տիրոջ այգիի՛ն մէջ ցանցելով:

Օգոստոս 25  
Համբերութեան նպատակը

Համբերել՝ չի նշանակեր սպասել որ Աստուած հարուածէ մեր հակառակորդները, այլ՝ աղօթել անոնց համար, եւ համբերութեամբ սպասել անոնց դարձին ու փրկութեան համար: Մեր համբերութեան նպատակը՝ մեր հակառակորդին կորուստը պետք չէ ըլլայ, այլ՝ անոր փրկութիւնը:

Օգոստոս 26  
Տէր, խօսի՛ր բերնովս

Քարոզիչներ հետեւեալը պէտք է ըսեն քարոզելէ առաջ. *«Ո՛վ Տէր, խօսի՛ր դիր բերնիս մէջ: Տէ՛ր, երբ բերանս բանամ խօսի՛ր քարոզելու՝ Դուն ալ զիս լսողներուն սիրտը բաց: Երբ խօսիմ՝ մարդոց՝ Դո՛ւն ալ խօսիր անոնց, որպէսզի մարդոց սրտին մէջ տեղ գտնէ պատգամը»*: Ան որ իր քարոզը կը պատրաստէ ու կը փոխանցէ առանց աղօթքի, կը նմանի այն մարդուն որ ձուկ բռնելու համար պատռտած ուռկան կը նետէ ծովուն մէջ, որուն մէջ չեն կրնար ձուկեր բռնուիլ:

Օգոստոս 27  
Նոր բաներ սորվեցայ (Ա.)

Առաջ կը կարծէի որ եթէ ինձ գինֆու պաշտպանեմ՝ կրնամ յաղթել, իսկ հիմա սորվեցայ որ դատս Աստուծոյ յանձնելով է որ կը յաղթեմ: Առաջ կը կարծէի որ եթէ ինձ գինֆու պատժեմ՝ գե՛րծ պիտի ըլլամ աստուածային պատիժէն, իսկ հիմա սորվեցայ որ Յիսուսը սրտիս մէջ ընդունելով՝ միայն գերծ կ'ըլլամ աստուածային պատիժէն:

Օգոստոս 28  
Դժուարութեան յաղթելու մասին

Հիդեմակ մը ըսած է. *«Տեսնել դժուարութիւնը եւ ուրանալ գայն՝ կուրութիւն է: Տեսնել դժուարութիւնը եւ խուսափիլ անկէ՝ ճարպիկութիւն է: Իսկ տեսնել դժուարութիւնը ու երթալ եւ Քրիստոսի անունով յաղթել անոր՝ քաջութիւն է»*:

Օգոստոս 29  
Մեծ հոգի ունեցող մարդը

Երբ գորաւոր փափաք ունինք մեծ գործեր ընելու՝ ատիկա ցոյց կու տայ մեր հոգիին փոքրութիւնը, իսկ երբ գոհ եւ ուրախ ենք փոքր գործեր կատարելով՝ ատիկա ցոյց կու տայ մեր հոգիին մեծութիւնը: Հետեւաբար, մարդուն հոգիի մեծութիւնը չի կայանար իր կատարած մեծ գործերուն մէջ, այլ՝ փոքր գործերը սիրով, ուրախութեամբ եւ յօժարութեամբ իր կատարելուն մէջ:

Օգոստոս 30  
Նոր բաներ սորվեցայ (Բ)

Առաջ կը կարծէի որ պէտք է պայքարիմ՝ վստահելով Աստուծոյ, բայց փորձառաբար սորվեցայ որ Աստուծոյ վստահելով՝ պէտք է պայքարիմ: Բայց նաեւ սորվեցայ, որ շատ մը պարագաներու, պէտք չէ պայքարիմ, այլ պարգապէս պէտք է յանձնուիմ Տիրոջ, քանի պայքարիլը՝ մեր ոյժին վստահիլ է, մինչդեռ յանձնուիլը՝ Տիրոջ վստահիլ է:

Օգոստոս 31  
Բամբաստելու մասին

Երբ գէշ բան մը ընես ու բամբասուիս՝ ատոր մէջ սխալ բան մը չկայ: Երբ առանց բան մը ընելու բամբասուիս՝ ատոր ալ մէջ սխալ բան մը չկայ: Իսկ երբ լաւ բան ընես ու բամբասուիս՝ ատոր մէջ ամէն տեսակի օրհնութիւններ կան վերապահուած քեզի համար երկինքի մէջ:

## Սեպտեմբեր 1 Աղօթքը կը փոխէ

Աղօթքը կրնայ չփոխել կացութիւններն ու պայմանները քեզի համար, բայց կրնայ քեզ փոխել կացութեանց ու պայմաններուն համար (Samuel M. Shoemaker): Երբ աղօթես քեզ ատող մարդուն համար՝ կրնայ ան չփոխուիլ, բայց դուն պիտի փոխուիս եւ պիտի սկսիս սիրել քեզ ատողը: Մի՛ աղօթեր մէկու մը համար որուն կ'ատես. նախ աղօթէ ու խնդրէ Տիրոջմէն որ օգնէ քեզի որ սիրես քեզ ատողը. անկէ ետք աղօթէ:

## Սեպտեմբեր 2 Ի՞նչ բանի կը հաւատաս

Զգոյշ եղիր թէ ի՞նչ բանի կը հաւատաս, որովհետեւ մարդ ինչ բանի որ հաւատայ՝ այդ բանին համար է որ կը պայքարի: Եթէ հաւատաս աշխարհին՝ աշխարհի համար պիտի պայքարիս, իսկ եթէ հաւատաս որ դուն երկինքի համար ստեղծուած ես՝ երկինքի համար պիտի պայքարիս:

## Սեպտեմբեր 3 Ճամբա՞յ կը փնտոտես, թէ՛ պատրուակ

Եթէ ուզես Տէր Յիսուսի հետեւիլ՝ Յիսուս անպայման նամբան ցոյց պիտի տայ քեզի, իսկ եթէ չուզես հետեւիլ՝ պիտի գտնես պատճառներ ու պատրուակներ: Դուն ի՞նչ կը փնտոտես. Յիսուսի հետեւելու նամբա՞յ, թէ՛ պատրուակներ չհետեւելու համար:

#### Սեպտեմբեր 4 Շնորհակալ ըլլալու մասին

Սովորաբար մարդիկ շնորհակալ կ'ըլլան Աստուծոյ երբ Ան ազատէ զիրենք դժուարին պահէ մը: Այսօր քեզ կը հրաւիրեմ որ շնորհակալ ըլլաս Աստուծոյ քեզի պատահող դժուարին պահերուն համար, եւ համբերես այդ պահերուն, որովհետեւ նիշդ այդ պահերն են որ որ քեզ կը սրբեն ու կը սրբացնեն:

#### Սեպտեմբեր 5 Սէրը կը գերազանցէ բոլոր միւս առաքինութիւնները

Սէրն է ապացոյցը որ մենք Քրիստոսի աշակերտներն ենք (Յե 13.35): Սէրն է ապացոյցը որ մենք մահէն կեանքի անցած ենք (Ա.Յե 3.14): Սէրն է առաջին պտուղը Սուրբ Հոգիին (Գղ 5.22): Սիրոյ նամբան՝ լաւագո՛յն նամբան է (Ա.Կր 12.31): Սէրը ամենէն մեծ առաքինութիւնն է (Ա.Կր 13.13): Սիրել՝ կը նշանակէ Աստուծոյ Օրէնքը լման գործադրել (Հո 13.10):

#### Սեպտեմբեր 6 Հոգեւոր հասունութիւն

Երբ խակ հոգեւոր էի՝ կը խնդրէի որ Աստուած օգնէ ինծի գործս կատարելու: Երբ քիչ մը հասունացայ՝ սկսայ խնդրել որ ես օգնեմ Իրեն՝ իր գործը կատարելու: Իսկ երբ աւելի հասունացայ՝ սկսայ Իրմէ խնդրել որ իր գործը կատարէ իմ միջոցաւ (Hudson Taylor):

### Սեպտեմբեր 7 Եղի՛ր գորաւոր

Եղի՛ր գորաւոր որպէսզի կարենաս տոկալ աշխարհի դժուարութեանց դիմաց, բայց դուն քեզ մի՛ սեպեր ա՛յնքան գորաւոր՝ որ սկսիս կարծել կամ մտածել թէ ամէն բան կրնաս ընել ու տանիլ քու սեփական ուժովդ:

### Սեպտեմբեր 8 Իմաստուն ըլլալու մասին

Խաբեքաներով լեցուն այս աշխարհին մէջ, Քրիստոսի հետեւորդը պէտք է ըլլայ իմաստուն որպէսզի չխաբուի, բայց պէտք չէ ըլլայ այնպիսի՝ իմաստուն մը՝ որ ի՛նք խաբէ ուրիշին:

### Սեպտեմբեր 9 Ինքնավստահութեան մասին

Շատ լաւ բան է ինքնավստահութիւնը, որովհետեւ ատիկա մեզ կը մղէ համարձակութեամբ գործելու Տիրոջ այգիին մէջ: Բայց չափազանցուած ինքնավստահութիւնը շատ վտանգաւոր բան է, որովհետեւ ատիկա մեզ կ'առաջնորդէ Աստուծմէ աւելի մեր անձերուն վստահելու եւ ատիկա պատճառ կ'ըլլայ որ Աստուած առանձին թողու մեզ մեր պայքարին մէջ:



Սեպտեմբեր 10  
Եղի՛ր... , բայց...

Եղի՛ր վեհանձն, բայց ուրիշները անարգ մի՛ սեպեր: Եղի՛ր պատրաստ, բայց ուրիշներուն ալ առիթ տուր: Եղի՛ր ողորմած բայց ուրիշը ողորմելի մի՛ նկատեր: Եղի՛ր բարի բայց դուն քեզ ուրիշէն լաւ մի՛ սեպեր: Եղի՛ր իմաստուն բայց ուրիշը տգէտ մի՛ համարեր:

Սեպտեմբեր 11  
Զագդուիլ, ազդելու համար

Աստուծոյ կամքն է որ հասնիս այնպիսի մակարդակի մը որ ալ չազդուիս քու շրջապատէդ, այլ՝ դո՛ւն ազդես շրջապատիդ վրայ: Այնքան ատեն որ կ'ազդուիս շրջապատէդ՝ չես կրնար Տիրոջ կամքին համաձայն ազդել շրջապատիդ վրայ:

Սեպտեմբեր 12  
Աստուծոյ նպատակը

Միշտ յիշէ որ Աստուծոյ նպատակը դժուարութիւնները քեզմէ կամ քեզ դժուարութիւններէ հեռացնելը չէ, այլ դժուարութիւններուն մէջ եւ անոնց միջոցաւ քեզ կերտելն է եւ իր Որդիին ամուր նկարագիրը քու մէջդ հաստատելն է:

Սեպտեմբեր 13  
Սրբութիւն՝ համբերութեամբ

Սիրելի կամ սիրուիլը չէ որ քեզ կը սրբացնեն, ո՛չ ալ երկար աղօթելը, ո՛չ ալ Աստուածաշունչ կարդալը, ո՛չ ալ եկեղեցի երթալը, ո՛չ ալ քարոզ տալը, ո՛չ ալ Յիսուսի անունով հրաշքներ գործելը: Միակ բանը որ քեզ կը սրբացնէ՝ կեանքի տառապանքները սիրով, համբերութեամբ, լուսութեամբ եւ աղօթքով տանիլն է:

Սեպտեմբեր 14  
Աստուծոյ եւ Մարդուն տարբերութիւնը

Թ՛էպէտ յանախ ապերախտ դուրս կու գանք՝ բայց Աստուած կը շարունակէ գործակցիլ մեր հետ, իսկ մենք, հակառակ Աստուծոյ հաւատարիմ ըլլալուն՝ շատ յանախ կը մերժենք կամ կը վախճանք գործակցիլ Իրեն հետ:

Սեպտեմբեր 15  
Ի՞նչ է հերոսութիւնը

Անհաւատութեամբ լի այս աշխարհին մէջ հաւատքի վկայ դառնալը՝ հերոսութի՛ւնն է: Մեղքի խաւարով պատւած այս աշխարհին մէջ Յիսուսի լոյին ջահակիրը դառնալը՝ հերոսութի՛ւնն է: Քրիստոսը ուրացող այս աշխարհին մէջ Քրիստոսը դաւանիլը եւ Անոր հետեւիլը հերոսութի՛ւնն է: Երկինքը նման հերոսներու տե՛ղն է, հերոսներո՛ւն համար է: Դուն այդ հերոսներէն եղի՛ր:

Սեպտեմբեր 16  
Մեր նպատակը...

Ճշմարիտ ապաշխարութիւնը մեզ երկինք կը մտցնէ, բայց մեր նպատակը պարզապէս երկինք մտնելը պէտք չէ ըլլայ, այլ սո՛ւրբ ըլլալ եւ այդպէս երկինք մտնել: Եթէ առանց սուրբ ըլլալու երկինք մտնես՝ երկինքի մէջ Յիսուսի հետ պիտի չունենաս այն մտերմութիւնը զորս ունենալու համար ստեղծուած ես, եւ ո՛չ ալ յարուցեալ մարմինդ պիտի ունենայ այն փառքն ու շքեղութիւնը որ քեզի համար վերապահուած են:

Սեպտեմբեր 17  
Ի՞նչ է ողորմութիւնը

Ողորմութիւնը ուրիշին միայն դրամ կամ ուտելիք տալը չէ: Մեր ժպիտով անյոյս մարդուն յոյս տալը՝ ողորմութի՛ւն է: Սուգի մէջ եղողին Տիրոջ ուրախութիւնը փոխանցելը՝ ողորմութի՛ւն է: Գայթակղածը վերականգնելը՝ ողորմութիւն է: Դժոխքի ցամաքն բուսածները Յիսուսի ցամաքն բերելը՝ մեծագոյն ողորմութիւնն է:

Սեպտեմբեր 18  
Երկու կերպ մտածումներ

Ընդունիր ինձմէ հետեւեալ խրատը: Մի՛ մտածեր որ եթէ Քրիստոսի յանձնուիս՝ տառապանքով պիտի լեցուի կեանքդ, ո՛չ ալ մտածէ որ եթէ Քրիստոսի յանձնուիս՝ տառապանքները քեզմէ հեռու պիտի մնան: Այս երկու մտածումներն ալ Չարէն են: (Շարունակելի):

Սեպտեմբեր 19  
Զգո՛յ՛ջ եղիր թէ ի՞նչ կ'ակնկալես

Եթէ Քրիստոսի յանձնուելէ ետք տառապանքով լեցուն կեանք մը ակնկալես՝ կեանքիդ մէջ ամէն ինչ եւ ամէն մարդ թշնամի ու հալածիչ պիտի տեսնես: Իսկ եթէ Քրիստոսի յանձնուելէ ետք առանց տառապանքի կեանք մը ակնկալես՝ ատիկա կրնայ պատճառ դառնալ որ սկսիս կասկածիլ Աստուծոյ սիրոյն ու գթութեան երբ տառապանքները ներկայանան:

Սեպտեմբեր 20  
Արքայութեան ցամբան դժուարին է

Մի՛ հաւատաք անոնց՝ որոնք կը դիրացնեն արքայութեան ցամբան: Երբ «Ես եմ... դուռը» (Յհ 10.7) ըսողը կը հաստատէ թէ արքայութեան «դուռը նեղ» է (Մտ 7.14), եւ երբ «Ես եմ ցամբան» (Յհ 7.14) ըսողը կը հաստատէ թէ արքայութեան «ցամբան դժուարին» է (Մտ 7.14), մենք ինչո՞ւ չհաւատանք Իրեն եւ ինչո՞ւ արքայութիւն մտնելու համար դիրին ցամբաներ ու լայն դռներ փնտռենք:

Սեպտեմբեր 21  
Եղի՛ր արշալոյսի ու ձիւնի նման

Եղի՛ր արշալոյսի նման որ թէպէտ մէկը իրմէ չի խնդրեր հանդէս գալ, բայց ինք կու գայ ու իր լոյսը կը սփռէ նոյնիսկ չարիք գործողներուն վրայ: Եղի՛ր ձիւնի նման, որ թէպէտ կ'իջնէ ու կը հանգչի երբեմն տգեղ առարկաներու վրայ, բայց երբեք իր գեղեցկութիւնը չի կորսնցնէ:

**Սեպտեմբեր 22**  
**Կոչուած ենք ապրելու «որումներու» մէջ**

Յիսուս իր հետեւորդները նմանցուց որումի մէջ նետուած ցորենի, ցոյց տալու համար որ կոչուած ենք ապրելու մեր թշնամիներուն ու մեզ ատողներուն հետ եւ անոնց միջեւ: Յիշեցէք որ Յիսուս շրջապատուած էր ռիսերիմ Փարիսեցիներով, անհաւատ Սադուկեցիներով, կասկածամիտ Թովմասներով, դաւաճան Յուդաններով, ուրացող Պետրոսներով, թերահաւատ «եղբայրներով»:

**Սեպտեմբեր 23**  
**Եղիբ մումի, գոհարի, աստղի ու վարդի նման**

Եղիբ մումի նման որ կը հալի լո՛յս տալու համար շուրջիներուն: Եղիբ գոհարի նման որ նոյնիսկ եթէ ցելի մէջ նետուի՝ իր արժէքը չի կորսնցնէր: Եղիբ աստղերու նման որոնք թէպէտ երկինքի մութին մէջ կը բնակին, բայց չեն կորսնցնէր իրենց փայլքը: Եղի՛ր փուշերով շրջապատուած բուրբան վարդի նման որ երբեք իր գեղեցկութիւնն ու անուշահոտութիւնը չի կորսնցնէր:

**Սեպտեմբեր 24**  
**Հոգեւոր ան եւ Սրբութիւն**

Հոգեւորապէս անիլը ուրիշ բան է, սրբութեան հասնիլը՝ ուրիշ բան: Մենք չենք կրնար սրբութեան հասնիլ առանց հոգեւորապէս անելու: Ի՞նչպէս կրնանք հոգեւորապէս անիլ եւ ի՞նչպէս՝ սրբութեան հասնիլ: Հոգեւորապէս կ'անինք՝ աղօթքով, իսկ սրբութեան կը հասնինք՝ մեղքին յաղթելով: Այս երկուքը իրարմէ անբաժան են: (Շարունակելի):

Սեպտեմբեր 25  
Աղօթքն է որ ոյժ կու տայ...

Թախանձագին աղօթքի պահերը մեզ հոգեւորապէս կ'անեցնեն եւ կը գորացնեն մեր հաւատքը, եւ այդ հոգեւոր անն ու հաւատքի գորութիւնն է որ մեզ կարող կը դարձնեն յաղթելու մեղքին: (Շարունակելի):

Սեպտեմբեր 26  
Աղօթքով մաքրուած սիրտը՝ կը մերժէ մեղքը

Աղօթքը կը մաքրէ մեր սիրտն ու հոգին, իսկ մեր սրտի ու հոգիի մաքրութիւնը՝ դէմ կը դնէ մեղքին. մեղքին դէմ ցուցաբերուած այդ դիմադրութիւնն է որ մեզ սրբութեան եւ Աստուծոյ Որդիին նմանութեան կ'առաջնորդէ: Բայց եթէ աղօթքով մեր սիրտն ու հոգին չեն բիրեղացած՝ անոնք դէմ չեն դնեն եւ ոչ ալ կրնան դէմ դնել մեղքին: Աղօթքով մաքրուած սիրտն է միայն որ կը մերժէ մեղքը:

Սեպտեմբեր 27  
Նախանձախնդրութիւն

Մարդիկ կը պայքարին Աստուածաշունչին այս կամ այդ հարցին գծով իրենցմէ տարբեր մտածող անձերուն դէմ եւ այդ պայքարը կ'անուանեն՝ «աստուածային նախանձախնդրութիւն»: Կը պայքարին անարդար մարդոց դէմ եւ այդ պայքարը կը կոչեն՝ «նախանձախնդրութիւն»: Ասիկա նախանձախնդրութիւն չէ, այլ՝ մեր բնաւորութեան պայքարը: Աստուծոյ պահանջած իսկական նախանձախնդրութիւնը Յիսուսի սիրով շահուած պէտք է ըլլայ:

**Սեպտեմբեր 28**  
**Աստուծոյ եւ մարդոց տարբերութիւնը**

Հակառակ մեր տկարութեան՝ Աստուած կը վստահի մեզի, իսկ մենք, հակառակ Իր գորութեան՝ չենք վստահիր Իրեն: Տէ՛ր, սորվեցուր մեզի վստահիլ Քեզի եւ յիշեցուր մեզի որ Դուն ամէն իրաւունք ունիս չվստահելու մեզի:

**Սեպտեմբեր 29**  
**Երկու տեսակ ազնուութիւն**

Երկու տեսակ ազնուութիւն կայ: Մէկը Սուրբ Հոգիին պտուղն է (Գղ 5.22), իսկ երկրորդը, կրնայ մարդկային բնաւորութեան արդիւնքը ըլլալ: Բնաւորութեամբ ազնիւ եղող մը՝ մարդիկը կը սիրաշահի իրեն համար, իսկ Սուրբ Հոգիին ազնուութեան պտուղը ունեցող մը՝ մարդիկը կը սիրաշահի Յիսուսի համար:

**Սեպտեմբեր 30**  
**Փրկութիւն եւ վարձատրութիւն**

Ժրաջանօրէն աշխատէ Տիրոջ դաշտին մէջ, որպէսզի Տէրը քեզ առատապէս վարձատրէ, բայց բնաւ մի՛ խորհիր որ ժրաջան աշխատանքովդ կրնաս փրկութիւն ձեռք ձգել: Փրկութիւնը հետեւանքը պիտի ըլլայ հաւատփիդ, իսկ վարձատրութիւնը՝ գործիդ ու աշխատանքիդ, հարկաւ եթէ այդ գործն ու աշխատանքը Տիրոջ դաշտին մէջ եւ Տիրոջ փառքին համար կատարուած ըլլան:

### Հոկտեմբեր 1

#### Միտքի նորոգութեան մասին

Սուրբ Հոգիին հպումով մեր փրկութեան հիմնաքարը կը դրուի, բայց այդ հիմնաքարին վրայ տակաւին ամբողջ շէնք մը կայ գոր պէտք է կառուցուի: Հոգեւոր այդ շէնքին կառուցումը չ'ըլլար առանց մտքի նորոգութեան, իսկ մտքի նորոգութիւնը՝ մեր մտածումներն ու մտածելակերպը Աստուծոյ մտածումներով ու մտածելակերպով փոխանակելն է: Այդ փոխանակումը կատարողը Սուրբ Հոգին է:

### Հոկտեմբեր 2

#### Նկարագիրի մասին

*«Եթէ մէկը քսակս գողնայ՝ հոգ չեմ ընել, որովհետեւ ան ուրիշին էր, իմս եղաւ եւ դարձեալ ուրիշին կը փոխանցուի. բայց երբ մէկը նկարագիրս գողնայ՝ այդ իմ բարոյական մահս է»* (Շէյքսպիր): Ուստի, զգոյշ ըլլանք սիրելիներ մարդոց մասին գէշ բան խօսելու: Անոնց մասին գէշ բան խօսիլը՝ զանոնք բարոյապէս սպաննել է:

### Հոկտեմբեր 3

#### Յարձակի՛ր Սատանային վրայ

Խաչը ձեռքիդ, կատա՛ղորէն յարձակի՛ր Սատանային վրայ, եւ հաւատայ, որ ան նահանջ պիտի արձանագրէ կեանքէդ: Աղօթէ՛ եւ աղօթքովդ խաչէ՛ գայն, եթէ ոչ ա՛ն քեզ պիտի խաչէ: Յիշէ որ Աստուած կողմիդ է, բայց Սատանան մէկը չունի իր կողմին: Ոեւէ մէկը երկինք չէ մտած ու դուն ալ պիտի չկրնաս մտնել առանց Սատանային յաղթելու:



**Հոկտեմբեր 4**  
**Ողորմութիւն տալու կերպին մասին**

Աղֆատին շատ տուողը՝ շատ պիտի չվարձատրուի, եւ  
ն'չ ալ քիչ տուողը՝ քիչ պիտի վարձատրուի: Աստուած  
տրուածին չափին պիտի չնայի, այլ՝ տուող անձի սրտին:  
Աստուած ողորմութիւն տուողին մէջ երեք բաներ պիտի  
փնտռէ.– 1) Սիրով տալու արարք: 2) Յօժարութեամբ  
տալու արարք: 3) Եւ աղֆատին հանդէպ եղբայրական  
մօտեցում:

**Հոկտեմբեր 5**  
**Սրտիդ մասին**

Աստուծոյ համար քու սիրտդ աւելի արժէք ունի քան  
աշխարհի բոլոր եկեղեցիներն ու տաճարները: Քու սիրտդ  
աւելի թանկագին է քան երկինքը, որովհետեւ Յիսուսի  
արիւնով սիրտդ դարձաւ այն նո՛ր երկինքը ուր Յիսուս  
հանգչիլ կը փափաքի:

**Հոկտեմբեր 6**  
**Ամենէն թանկագին նուէրը՝ Յիսո՛ւս է**

Բան մը որ ուրիշին տաս՝ կը դադրի սեփականու-  
թիւնդ ըլլալէ: Միակ նուէրը որ կրնաս ուրիշին տալ եւ  
շարունակել գայն քովդ ունենալ՝ Յիսո՛ւս է: Նուէր մը  
պաշտելը մե՛ղք է, բայց միակ նուէրը գոր կրնաս պաշտել՝  
Յիսո՛ւս է: Միակ նուէրը որ յաւիտենական է՝ Յիսո՛ւս է:  
Միակ նուէրը որ նաեւ նուիրատուն է՝ Յիսո՛ւս է:

Հոկտեմբեր 7  
Երեւութական հաւատք

*«Ես իմ կեանքս մաքուր կ'ապրիմ, դատաստանը Աստուծոյ կը ձգեմ»:* Երեւութապէս կրնայ թուիլ որ այս խօսքը հաւատացեալ մարդու խօսք է, եւ սակայն, ասիկա անհաւատ մարդու խօսք է, փրկութեան վստահութիւն չունեցող մարդու խօսք է, Յիսուսի հետ բնաւ ֆաղցր յարաբերութիւն չունեցած մարդու խօսք է: Տիրոջ հետեւորդ մը գիտէ որ ինք ազատագրուած է դատաստանի ահէն:

Հոկտեմբեր 8  
Աղօթեմք որպէսզի փորձութեան մէջ չիյնանք

*«Արթուն մնացէ՛ք եւ աղօթեցէ՛ք, որպէսզի փորձութեան մէջ չիյնաք»* (Մտ 26.41): Յիսուս չ'ըսեր. «Որպէսզի փորձութեան չենթարկուիք», այլ՝ «Որպէսզի փորձութեան մէջ չիյնաք»: Ամէն հաւատացեալ փորձութեան անպայման պիտի ենթարկուի, ինչպէս Յիսուս ինք ենթարկուեցաւ, բայց Յիսուս փորձութեան մէջ իյնալէ, այլ խօսքով՝ մեղքի մէջ իյնալէ է որ մեզ կը զգուշացնէ: (Շարունակելի):

Հոկտեմբեր 9  
Աղօթքով զինուիմք պատերազմի երթալէ առաջ

Յիսուս կը պատուիրէ աղօթել որպէսզի փորձութեան մէջ, այլ խօսքով՝ մեղքի մէջ չիյնանք: Անոնք որոնք փորձութեան մէջ, այլ խօսքով՝ մեղքի մէջ իյնալէ ետք կ'աղօթեն, կը նմանին այն մարդոց որոնք պատերազմի երթալէ ետք՝ կը սկսին զենք ու փամփուշտ փնտռել: Այսպիսի մարդոց պարտութիւնը անխուսափելի կ'ըլլայ:

**Հոկտեմբեր 10**  
**Աստուծմէ՛ Աստուա՛ծ ուզէ**

Մի՛ խնդրե՛ր Աստուծմէ՛ որ գորութի՛ւն տայ քեզի, այլ խնդրէ՛ որ գայ եւ գորութիւնդ ըլլայ: Աստուած լոկ գորութիւն շնորհող մը չէ, այլ՝ շնորհուած գորութիւնն իսկ: Աստուած սրտիդ պատասխան հայթայթող մը չէ, այլ սրտիդ պատասխանն իսկ: Երբ աղօթես, մի՛ ուզեր Իրմէ, այլ՝ Զինք ուզէ:

**Հոկտեմբեր 11**  
**Եկեղեցի յանախողներուն համար**

Առանց եկեղեցի երթալու կարելի չէ ֆրիստոնեայ սեպուիլ, բայց եկեղեցի երթալն ալ մեզ ֆրիստոնեայ չ'ըներ հարկաւ: Ինչպէս հիւանդանոց երթալով բժիշկ չենք ըլլար, կամ պարտէզ երթալով պարտիզպան չենք ըլլար, այնպէս ալ, եկեղեցի երթալով ֆրիստոնեայ չենք ըլլար: Եկեղեցի երթալէ ետք՝ հոն պէտք է Աստուծոյ հանդիպինք:

**Հոկտեմբեր 12**  
**Տէր Յիսուս ունենալը կարելոր է**

Զե՛ս կրնար իշխել մտահոգութիւններուդ վրայ եթէ Յիսուս ինք չէ որ կ'իշխէ սրտիդ մէջ: Զե՛ս կրնար տապալել Սատանայի թագաւորութիւնը եթէ անդամ չես եղած Քրիստոսի թագաւորութեան: Զե՛ս կրնար կապել Զարը եթէ չես կապուած Փրկիչին: Զե՛ս կրնար յաղթել մեղքին եթէ մեղքերդ չես յանձնած Յիսուսի:

Հոկտեմբեր 13  
Նայիր Յիսուսի

Եթէ դժուարին հարցեր ունիս, ուշադրութիւնդ անոնց վրայ մի՛ կեդրոնացնէր, այլ հարցերու լուծիչ՝ Տէր Յիսուսի վրայ: Կարիքներդ կրնան մեծ ըլլալ, բայց կարիքներդ գոհացնող անկարօտ Աստուածը անելի՛ մեծ է: Ուստի, մի՛ նայիր քեզ շրջապատող կարիքներուդ ու հարցերուդ, այլ նայիր քեզի հետ եղող Էմմանուէլին:

Հոկտեմբեր 14  
Գերադասել Աստուծոյ ծրագիրը

Աստուած ապագայիդ համար ծրագիր մը ունի, ուստի գգո՛յշ եղիր ըլլա՛յ դուն քեզի համար եւ ըլլա՛յ զակիդ համար անձնական ծրագիրներ մշակած ատենդ: Ճշմարիտ հաւատացեալ մարդը իր զակին ապագան ծրագրելէ առաջ, պէտք է իր զակին խօսի Աստուծո՛յ ծրագիրին մասին իր ապագային վերաբերեալ:

Հոկտեմբեր 15  
Դրամ շահելու մասին

Մարդիկ կան որ Տիրոջ փրկութիւնը կը կորսնցնեն՝ դրամ շահելու համար, մարդիկ ալ կան, որ կը ջանան դրամ շահիլ՝ Տիրոջ փրկութիւնը տարածելու համար: Դուն ո՞ր կարգի մարդոց կը պատկանիս:

### Հոկտեմբեր 16

#### Մտածել յաղթական ապագայի մը մասին

Մարդիկ կան որ այնքան կը մտածեն իրենց ապագային մասին որ իրենց ներկան չեն ապրիր, մարդիկ ալ կան, որ միայն իրենց ներկան կը տեսնեն եւ բնա՛ւ ապագային մասին չեն մտածեր: Երկուքն ալ սխալ են: Հաւատացեալ մարդը յաղթական ապագայի մը մասին պէտք է մտածէ, որպէսզի իր ներկան մեղքին դէմ պայքա՛ր մը ըլլայ:

### Հոկտեմբեր 17

#### Երբ հաւատացեալը մեռնի...

Մէկը ըսած է. *«Ծնած ատենդ՝ դուն լացիր, իսկ հարազատներդ ուրախացան, իսկ մեռած ատենդ՝ հարազատներդ պիտի լան, բայց դուն պիտի ուրախանաս»*: Այս խօսքը բոլոր մարդոց համար չէ հարկաւ, այլ միայն հաւատացեալներուն համար, որովհետեւ միայն իրե՛նք է որ մահէն ետք կ'ուրախանան, քանի Աստուծոյ ներկայութեան կը տարուին:

### Հոկտեմբեր 18

#### Նեղութիւններու մասին

Չարախօսները ոեւէ ձեռով չեն կրնար օգտակար դառնալ մեզի, բայց հաւատացեալներս կոչուած ենք չարիքէն բարիք փոխելու: Ի՞նչպէս: Երբ իբրեւ հաւատացեալ, կը բարեխօսենք Տիրոջ մօտ մեզ չարախօսներուն համար՝ կը դառնանք Տիրոջ բարի գաւակները եւ ժառանգորդները երկինքի բարութեան:

**Հոկտեմբեր 19**  
**Ի՞նչ է ապաշխարութիւնը**

Ապաշխարութիւնը՝ մեր մտքի դեկը Սուրբ Հոգիին յանձնել է: Ապաշխարութիւնը՝ Քրիստոսի թագաւորութեան անդամագրուիլ է: Ապաշխարութիւնը՝ մեր երկնաւոր Հօր կողմէ որդեգրուիլ է: Ապաշխարութիւնը՝ Սատանայի թագաւորութեան դէմ պատերազմիլ է: Ապաշխարութիւնը՝ չար ոգիներուն պարիսպները ուժակոծել է: Ապաշխարութիւնը՝ մեղքին վրայ յարձակիլ է: Ապաշխարութիւնը՝ երկինքը հարսնարանի վերածել է:

**Հոկտեմբեր 20**  
**Նեղութի՛ւն տուր Սատանային**

Եթէ Սատանան հանգիստ ձգած է քեզ՝ կը նշանակէ թէ դուն ալ իրեն հանգիստ ձգած ես: Եթէ նեղութիւն չի տար քեզի՝ կը նշանակէ թէ դուն ալ իրե՛ն նեղութիւն չես տար աղօթական կեանքովդ: Եթէ չի խանգարեր քեզ՝ կը նշանակէ թէ դուն ալ իրե՛ն չես խանգարեր բարի գործերովդ:

**Հոկտեմբեր 21**  
**Գոնէ մաքուր կեանք ապրինք**

Եթէ չես կրնար սուրբ կեանք ապրիլ, գոնէ մաքո՛ւր կեանք ապրիր: Եթէ չես կրնար կատարեալ ըլլալ, գոնէ համե՛ստ ու խոնա՛րհ եղիր: Եթէ չես կրնար մարդիկ երկինք առաջնորդել, գոնէ զանոնք դժո՛խք մի առաջնորդեր: Եթէ չես կրնար մարդոց օրհնութեան պատճառ դառնալ, գոնէ գայթակղութեան պատճառ մի դառնար:

**Հոկտեմբեր 22**  
**Փրկութիւն եւ Սրբութիւն**

Յիսուս խաչին վրայ չմեռաւ որպէսզի մեզի միայն փրկութիւն պարգեւէ, այլ նաեւ՝ սրբութիւն: Փրկութիւնը պարգեւ է, ուստի վնարելիք գին չունինք անոր համար, բայց սրբութիւնը պարգեւ չէ. գանիկա ձեռք ձգելու համար մեծ գին պէտք է վնարենք:

**Հոկտեմբեր 23**  
**Աստուած կ'ուզէ մեր մէջ գործել**

Շատ հաւատացեալներ կը փափաքին որ Աստուած գործէ իրենց միջոցաւ, եւ կը մոռնան, որ Աստուած աւելի հետաքրքրուած է գործելու մեր մէջ քան մեր միջոցաւ: Աստուած մեր մէջ չգործած՝ մեր միջոցաւ չի գործեր: Առանց Սուրբ Հոգիին ներգործութիւնը վայելելու՝ չենք կրնար Անոր գործակցութիւնը վայելել մարդիկը Յիսուսի բերելու համար:

**Հոկտեմբեր 24**  
**Սիրել մեղաւորը եւ ատել մեղքը**

Սիրէ՛ թշնամիդ բայց ատէ՛ թշնամութիւնը: Սիրէ՛ մեղաւորները բայց ատէ՛ մեղքը: Կակուղ եղի՛ր մեղաւորներուն հանդէպ, բայց ժայռի պէս ամուր եղի՛ր մեղքին հանդէպ: Երբ աղօթքի կանգնիս, յիշէ՛ Տիրոջ դիմաց քեզ բամբասողները եւ մոռցի՛ր անոնց բամբասանքները:

**Հոկտեմբեր 25**  
**Ուրիշին արժեքը գիտնալու գաղտնիքը**

Չես կրնար յարգանք ունենալ մարդոց հոգիին հանդեպ եթե Տէրը քեզի չէ յայտնած թէ որքան թանկագին է քու հոգիդ Իրեն համար: Չես կրնար ներել ուրիշը եթէ չես վայելած Յիսուսի շնորհած ներումի խաղաղութիւնը: Չես կրնար մարդոց հանդեպ անկեղծ եւ անչափ սէր ունենալ եթէ չես անդրադարձած Յիսուսի անչափ սիրոյն քեզի հանդեպ: Չես կրնար բարին ցանկալ ուրիշին եթէ Աստուծոյ բարութիւնը քեզ չէ ողորդած:

**Հոկտեմբեր 26**  
**Սիրելը աւելի լաւ է քան սիրուիլը**

Աստուծոյ համար աւելի կարեւոր է սիրելը քան սիրուիլը, ներելը քան ներուիլը, որովհետեւ սիրելը մեզ ստ'ւրբ մարդոց կը վերածէ, իսկ սիրուիլը՝ ուրա'խ մարդոց: Ներելը գԱստուա'ծ կ'ուրախացնէ, իսկ ներուիլը՝ մե'զ կ'ուրախացնէ:

**Հոկտեմբեր 27**  
**Փնտոէ մարդիկ որոնց կրնաս օգնել**

Այսօր մի' փնտոեք մարդիկ որոնք կրնան քեզի օգտակար դառնալ, այլ փնտոէ այնպիսի մարդիկ՝ որոնց դո'ւն կրնաս օգտակար դառնալ: Ուրիշէն օգտուիլ ուզելը՝ աշխարհի քամբան է, մինչդեռ ուրիշին օգտակար դառնալ ուզելը՝ Աստուծո'յ քամբան է: Դուն Աստուծոյ քամբան ընտրէ:



Հոկտեմբեր 28  
Հաւատփին նպատակը

Շատ մարդիկ Քրիստոսի հաւատքը իրենց սրտին մէջ ընդունելէ ետք, կը գայթակղին երբ փորձութիւններու հանդիպին. այդպիսի մարդիկ կը մոռնան որ հաւատփին նպատակը փորձութիւնը մեզմէ հեռու պահելը չէ, այլ փորձութեան յաղթելն է երբ անհկա ներկայանայ:

Հոկտեմբեր 29  
Կոչուած ըլլալու փաստերը

Աւելի լաւ է Չարին դէմ կռուիլ ու վիրաւորուիլ եւ Յիսուսի ձեռքով բուժուիլ քան քնաւ չվիրաւորուիլ եւ Յիսուսի ձեռքին հպումը չզգալ: Աւելի լաւ է իյնալ եւ զգալ Յիսուսի վերականգնող զօրութիւնը քան քնաւ չիյնալ եւ զրկուիլ Տիրոջ վերականգնող զօրութիւնը վայելելէ:

Հոկտեմբեր 30  
Ի՞նչ մտածել

Մի՛ մտածեր թէ ի՛նչպէս պիտի մեռնիս, այլ մտածէ թէ ի՛նչպէս պիտի ապրիս: Մի՛ մտածեր թէ մահէդ յետոյ մարդիկ ի՛նչ պիտի ըսեն քու մասին, այլ մտածէ թէ Աստուած ի՛նչ ինչ պիտի ըսէ քեզի: Մի՛ մտածեր թէ որքա՛ն պիտի ապրիս, այլ մտածէ եթէ երբեք յաւիտեա՛ն պիտի ապրիս:

Հոկտեմբեր 31  
Կ'ուզե՞ս տիրել

Կ'ուզե՞ս օր մը տիրել աշխարհի վրայ, կրնա՛ս, պայմանաւ որ թոյլ չտաս որ այսօր աշխարհ տիրէ քու վրայ: Կ'ուզե՞ս օր մը թագաւորել երկինքի մէջ ու երկրի վրայ, կրնա՛ս, պայմանաւ որ այսօր թոյլ չտաս որ երկրաւորը թագաւորէ սրտիդ մէջ: Տէրը իր երկրորդ գալուստին, երկինքն ու երկիրը արքայութեան պիտի վերածէ եւ գանձնք պիտի յանձնէ իր զաւակներուն:

Նոյեմբեր 1  
Սէր (Գղ 5.22)

Իրական սէրը՝ սիրելն է այն մարդիկը որոնք ոչինչ ըրած են արժանանալու մեր սիրոյն, ճիշդ ինչպէս Աստուած սիրեց մեզ թէպէտ մենք ոչինչ ըրած էինք արժանանալու Իր սիրոյն:

Նոյեմբեր 2  
Ուրախութիւն (Գղ 5.22)

Իսկական ֆրիստոնեան պէտք չունի շրջապատուելու լաւ պայմաններով եւ գինք սիրող մարդոցմով որպէսզի ուրախ ըլլայ: Սուրբ Հոգիով լեցուն մարդը՝ ուրախութեամբ լեցուն կ'ըլլայ նոյնիսկ եթէ անուրախ պայմաններով շրջապատուած է: Հաւատացեալին ուրախութիւնը իր սրտէն կը բղխի եւ ո՛չ թէ իր պայմաններէն:

**Նոյեմբեր 3**  
**Խաղաղութիւն (Գղ 5.22)**

Խաղաղութիւնը՝ պատերազմի բացակայութիւնը չէ, վէճի մը լուծումը չէ: Խաղաղութիւնը՝ կռիւի մը դադարումը չէ, բոլորին հետ համերաշխ ըլլալը չէ: Խաղաղութիւնը՝ բոլորին կողմէ սիրուիլը չէ: Խաղաղութիւնը՝ մեր մեղքերով Աստուծոյ դէմ պայքարելէ դադրիլն է: Խաղաղութիւնը՝ Քրիստոսի արիւնով սրբուիլ ու Աստուծոյ գրկին մէջ հանգչիլն է: Աստուծոյ հետ չհաշտուած մարդուն համար՝ չկա՛յ խաղաղութիւն:

**Նոյեմբեր 4**  
**Համբերատարութիւն (Գղ 5.22)**

Համբերատարութիւնը՝ տոկալն է ամէն տեսակի դժուարութեանց երբ ուրիշներ նահանջ կ'արձանագրեն: Համբերատարութիւնը՝ լոելն է ամէն գրպարտութեան դիմաց երբ ուրիշներ իրենց բերանները լայն կը բանան: Համբերատարութիւնը՝ երկա՛ր ժամանակ պատնէշի վրայ մնալն է երբ ուրիշներ կարն ժամանակէն կը տապալին:

**Նոյեմբեր 5**  
**Ազնուութիւն (Գղ 5.22)**

Ազնուութիւնը՝ ժխտականին դիմաց դրական վերաբերմունք ցուցաբերելն է: Ազնուութիւնը՝ կոշտութեան դիմաց Յիսուսի ժպիտը ըլլալն է: Ազնուութիւնը՝ անշնորհքին դիմաց շնորհալի ներկայութիւն դառնալն է: Ազնուութիւնը՝ դառնացածին դիմաց քաղցրութիւն արտացոլացնելն է:

Նոյեմբեր 6  
Բարութիւն (Գղ 5.22)

Ճշմարիտ բարութիւնը՝ բոլոր մարդոց համար բարին ցանկալն է: Բարութիւնը՝ մեզի չարիք ընողներուն բարիքին համար աղօթելն է: Բարութիւնը՝ մեզ ատողներուն հանդէպ գործնապէս մեր սէրը արտայայտելն է: Բարութիւնը՝ չարասէրներուն բարի օրինակ ըլլալն է:

Նոյեմբեր 7  
Հաւատարմութիւն (Գղ 5.22)

Հաւատարմութիւնը ետ դարձ չի ցանկնար: Հաւատարմութիւնը՝ կը յարատեւէ մինչեւ իրագործում: Հաւատարմութիւնը՝ Տիրոջ հաւատարիմ մնալն է նեղութեան օրերուն երբ ուրիշներ Ձայն կը լսեն: Հաւատարմութիւնը Աստուծոյ սէրն ու հայրական գուրգուրանքը կասկածի տակ չառնելն է դժուարին պահերուն: Հաւատարմութիւնը՝ պաշտպանելն է ճշմարտութիւնը երբ ուրիշներ կ'ուրանան զայն:

Նոյեմբեր 8  
Հեգութիւն (Գղ 5.23)

Հեգութիւնը՝ Աստուծոյ կամքը ընդունիլն ու կատարելն է առանց հարցադրումներու: Հեգութիւնը՝ հանդարտ մնալն է երբ ուրիշներ կը յոխորտան: Հեգութիւնը՝ բռնութեան դիմաց խաղաղարար ըլլալն է: Հեգութիւնը՝ ընդունիլն է ուրիշներուն կողմէ մերժուածը: Հեգութիւնը՝ մեր անձերը չգովելն է երբ ուրիշներ ինքնագովութեամբ տարուած են:

Նոյեմբեր 9  
Ժուժկալութիւն (Գղ 5.23)

Ժուժկալութիւնը՝ մեր անձնական երազներն ու փափաքները, կամքն ու ծրագիրները Աստուծոյ ոտքերուն առջեւ դնելն է: Ժուժկալութիւնը՝ ինքնասանձում է, այլ խօսքով՝ թոյլ չտալն է որ մեր բերանները խօսին ինչ որ կը փափաքին, մեր միտքը խորհի ինչ որ կ'ուզէ, մեր ոտքերը երթան ուր որ կ'ուզեն, մեր աչքերը նային ինչ բանի որ կը ցանկան:

Նոյեմբեր 10  
Արքայութեան մասին

Արքայութիւնը ունի դուռ, քամբայ, եւ բանալի: Արքայութեան դուռը Յիսուս ի'նքն է: Արքայութեան քամբան ցոյց տուողը՝ Աստուածաշունչն է: Իսկ արքայութեան դրան բանալին՝ Յիսուսի խաչն է:

Նոյեմբեր 11  
Ուրանալով բան չի փոխուիր

Մարդիկ կան որոնք Աստուծոյ գոյութիւնը կ'ուրանան, ուրիշներ դժոխքին գոյութիւնը կամ յաւիտենականութիւնը կ'ուրանան, ուրիշներ Քրիստոսի երկրորդ գալուստը կ'ուրանան, ուրիշներ դատաստանի մը գոյութիւնը կ'ուրանան: Այս բոլորին հաւատաք թէ ոչ, տարբերութիւն չ'ընեն, այս բոլորը կա'ն եւ ձեր աչքերովը պիտի տեսնէք:

**Նոյեմբեր 12**  
**Հաւատացեալին արժէքը Աստուծոյ համար**

Աստուծոյ համար արքայութիւն մտնող մէկ անձ մը աւելի՛ արժէք ունի քան անհաշիւ այն մարդիկը որոնք դժոխք պիտի նետուին: Աստուծոյ համար անկեղծ հաւատացեալի մը մատուցած կարն աղօթքը աւելի՛ լսելի է քան գեհե՛ն նետուելիք բոլոր կորսուածներուն աղաղակները: Ուստի, ո՛վ հաւատացեալ, գիտցի՛ր դուն քու արժէքդ:

**Նոյեմբեր 13**  
**Աստուած տարբեր է մարդոցմէն**

Երբ մարդիկ մեր ուզածը չընեն՝ ատիկա կրնայ նախանձի արդիւնք ըլլալ, բայց երբ Աստուած մեր ուզածը չընէ՝ ատիկա սիրոյ արդիւնք է: Երբ մարդիկ սպասել տան մեզի՝ ատիկա դաստիարակութեան պակաս կ'ենթադրէ, իսկ երբ Աստուած սպասել տայ մեզի՝ ատիկա մեզ դաստիարակելու համար է:

**Նոյեմբեր 14**  
**Աստուծոյ մասին**

Աստուած բնա՛ւ չի յոգնիր, բայց շատ կը փափաքի հանգիստ ընել մեր սիրտերուն մէջ: Աստուած բնաւ առանձին չէ, բայց կը ցանկայ մեր ընկերակցութիւնը վայելել: Աստուած փառք չի փնտոներ եւ ոչ ալ մարդոց կողմէ փառաբանուելու պէտք ունի, բայց Զինք փառաբանողներուն մեծապէս պիտի պատուէ: Աստուած գործակիցներու պէտք չունի, բայց Իրեն հետ գործակցողներուն պիտի վարձատրէ:

Նոյեմբեր 15  
Մի՛ փոխեր նշմարտութիւնը

Մարդիկ կան որ նշմարտութիւնը կը փոխեն, իրենց կարծիքներն ու համոզումները հաստատելու համար, մարդիկ ալ կան որ իրենց կարծիքներն ու համոզումները կը փոխեն՝ նշմարտութիւնը հաստատելու համար: Դուն ո՞ր խումբի մարդոց կը պատկանիս:

Նոյեմբեր 16  
Ժամանակ անցուր Տէր Յիսուսի հետ

Կեանքի մէջ ո՛չ մէկ անձ, ո՛չ մէկ դժուարութիւն եւ ոչինչ կրնայ քեզ ծունկի բերել՝ եթէ դուն ամէն օր ծունկի կու գաս Տէր Յիսուսի առջեւ եւ ժամանակ կ'անցնես հետը: Որքան երկար ժամանակ անցնես Յիսուսի հետ՝ այնքան երկա՛ր կ'ըլլայ համբերութիւնդ, ապահո՛վ կ'ըլլայ յաղթանակդ, տոկո՛ւն կ'ըլլայ նկարագիրդ:

Նոյեմբեր 17  
Աստուծոյ կատարեալ գորակցութիւնը

Աստուած քեզի գործ մը չի յանձներ առանց գայն կատարելու կարողութիւնը տալու քեզի: Աստուած քեզի տեղ մը չի դրկեր առանց ճամբան ցոյց տալու: Աստուած քեզմէ աշխատանք մը չի պահանջեր առանց աշխատակիցներ հանելու քեզի: Աստուած քեզ հովուութեան չի կանչեր առանց հովիւի սրինգ ու գաւազան յանձնելու քեզի:

Նոյեմբեր 18  
Գիտե՞ս թե ով ես Յիսուսի համար

Աշխարհի համար դուն մեկ անձ ես, իսկ Յիսուսի համար՝ լման աշխարհ մըն ես: Աշխարհի համար դուն մեկ ձայն ես, իսկ Յիսուսի համար՝ ամբողջ երգարան մը: Աշխարհի համար սուկ մարդ մըն ես, իսկ Յիսուսի համար՝ երկնային հրեշտակ մը: Աշխարհի համար մրցակից մըն ես, իսկ Յիսուսի համար՝ գործակից մը:

Նոյեմբեր 19  
Տուն մը առանց Աստուծոյ...

Տուն մը առանց Հայր Աստուծոյ՝ կը նմանի գերեզմանատունի: Տուն մը առանց Յիսուսի՝ կը նմանի մեռելատունի: Տուն մը առանց Սուրբ Հոգիի՝ կը նմանի սգատունի: Տուն մը առանց հաւատի՝ կո՛յր է: Տուն մը առանց յոյսի՝ մո՛լթ է: Տուն մը առանց սիրոյ՝ թո՛յն է:

Նոյեմբեր 20  
Քրիստոսի փառքը

Ո՞վ Քրիստոսի զինուորը եղաւ ու պարտութիւն կրեց: Ո՞վ Քրիստոսի նամբէն ֆալեց ու մոլորեցաւ: Ո՞վ Քրիստոսը նանչցաւ իբրեւ յոյս ու խարխափեց: Ո՞վ Քրիստոսի հետ ֆալեց ու յոգնեցաւ: Ո՞վ Քրիստոսը համտեսեց ու չզմայլեցաւ: Ո՞վ Քրիստոսի պատգամը լսեց ու իմաստուն չեղաւ: Ո՞վ Քրիստոսի սէրը նաշակեց ու Ջայն չբաշխեց:



## Նոյեմբեր 21 Աստուծոյ շնորհքը

Երբ փորձութիւնները մեծ են՝ մի՛ կարծեր որ Աստուծոյ շնորհքը չի կրնար քեզի օգնել: Եւ երբ հանգիստ ես՝ մի՛ կարծեր թէ Աստուծոյ շնորհքին պէտք չունիս: Աւելի լաւ է փորձութիւններու մէջ ըլլաս եւ Աստուծոյ շնորհքին ապաւինիս, քան փորձութիւններէ գերծ ըլլաս եւ Աստուծոյ շնորհքին կարիքը չգգաս:

## Նոյեմբեր 22 Մարդոց տարբերութիւնը

Երբ կ'աղօթես հարցի մը համար եւ Աստուած «Ո՛չ» կ'ըսէ, այդ չի նշանակեր թէ Աստուած չպատասխանեց աղօթքիդ: Այդ «Ոչ»ը անգամ պատասխան մըն է, եւ ամենէն շատ տրուած պատասխանն է, որովհետեւ մենք շատ խնդրանքներ կը մատուցենք, բայց չենք գիտեր եթէ երբեք անոնք Աստուծոյ կամքին համաձայն են թէ ոչ: Աղօթքը պատասխանուած չի համարուիր երբ մե՛ր կամքը կ'ըլլայ, այլ երբ Աստուծո՛յ կամքը կ'ըլլայ:

## Նոյեմբեր 23 Իսկական խուլը, կոյրը եւ համրը

Իսկական խուլ մարդը ականջով խուլ եղողը չէ, այլ՝ կարիքի մէջ եղող մարդուն ձայնը չլսողն է: Իսկական կոյր մարդը աչքով կոյր եղողը չէ, այլ՝ իր նմանին մէջ Աստուծոյ ներկայութիւնը չտեսնողն է: Իսկական համր մարդը լեզուով համր եղողը չէ, այլ՝ Տէր Յիսուսի համար չվկայող եւ Յիսուսի մասին չխօսողն է:

Նոյեմբեր 24  
Ինչ որ կրնաս ընել՝ ա՛յդ ըրէ

Ձեռ կրնար հեռանալ չար մարդոցմէն, բայց կրնաս մերժել անոնց ընկերակցութիւնը: Ձեռ կրնար արգիլել մեղքին յարձակումները, բայց կրնաս սրտիդ դուռը ամուր փակել մեղքի սիրոյն դիմաց: Ձեռ կրնար բաժնուիլ անօրէններէն, բայց կրնաս հեռու մնալ անօրէնութենէն: Ձեռ կրնար փախչիլ նեղացնողներէն բայց ինչ կը մնայ որոշել՝ չնեղուիլ ու ուրիշը չնեղացնել:

Նոյեմբեր 25  
Յիսուսի համար հալածուելուն շահը

Յիսուսի համար կորսնցնողը՝ չի՛ կրնար Յիսուսը կորսնցնել: Յիսուսի համար անտեսուողը՝ չի՛ կրնար Յիսուսը չտեսնել: Յիսուսի համար մերժուողը՝ չի՛ կրնար Յիսուսի կողմէ չընդունուիլ: Յիսուսի համար անհիծուողը՝ չի՛ կրնար Յիսուսի կողմէ չօրհնուիլ:

Նոյեմբեր 26  
Երեւ տարբեր կեանքեր

Մեղքի կեանք ապրող մարդուն կեանքը կը նմանի ձորագնացութեան որ վայրէջքի կեանք մըն է: Հասարակ մարդուն կեանքը կը նմանի դաշտագնացութեան որ գաղջ կեանք մըն է: Իսկ հաւատացեալ մարդուն կեանքը կը նմանի լեռնագնացութեան, ուր մագլցելու, հասնելու եւ յաղթելու կա՛մք ու կրա՛կ կայ:

### Նոյեմբեր 27

#### Սատանան չի կրնար ստիպել քեզի...

Սատանան կրնայ առաջարկել քեզի սխալ գործ ընելու բայց չի կրնար ստիպել որ սխալ գործ ընես: Կրնայ դրդել քեզ մեղք գործելու բայց չի կրնար պարտադրել որ մեղք գործես: Կրնայ չար գաղափար մը տալ քեզի բայց չի կրնար համոզել քեզ ատոր եթէ դուն չուզես համոզուիլ: Կրնայ վատը հրամայել բայց չի կրնար ստիպել որ հրամայուածը առնես:

### Նոյեմբեր 28

#### Դուն եղիր տէրը դրամին

Եթէ դրամը ձեռքիդ մէջն է՝ սխալ չէ, բայց եթէ դո՛ւն դրամին ձեռքին մէջն ես՝ սխալ է: Եթէ կրնաս դրամէդ բաժին հանել ուրիշին՝ կը նշանակէ թէ դո՛ւն ես տէրը դրամիդ, իսկ եթէ չես կրնար դրամէդ բաժին հանել ուրիշին՝ կը նշանակէ թէ դրամդ քու տէրդ է: Դրամը քեզի ծառայելու կոչուած է. մի՛ դառնար ծառան քու ծառայիդ:

### Նոյեմբեր 29

#### Հակակշռի տակ առնել մեր զգացումները

Եթէ չսորվինք հակակշռի տակ առնել մեր զգացումները՝ պիտի չկրնանք ձեռք ձգել այն յաջողութիւնները զորս Աստուած կ'ուզէ որ ձեռք ձգենք: Յաճախ մեր զգացումներն ու մեր զգացական ըլլալն է որ կ'արգիլեն Աստուծոյ կամքին ու ծրագիրին իրագործումը մեր կեանքին մէջ:

**Նոյեմբեր 30**  
**Փրկութիւնը գործերուդ արդիւնքը չէ**

Հեղինակ մը ըսած է. «*Գործդ թող չըլլայ կուտքդ, ո՛չ ալ դուն եղիր կուտքը գործիդ*»: Եթէ գործը դարձնես կուտքդ, կը նշանակէ որ փրկութեանդ համար գործերուդ է որ կը վստահիս եւ ո՛չ թէ Աստուծոյ շնորհին: Իսկ եթէ դուն դառնաս կուտքը գործիդ, կը նշանակէ թէ անձիդ փառաբանութիւնն է որ կը փնտոես եւ ո՛չ թէ Աստուծոյ փառաբանութիւնը:

**Դեկտեմբեր 1**  
**Մեր վերաբերմունքով ուրիշը հաւատքի բերեմք**

Եթէ կ'ուզես եղբայրդ գօրանայ իր հաւատքին մէջ, հետը վարուիր ինչպէս հաւատքի ախոյեանի մը հետ պիտի վարուէիր. այս ընելով, հաւատքի կեանք ապրելու կրա՛կ դրած պիտի ըլլաս անոր մէջ: Նմանդ դատելով ու քննադատելով՝ երբեք չես կրնար զինք շիտակ ճամբու բերել:

**Դեկտեմբեր 2**  
**Ի՞նչն է ապացոյցը որ լեցուն ենք Սուրբ Հոգիով**

Ապացոյցը որ լեցուն ենք Սուրբ Հոգիով՝ Սուրբ Հոգիին ինը պտուղները ունենալն է (Գղ 5.22-23) եւ ոչ թէ Սուրբ Հոգիին ինը պարգեւները ունենալը (Ա.Կր 12.8-10): Սուրբ Հոգիով լեցուած ըլլալու նշանները ներքին են եւ ոչ թէ արտաքին: Սուրբ Հոգիի լեցունութիւնը կրնայ չօգնել մեզի որ Յիսուսի անունով անդամալոյծ մը ոտքի հանենք, բայց անպայման կ'օգնէ ու կարող կը դարձնէ մեզ Յիսուսի անունով սիրելու մեզ ատող մարդիկը:

**Դեկտեմբեր 3**  
**Դժուար է հաւատալ անհաւատ մարդոց**

Դժուար է վստահիլ այն մարդոց որոնք չեն վստահիլ Աստուծոյ: Դժուար է գործակցիլ այն մարդոց հետ որոնք չեն վայելիլ գործակցութիւնը Աստուծոյ: Դժուար է հաւատալ այն մարդոց որոնք չեն հաւատար Աստուծոյ: Դժուար է մեր սիրտը բանալ այն մարդոց դիմաց որոնք իրենց սիրտը չեն բացած Աստուծոյ դիմաց:

**Դեկտեմբեր 4**  
**Սէրը ամենէն զօրաւորն է**

Ներումը՝ դո՛ւնն է գործակցութեան: Անկեղծութիւնը՝ դո՛ւնն է գեղեցիկ հաղորդակցութեան: Համբերութիւնը՝ դո՛ւնն է յաջողութեան: Յարատեւութիւնը՝ դո՛ւնն է իրագործումի: Ժրջանութիւնը՝ դո՛ւնն է յաղթանակի: Հաւատարմութիւնը՝ դո՛ւնն է ամուր բարեկամութեան: Իսկ սէրը՝ դո՛ւնն է Յիսուսի սրտին, ուրկէ կրնան ներս մտնել միայն անոնք՝ որոնք առատ սէր ունին Աստուծոյ եւ մարդոց հանդէպ:

**Դեկտեմբեր 5**  
**Քո՞ւ, կամ՝ Աստուծոյ ծրագիրը**

Մարդիկ ծրագիրներ կը մշակեն եւ յետոյ կը պահանջեն Տիրոջ օգնութիւնը իրենց ծրագիրներու իրականացման համար, մինչդեռ հակառակը պէտք է ըլլայ: Աստուած ի՛նք պէտք է ծրագրէ եւ պահանջէ մարդոցմէն աշխատիլ իր ծրագիրներու իրականացման համար:

## Դեկտեմբեր 6 Նաւ, Տապան եւ Ծիածան

Ո՛վ հաւատացեալ, երբ կեանքը փոթորկի՝ նայիր փրկութեան այն նաւուն որուն մէջ օր մը Աստուծոյ Որդին հանգչեցաւ: Երբ փորձութեանց ալիքները բարձրանան՝ նայիր փրկութեան այն տապանին որ Տիրոջ հրամանով կառուցուեցաւ: Երբ կեանքի սեւ ամպերը կուտակուին՝ նայիր փրկութեան այն ծիածանին որ Աստուած հաստատեց:

## Դեկտեմբեր 7 Միայն Աստուծով հպարտանալ

Մարդիկ կան որոնք կը վստահին իրենց կատարած չար գործերուն ու կը հպարտանան անոնցմով: Մարդիկ ալ կան որոնք կը վստահին իրենց կատարած բարի գործերուն ու կը հպարտանան անոնցմով: Երկուքն ալ հաւասարապէս դատապարտելի են Աստուծոյ աչքին: Միայն Աստուծով պէտք է հպարտանալ:

## Դեկտեմբեր 8 Ապրիլ նշմարտութիւնը

*«Ճշմարտութիւնը պիտի ֆանջնաք եւ նշմարտութիւնը ձեզ պիտի ազատէ» (Յե 8.32):* Ճշմարտութիւնը ֆանջնալ, չի նշանակեր պարզապէս գիտնալ նշմարտութիւնը: Ճշմարտութիւնը ֆանջնալ, կը նշանակէ՝ նշմարտութիւնը սիրել ու ապրիլ: Արդարեւ, նշմարտութիւնը գիտնալը չէ որ մեզ կը փրկէ, այլ՝ նշմարտութիւնը սիրելը եւ ապրիլը: Իսկ ո՞վ է նշմարտութիւնը եթէ ոչ Քրիստոս (Յե 14.6):

**Դեկտեմբեր 9**  
**Ինչո՞ւ պետք է ապաշխարել**

Մենք պետք չէ ապաշխարենք լոկ դժոխքի կրակներէն ազատելու կամ դատաստանի պատիժէն զերծ մնալու համար, նոյնիսկ պետք չէ ապաշխարենք երկինք մտնելու նպատակով, այլ պետք է ապաշխարենք, որովհետեւ մեր մեղքերով վիրաւորած ու ցաւցուցած ենք մեզ անչափօրէն սիրող Տէր Յիսուսի սիրտը:

**Դեկտեմբեր 10**  
**Աստուածաշունչը**

Աստուածաշունչը կ'արտացոլացնէ Արարիչին եւ արարածին կապը՝ իր դրախտային եւ երկրաւոր կրկնակ երեսներով: Կապ մը, որ երկինքով կը սկսի, դրախտային պայմաններուն մէջ սկիզբ կ'առնէ, եւ հակառակ մարդուն անհնազանդութեան եւ անկումին՝ կը շարունակուի անընդմիջաբար, աւարտելու համար դարձեալ երկինքով, ուր կը հրաւիրուի մարդը Աստուծոյ կողմէ, որպէսզի աստուածահաստատ նպատակը իր լրումին ու կատարումին հասնի (Զարեհ Ա.բ. Ազնաւորեան):

**Դեկտեմբեր 11**  
**Եղիբ արեւի, լոյսի, նաւու եւ ծառի նման**

Եղիբ արեւի նման որուն միջոցաւ խաւարը կը փարատի: Եղիբ լոյսի նման որուն միջոցաւ քամբան ցոյց կը տրուի: Եղիբ ազատարար նաւի նման որուն միջոցաւ կեանքեր կը փրկուին: Եղիբ մեծատերեւ ծառի նման որուն ներքեւ մարդիկ հանգիստ կը գտնեն:

Դեկտեմբեր 12  
Յիսուսը մեր սրտին մէջ ընդունիլը...

Յիսուսը մեր սրտին մէջ ընդունիլը՝ մեզ դժուարութիւններէ գերծ չի պահեր, այլ պարզապէս մեզ յաղթող կը դարձնէ անոնց դէմ: Այո՛, Յիսուսը ընդունիլը՝ չի կասեցնէր հալածանքի ու տառապանքի ալիքները, այլ պարզապէս մեզի կը շնորհէ այնպիսի՝ գորութիւն մը եւ նկարագիր մը՝ որոնցմով անասան կը մնանք այդ բոլորին դիմաց:

Դեկտեմբեր 13  
Ինչո՞ւ մեռաւ Յիսուս

Յիսուս չմեռաւ որպէսզի լոկ ներէ ու փրկէ մեզ, այլ՝ որպէսզի մեզ Աստուծոյ գաւակ դարձնէ եւ սիրալիր յարաբերութիւն հաստատէ մեր եւ Աստուծոյ միջեւ: Չմեռաւ որպէսզի մեզ դժոխքէն ազատէ միայն, այլ՝ որպէսզի երկինքը տայ մեզի: Չմեռաւ որպէսզի մեզ մեղքէն ազատէ միայն, այլ՝ որպէսզի մեզի իր անմեղութիւնը եւ սրբութիւնը տայ: Չմեռաւ լոկ որպէսզի մեզ Չարին ձեռքէն դուրս բերէ, այլ՝ որպէսզի մեզ իր ձեռքին մէջ առնէ:

Դեկտեմբեր 14  
Հաւատացող մարդը

Հաւատացող մարդը այն մարդը չէ որ կը հաւատայ թէ Աստուած ամէն բան կրնայ ընել, այլ այն մարդը՝ որ կը հաւատայ թէ Աստուած պիտի տայ իրեն ինչ որ անհրաժեշտ է իրեն համար (Սուրբ Յովհաննէս Կղեմացի):



**Դեկտեմբեր 15**  
**Իսկական դժոխքը**

Դժոխք նետուող մարդիկ պիտի անդրադառնան թե Յիսուս որքան սիրած էր զիրենք, թե ինչ մեծ յիմարութիւն էր Յիսուսի սիրտը վիրաւորել իրենց մեղքերով, եւ այդ գիտակցութիւնն է որ զիրենք պիտի տանջէ մնայուն կերպով: Յիսուսի սիրոյն ու սրտին դէմ մեղանշած ըլլալու գիտակցութիւնը կրակէն աւելի՛ պիտի տանջէ դժոխք նետուողները:

**Դեկտեմբեր 16**  
**Ատել մեղքը**

Մեղք գործողները չեն որ դժոխք պիտի նետուին, այլ՝ մեղքը սիրողները: Մեղքին հանդէպ սէրը մեզ Աստուծոյ թշնամի կը դարձնէ, որովհետեւ մեղքը Աստուծոյ թշնամին է, եւ ով որ Աստուծոյ թշնամին կը սիրէ՝ Աստուծոյ թշնամի կ'ըլլայ: Աստուծոյ թշնամիին՝ մեղքին թշնամի եղողը՝ Աստուծոյ բարեկամ կ'ըլլայ:

**Դեկտեմբեր 17**  
**Յիսուս՝ մեր տառապակիցը**

Յիսուս մեզ սրբելու եւ մեզ Իր ուզած մարդը դարձնելու համար կ'արտօնէ որ տառապինք, բայց գիտե՞ք որ Յիսուս ինքն ալ կը տառապի երբ մեզ տառապանքի մէջ կը տեսնէ: Ուստի, ո՛վ մարդիկ, երբեք մի՛ խորհի՛ք որ Յիսուս անտարբեր է մեր ցաւին հանդէպ: Երբ ցաւի մէջ ենք՝ Ի՛նքն ալ կը ցաւի մեր հետ եւ մեզի համար:

## Դեկտեմբեր 18

### Սէրը

Սէրն է այն գինին որ կ'ուրախացնէ մարդուն սիրտը...: Անբարոներ ըմպեցին զայն եւ առաքինի դարձան...: Գինեմոլներ ըմպեցին զայն եւ պահեցող դարձան: Հարուստներ ըմպեցին զայն եւ աղփատութեան կեանքը փափաքեցան: Աղփատներ ըմպեցին զայն եւ հարստացան յոյսով...: (Սուրբ Իսահակ Աստրի):

## Դեկտեմբեր 19

### Չենք կրնար բարիք ընել Աստուծոյ

Աստուած օգնութեան կարիքը չունի, բայց կը պահանջէ մեր օգնութիւնը որպէսզի վարձատրէ մեզ: Ուստի, երբ կը ծառայեմք ուրիշին, բնա՛ւ չխորհիմք թէ բարի՛ք է որ կ'ընենք Աստուծոյ: Ատիկա բարիք մըն է, այո՛, բայց բարիք մըն է ո՛չ թէ Աստուծոյ, այլ՝ նոյնիման մեր անձերուն, որովհետեւ ատիկա մեր դիմաց երկնային փառքի, վարձքի ու պատիւի ցամբան կը բանայ:

## Դեկտեմբեր 20

### Ինչո՞ւ...

Ինչո՞ւ որք մնաս երբ երկնաւոր Հայրը քեզ որդեգրել կ'ուզէ: Ինչո՞ւ հոգեւորապէս անօթի մնաս երբ կեանքի Հացը՝ Յիսուս կ'ուզէ եփիլ սրտիդ փուռին մէջ: Ինչո՞ւ ծարաւ մնաս երբ Սուրբ Հոգին կ'ուզէ կենսատու Ջուրի գետերուն նման բղիթի սրտէդ (Յե 7.38): Ինչո՞ւ անտուն մնաս երբ Նոր Երկինք ու Նոր Երկիր մը խոստացուած է քեզի:

### Դեկտեմբեր 21

#### Կասկած մի՛ ունենար Յիսուսի հանդէպ

Երբ խոովութեան մէջ ես՝ կասկած մի՛ ունենար խաղաղութեան Իշխանին նկատմամբ: Երբ մութ պահերու մէջ ես՝ վստահութիւնդ մի՛ կորսնցնէր աշխարհի Լոյսին հանդէպ: Երբ փորձութիւններու կ'ենթարկուիս՝ կասկածով մի՛ մօտենար Պաշտպանիդ: Ինչ որ սորվեցար հանգիստ եղած ատենդ՝ կասկածի տակ մի՛ առնէր ցաւի մէջ եղած ատենդ:

### Դեկտեմբեր 22

#### Ո՛վ Տէր, տո՛ւր ինձի

Ո՛վ Տէր, տո՛ւր ինձի աչքեր որոնք կը փափաքին Քեզ տեսնել եւ Քեզ կը տեսնեն անտեսուածին մէջ: Տո՛ւր ինձի սիրտ մը որ կապուած ըլլայ Քեզի ու բաց ըլլայ վիրաւորին առջեւ: Տո՛ւր ինձի ձեռքեր որոնք բռնած ըլլան ձեռքդ եւ օգնեն անօգնականին: Տո՛ւր ինձի միտք մը որ կը խորհի Քու մասին ու տառապողին մասին: Տո՛ւր ինձի ականջներ որոնք կրնան լսել Սուրբ Հոգիիդ հոժիւնը եւ որբին ձայնը: Տո՛ւր ինձի արցունք որ կրնայ մեղմել ցաւը վերքերուդ եւ այրել փուշը մեղքերուս ու այլոց մեղքերուն:

### Դեկտեմբեր 23

#### Սուրբ Հաղորդութիւնը

Սուրբ Հաղորդութիւնը (Տիրոջ մարմինն ու արիւնը) Աստուծոյ համբոյրն է մարդուն, Աստուծոյ հպումն է մարդուն, Աստուծոյ ձեռքին հանգչումն է մեր վրայ, Աստուծոյ թագաւորութեան մարմնացումն է մեր մէջ, Քրիստոսի թելերուն տարածուիլն մեր վրայ, Տիրոջ իշխանութեան հրապարակումն է մեր կեանքին մէջ:

**Դեկտեմբեր 24**  
**Մեղփին յաղթելով՝ կը մեծնանք**

Չես կրնար արգիլել Չարին յարձակումը, բայց կրնաս մերժել պարտուիլ անոնց կողմէ: Յիշէ որ մեղփին յաղթելով է որ կ'անիս ու կը մեծնաս, ուստի, մի՛ պահանջեր Աստուծմէ որ հեռացնէ քեզմէ մեղփին յարձակումները, այլ խնդրէ որ քեզ յաղթող դարձնէ անոնց դէմ, եւ բնաւ մի՛ մոռնար որ երկինքը յաղթողներուն տեղն է (Յյտ 2.11, 17, 3.5, 12):

**Դեկտեմբեր 25**  
**Փրկութիւն եւ վարձատրութիւն**

Փրկութիւնը խաչին արդիւնքն է, իսկ վարձատրութիւնը՝ մեր խաչը շակելուն արդիւնքը: Փրկութիւնը Յիսուսի փրկարար շնորհքին հանդէպ մեր հաւատքին արդիւնքն է, իսկ վարձատրութիւնը՝ պտուղն է մեր հաւատքին արտայայտութիւնը եղող մեր բարի գործերուն: Տէրը փրկութեան թագը ձրիօրէն կու տայ, բայց այդ թագին զարդարումը գոհարներով՝ մեր բարի գործերով կ'ըլլայ:

**Դեկտեմբեր 26**  
**Թշնամի ունենալու օգուտը**

Մեզ ատողները Յիսուսի սէրը չունին իրենց մէջ, բայց անոնք մեզ կ'առաջնորդեն Յիսուսի սիրոյն եթէ երբեք համբերութեամբ տանինք անոնց ատելութիւնը մեզի հանդէպ: Մեր թշնամիները մեր բարեկամները չեն, բայց անոնք մեզ բարեկամ կը դարձնեն Յիսուսի եթէ երբեք բարեկամի վերաբերմունք ցուցաբերենք անոնց հանդէպ:

### Դեկտեմբեր 27

Ո՛չ թե մահեն ետք, այլ մահեն առաջ...

Յիսուսի ուրախութիւնը երկինք մտնելէ ետք չէ որ պիտի ունենանք, այլ զայն պէտք է ունենանք դէպի երկինք մեր ցանապարհորդութեան ընթացքին: Յիսուսի խաղաղութիւնը բան մը չէ որուն պիտի հասնինք մահէն ետք, այլ բան մը՝ զորս պէտք է ձեռք ձգենք մահէն առաջ:

### Դեկտեմբեր 28

Իսկական դրախտը եւ իսկական դժոխքը

Դրախտը դրախտ ընողը հրեշտակները չեն, ո՛չ ալ անոնց երգերն ու փառաբանութիւններն են, այլ՝ Յիսուսի ներկայութիւնը այդտեղ: Դժոխքն ալ դժոխք ընողը կրակը չէ, ո՛չ ալ որդն ու չար ոգիները, այլ՝ Յիսուսի բացակայութիւնը այդտեղ: Դուն հիմակուրնէ կրնաս գիտնալ թէ հետագային ո՛ւր պիտի երթաս, դուն քեզ քննելով ու տեսնելով որ եթէ երբեք Յիսուսը ունիս թէ ոչ:

### Դեկտեմբեր 29

Երբ չենք ներեր իրար...

Առանց փոխադարձ ներումի՝ կեանքը գեհեմի կրակէն աւելի անտանելի կ'ըլլայ. այդ կրակին մէջ մէկը միւսը կը փորձէ այրել: Առանց ներումի՝ կեանքը մշտապէս դառն գետի կը վերածուի. այդ գետին մէջ մէկը միւսը կը փորձէ խեղդել: Առանց ներումի՝ կեանքը կը նմանի հրաբուխի, որ միայն դառնութիւն ու ատելութիւն կը բղխեցնէ եւ խմորներն ալ զայն բղխեցնողներն են:

Դեկտեմբեր 30  
Տէր Յիսուսի երկրորդ գալուստը

Աւելի մեծ շնորհիք կը պահանջէ արտասուել ուրիշներու մեղքերուն համար քան մեր մեղքերուն համար: Կրնանք արցունք թափել մեր մեղքերուն համար դժոխքէն կը վախնանք ըսելով, բայց արցունք թափել ուրիշներու մեղքերուն քաւութեան համար՝ Աստուծոյ հանդէպ սիրոյ արտայայտութիւն է (Thomas Watson):

Դեկտեմբեր 31  
Սիրոյ գորութիւնը

Վերջին այս խօսքիս մէջ, սիրելի՛ ընթերցող եղբայրս եւ քոյրս, ես տկարս՝ Հայր Վաղինակ, որ Քրիստոսով եղբայրդ եմ, քեզմէ կը խնդրեմ որ 5 երկվայրկեան աղօթեալս եւ Տիրոջ գորութիւնը հայցես ինծի համար, եւ ես, իմ կարգիս, կ'աղօթեմ որ Տէրը առատապէս օրհնէ քեզ, որպէսզի ուր որ երթաս՝ օրհնութիւն դառնաս, եւ քու կեանքովդ՝ կեանքեր վաստկիս Տէր Յիսուս Քրիստոսի փառքին ու արքայութեան համար: Ամէն:

## Հեղինակին ամբողջական գործերը

- 1.– Ճշմարիտ վերածնունդը
- 2.– Բա՛ց սրտիդ դուռը, Յիսուս կը սպասէ
- 3.– Ես եմ Ճամբան, Ճշմարտութիւնը եւ Կեանքը
- 4.– Մանուկներուն Արքայութիւնը
- 5.– Ամենօրեայ աճում Աստուծոյ Հոգիով եւ Խօսքով
- 6.– Աստուածաշունչին պատասխանները  
ժողովուրդին հարցումներուն
- 7.– Աստուածաշունչին պատգամը այսօրուան մարդուն
- 8.– Գիտնանք պատասխանները որոշ հարցումներու
- 9.– Ամենօրեայ հոգեւոր ուսուցում
- 10.– Մեր հոգը Աստուծոյ ձգել
- 11.– Հաւատացեալները վարդերն են արքայութեան
- 12.– Մեր Տիրոջ եւ Փրկիչին՝ Յիսուս Քրիստոսի  
առակներուն բացատրութիւնը (Ա. հատոր)
- 13.– 62 հարցումներ եւ անոնց պատասխանները
- 14.– Ճանչնանք Աստուածաշունչը հարցումներու  
միջոցաւ (գարգացման մրցումի համար)
- 15.– Սուրբ Կոյս Մարիամ եւ Հայ Մայրը
- 16.– Մեր Տիրոջ եւ Փրկիչին՝ Յիսուս Քրիստոսի  
առակներուն բացատրութիւնը (Բ. հատոր)
- 17.– Յիսուսի սէրը կը բուժէ վիրաւոր ամէն սիրտ

